491.99-5
Դ-84

J-4. n63

[illegible]

[illegible]

[illegible]

12004

# ՆԱԽԱԴՈՒՌՆ

# Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ե Ա Ն

253
5.
11990

Պետ. Հանրային Գրադարան
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ-ССРА
им. А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան

5089
38

491.99-5 N 263 1286-ԱՀ
Դ-84

# ՆԱԽԱԴՈՒՌՆ

# ՎԱՐԺՈՒԹԵԱՆ

Բովանդակիչ համառօտ այբբենարանի, հեգ սաղմոսի, խոստովանութեան հաւատոյ, և ինչ ինչ գիտելեաց քերականութեան։

Աշխատասիրեալ յուսուցչէ Լազարեան Հայոց ուսումնարանի 'ի Կարապետէ Պոպովայ 'ի պէտս համազգի մանկանց այնր վարժարանի։

Ծախիւք հանգուցեալ բարեպաշտ Պետրոս Վարդապետի Տէր Յակոբեանց և Ասպետի՝ ըստ համահաճութեան կտակակատար հոգաբարձուաց նորա՝ պարոն Գաբրիէլի Սախարովայ և պարոն Մինասի Պոպովայ։



Фундаментальная библиотека Лазаревского института восточных языков

'Ի ՄՈՍԿՈՎ,

'Ի տպագրատան Հայկական ճեմարանի Լազարեան Իշխանապետաց։

1838.

ПЕЧАТАНО
съ одобренія ИМПЕРАТОРСКОЙ Академіи Наукъ.

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ԱՌ ԲԱՐԵՄԻՏ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Բազումք բազմատեսակս յօրինեցին ցայսօր ժամանակի Քերականութիւնս, ոմանք՝ ընդարձակս, այլք՝ զմիջասահմանս և կէսք՝ զհամառօտս. մին՝ գրաբառ, միւսն՝ աշխարհաբառ, և այլ ոմն՝ երկոքումբքն միանգամայն վարելով լեզուօք յիւրումն երկասիրութեան. մինչև չմնալ գրեթէ տեսակի իրիք նոցուն առանց արտադրութեան և տպագրութեան։

Ըստ այսոցիկ ամենասփիւռ յաճախութեանց նոցին՝ ամենևին տարադէպ էր խմումս նուաստութեան ձգտիլ 'ի վեր քան զչափաւորութիւն անձին՝ 'ի նմանօրինակ գործոյն կազմութիւն ձեռն արկանելով, թէ ոչ մինչ իսպառ զօրանայր յիս հարկն պաշտաման, այն է՝ հրաման Մեծաւորի իմոյ Նորուն Գերազնութեան Պարոն Կարգավարի ճեմարանիս Աժդարհանայ և Ասպետի՝ Ոփրուշկին մականունելոյ, ընդ որոյ իշխանութեամբ են համօրէն վարժարանք կողմանցս, որպէս և Հայոց Ուսումնարանն Աղաբաբեանց. ուր յերկրորդումն դասատան յանձն է և ինձ նուաստիս պաշտօն դասատուութեան Հայկական բարբառոյ։

Յուշ արարեալ Պարոն Կարգավար Ասպետս՝ ըստ որում վերատեսուչ պետ, դիտեալ 'ի չքաւորութիւն

Հայազգի մանկանց՝ յուսումնարանի անդ առ մեզ աշակերտելոց, եթէ դժուարանան նոքա ծախիւք դրամոց ուրոյն ուրոյն 'ի ձեռս բերել զմասնաւոր գրեանս՝ ինքեանց անշուշտ պիտանիս, մանաւանդ՝ որ յաւէտ ծանրագին է՝ զՔերականութիւն, պատուէր հրամանի արար ինձ՝ յօրինել զնոր այբբենարանս 'ի շնորհս համբակաց ուսումնարանիս և յարեալ 'ի վերջէ և զհամառօտութիւն Քերականութեան լեզուիս. որպէս զի իւրաքանչիւր 'ի չքաւոր տղայոց անտի միովն և զմիւսն առ ձեռն պատրաստ ունիլ մարթասցի։

Ապաքէն որպէս 'ի հրամանահանութեան Նորուն Գերազնուութեան անուանեալ Ասպետիս, նոյնպէս և 'ի վերահաս կարեաց այնց աշակերտաց ուսումնարանիս պարտաւորեալ՝ հարկ ամենաքաղցր յանձին կալայ աշխատասիրել զայս գրքոյկ, յորոց 'ի պատճառս եթէ անկայց ես ընդ պարսաւադէտ դատաստանօք կրիտիկասէր եղբարց ոմանց, ինչ ոչ դժուարանամ. իբր զի գիտումն իմ, զոր կալայ 'ի կազմութեան գործոյս, չէր՝ և ոչ իսկ է, ժառանգել երբէք զանուն կամ զպատիւ Հեղինակի. այլ՝ անկարող մանկանց Ազգիս նպաստամատոյց լինել փոքու իւիք՝ որքան ինչ յիս։

Զբովանդակ կազմութէ գործոյս՝ որ ապաքէն ոչ մեծ ինչ է, չեն պէտք զեկուցանել. սակայն զհամառօտ Քերականութե̃՝ յաւարտ գրոցս յարելոյ, օրէն լիցի ծանուցանել 'ի կարճոյ՝ եթէ զյաւէտ հարկաւորագոյն գիտելիսն զձւն գործեցի առաջի առնել մանկանց՝ թէ յա̃երորդումն, և թէ յե̃գում մասին նորին, զբազմավաստակ Միքայէլ վարդապետին Չամչենի զՔերականութի̃՝ իբր զ'ի վաղընջուց ընտելագոյնն մեզ և զկանխաւ սովորականն բազմաց, ակն յանդիման օրինակ ինձ յա̃մի ունելով։

Նւ ահա՝ այսպէս և այսչափ ծաղկաքաղ հաւաքեալ իմ զշահաւորսն և' չափու և' հասակի համբակաց մերս ուսումնարանի՝ փակեցի յայս մի գրքոյկ, զոր սիրողաբար նուիրեալ ուսումնասէր մանկանց սիրելի Ազգիս՝ աղաչեմ զամենեսին անստգիւտ հանդիպիլ երկասիրութե̃ս այսմիկ՝ իբրու խակակութ պտղոյ գարնանայնոյ, յորմէ թէ արդարև դէպ լիցի ումեք առնուլ երբէք ճաշակ ինչ բարեհամ անուշութե̃, զընդ այն շնորհապարտութի̃ն մատուցանել յիշեալ պարոն Կարգավարին՝ իբրև բարեյորդոր թելադրի և հարկադրի ինձ 'ի գործումս. նոյն և յաւերժայիշատակ

բարեպաշտ հոգելոյս Պետրոս Վարդապետի Տէր Յակով-
բեանց և Ասպետի, որ կտակաւանդ նուիրագործութ՟ եղեն
տպագրուե՟ գրոյս ծախք. իսկ ինձ՝ի Ձերմէ պատուականուե՟
շնորհեսցի՛ միայն բարեհաճութ՟ի յօժարակամ ընդունե-
լութե՟ գործոյս՝ իբր առատաձիր և լիակատար վճար սակա-
ւամասնեայ վաստակոց իմոց։

Ձերումդ բարեմտութեան

անձնանուէր ծառայ

Կարապետ Յովհաննիսեան

Պոլոյճեանց

Հեղինակ գրոյս։

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

## ԳԼՈՒԽ Ա.

Բոլոր Գիր։

աբգ. դեզ. էըթ. ժիլ. խծկ. հձղ. ճմյ. նշո. չպջ. ռսվ. տրց. ւփք. եօֆ։

Նօտր Գիր։

աբգ. դեզ. էըթ. ժիլ. խծկ. հձղ. ճմյ. նշո. չպջ. ռսվ. տրց. ւփք. եօֆ։

Ձայնաւոր Տառք։

ա՛. ե՛. է՛. ը՛. ի՛. ո՛. ւ՛. օ՛։

Բա գա դա զա թա ժա լա խա ծա
կա հա ձա ղա ճա մա յա նա շա
չա պա ջա ռա սա վա տա րա ցա
փա քա ֆա։
Աբ ագ ադ ազ աթ աժ ալ ախ ած
ակ ահ աձ աղ աճ ամ այ ան աշ
աչ ապ աջ առ աս ավ ատ ար աց
ափ աք աֆ։
Բե գե դե զե թե ժե լե խե ծե
կե հե ձե ղե ճե մե յե նե շե
չե պե ջե ռե սե վե տե րե ցե
փե քե ֆե։

Եբ եգ եդ եզ եթ եժ ել եխ եծ
եկ եհ եձ եղ եճ եմ եյ են եշ
եչ եպ եջ եռ ես եվ ետ եր եց
եփ եք եֆ։

Բէ գէ դէ զէ թէ ժէ լէ խէ ծէ
կէ հէ ձէ ղէ ճէ մէ յէ նէ շէ
չէ պէ ջէ ռէ սէ վէ տէ րէ ցէ
փէ քէ ֆէ։

Էբ էգ էդ էզ էթ էժ էլ էխ էծ
էկ էհ էձ էղ էճ էմ էյ էն էշ
էչ էպ էջ էռ էս էվ էտ էր էց
էփ էք էֆ։

Բը գը դը զը թը ժը լը խը ծը
կը հը ձը ղը ճը մը յը նը շը
չը պը ջը ռը սը վը տը րը ցը
փը քը ֆը։

Ըբ ըգ ըդ ըզ ըթ ըժ ըլ ըխ ըծ
ըկ ըհ ըձ ըղ ըճ ըմ ըյ ըն ըշ
ըչ ըպ ըջ ըռ ըս ըվ ըտ ըր ըց
ըփ ըք ըֆ։

Բի գի դի զի թի ժի լի խի ծի
կի հի ձի ղի ճի մի յի նի շի
չի պի ջի ռի սի վի տի րի ցի
փի քի ֆի։

Իբ իգ իդ իզ իթ իժ իլ իխ իծ
իկ իհ իձ իղ իճ իմ իյ ին իշ
իչ իպ իջ իռ իս իվ իտ իր ից
իփ իք իֆ։

Բո գո դո զո թո ժո լո խո ծո
կո հո ձո ղո ճո մո յո նո շո
չո պո ջո ռո սո վո տո րո ցո
փո քո ֆո։

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ոբ | ոգ | ոդ | ոզ | ոթ | ոժ | ոլ | ոխ | ոծ |
| ոկ | ոհ | ոձ | ող | ոճ | ոմ | ոյ | ոն | ոշ |
| ոչ | ոպ | ոջ | ոռ | ոս | ով | ոտ | որ | ոց |
| ոփ | ոք | ոֆ։ | | | | | | |
| Բօ | գօ | դօ | զօ | թօ | ժօ | լօ | խօ | ծօ |
| կօ | հօ | ձօ | ղօ | ճօ | մօ | յօ | նօ | շօ |
| չօ | պօ | ջօ | ռօ | սօ | վօ | տօ | րօ | ցօ |
| փօ | քօ | ֆօ։ | | | | | | |
| Օբ | օգ | օդ | օզ | օթ | օժ | օլ | օխ | օծ |
| օկ | օհ | օձ | օղ | օճ | օմ | օյ | օն | օշ |
| օչ | օպ | օջ | օռ | օս | օվ | օտ | օր | օց |
| օփ | օք | օֆ։ | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Բու | գու | դու | զու | թու | ժու | լու | խու |
| ծու | կու | հու | ձու | ղու | ճու | մու | յու |
| նու | շու | չու | պու | ջու | ռու | սու | վու |
| տու | րու | ցու | փու | քու | ֆու։ | | |
| Ուբ | ուգ | ուդ | ուզ | ութ | ուժ | ուլ | ուխ |
| ուծ | ուկ | ուհ | ուձ | ուղ | ուճ | ում | ույ |
| ուն | ուշ | ուչ | ուպ | ուջ | ուռ | ուս | ուվ |
| ուտ | ուր | ուց | ուփ | ուք | ուֆ։ | | |
| Այբ | ագգ | ախտ | ամբ | ամք | այգ | այդ | այլ |
| այս | այտ | անդ | աչք | աստ։ | Բաթ | բան | բառ |
| բայց | բաւ | բեմ | բեն | բէլ | բիբ | բիծ | բով |
| բոր | բոց։ | Գահ | գամ | գան | գաս | գեղ | գետ |
| գեր | գիծ | գիմ | գին | գիր | գող։ | Դահ | դաս |
| դատ | դեղ | դեռ | դէմ | դիր | դիք | դող | դու։ |
| Եգն | եզր | ելք | եղծ | ենթ | եչք | եռք | երբ |
| երթ | երկ | երր։ | Զատ | զեկ | զէն | զոհ | զօր։ |
| Ընդ | ընծ | ընտ | ըշտ | ըստ։ | Թագ | թաս | թել |
| թիզ։ | Ժամ | ժեռ | ժիտ | ժիր։ | Իղձ | ինձ | ինչ |
| իսկ | իւղ | իւր։ | Խաժ | խաչ | խոտ | խոր | խոփ։ |

Կաղ կիթ կին կով։ Հաց հեղ հող հոտ։
Ձագ ձեր ձէթ ձիր ձոր ձու։ Ճառ ճեմ
ճեռ ճոխ։ Մահ մեծ միտ մոմ։ Յագ յետ
յիս յօն։ Նաւ նեղ նիգ նոյ նու։ Շատ
շէն շոր։ Ողբ ոստ ուլ ուռ։ Չար չեխ
չիտ չոր չու։ Պաս պետ պօղ։ Ջահ ջեր
ջիլ ջոկ։ Ռահ ռետ ռոճ ռու։ Սար սեր
սէզ սոխ սով սօս։ Վաղ վեգ վէմ։ Տառ
տէգ տիւ տող։ Րահ րեն րոտ։ Ցաւ ցեց
ցից ցօղ։ Փակ փիղ փոր։ Քաջ քար քիլ
քոս։ Օդք օթք օծք օրհ օրք։

Աբ գար, ագ նիւ, աղ քատ, ան նայ, ան տօն, ար ծաթ։ Բա ժակ, բա նակ, բե րան, բո ղոք։ Գա րի, գա ւաթ, գե րի, գէ որդ, գի շեր, գո մոր։ Դա գաղ, դա նակ, դա ւիթ, դե մոն, դի տակ, դո վեկ։ Ե դէմ, եղ բայր, եր կաթ, եր կիր, եր կիւղ։ Զա տիկ, զա ւակ, զե նուլ, զըղ ջալ, զու արթ, զօ ղալ։ Է ած, է ին, է օծ։ Ըմ պել, ըն ծայ, ըն կեր, ընդ դէմ, ընտ րել։ Թա նաք, թե փուր, թո շակ, թօ մաս։ Ժա մու, ժա ռանգ, ժը լատ, ժըպ տիլ, ժո ղով։ Ի բաց, ի վայր, ին ձէն, ին քեան, իս կոյն, իւ ղով, իւ րում։ Լապ տեր, լե զու, լի նիլ, լո ղակ, լու սին։ Խա չիկ, խե լօք, խի լայ, խո հեմ, խո րան, խօ սիլ։ Ծա ղիկ, ծա ծուկ, ծե ծել, ծի ծաղ, ծո վակ։ Կա մար, կա պուտ, կա րօտ, կա ցին։ Հա զար, հա մեղ, համ բոյր, հեր մօն։ Ձայ նիւ, ձե ղէն, ձի թով, ձըկ տիլ, ձու լել։ Ղա զար, ղեն ջակ, ղոր կօղ, ղու կաս։ Ճա շակ, ճըգ նել, ճո խալ։ Մա ծուն, մա նուկ, մար կոս, մե ղու, մի նաս, մո ծակ։ Յա կովբ, յա ռաջ, յաջ մէ, յե սու, յի սուս։ Նա զար, նա րեկ, նը կար,

նը շան, նի զակ, նո խազ։ Շա բաթ, շա պիկ, շա քար, շըղ թայ, շի րիմ, շու շան։ Ող ջոյն, ոչ խար, ոս կի, որ դի, որ պէս, ու ղիղ, ու րախ, ու րար։ Չա միչ, չա փել, չըն չին, չո րից, չու նող, չըք մեղ։ Պա տիւ, պա րոն, պայ ծառ, պատ կեր, պետ րոս, պօ ղոս։ Ջա նալ, ջեռ նուլ, ջըն ջել։ Ռա միկ, ռաբ բի, ռո ճիկ, ռու բէն։ Սա կաւ, սա փոր, սաղ մոս, սար գիս, սի մօն, սու սեր։ Վա կաս, վախ ճան, վար դան, վեր ջին, վի ճակ, վի րապ։ Տա ճար, տախ տակ, տան ջանք, տետ րակ, տի կին, տո կոս, տօ մար։ Րա բուն, րախ ճան, րօ պէք։ Ցա մաք, ցե րեկ, ցըն ծալ, ցոր եան, ցու ցակ։ Փա կան, փա փուկ, փե սայ, փի լոն, փո խան, փո րիկ, փո փոխ։ Քա ղաք, քա մի, քա րոզ, քա ցախ, քե նի, քե ռի, քօ ղել։ Օ գուտ, օ ժիտ, օ ծել, օ տար, օգ նել, օժ տել, օր հաս։

Աբ րա համ· Բա րա ղամ· Գաբ րի էլ· Գը րի գոր· Դա նի էլ· Ե ղի ա· Ե սայ ի· Զա քէ ոս· Է ա կան· Ըն տա նի· Թա գա ւոր· Թա դէ ոս· Ժա մա նակ· Ի ս րա էլ· Լի բա նան· Խե լա գար· Ծե րու նի· Կա րա պետ· Հե ղի նէ· Ձե ռա գիր· Ղա զա րոս· Ճո խա բան· Մի քայ էլ· Մատ թէ ոս· Յա կո բոս· Յա րու թիւն· Յո վա կիմ· Յօ հան նէս· Նա զա րէթ· Շո ղա կաթ· Ոս տի կան· Չը քա ւոր· Պաղ դա սար· Պա տա րագ· Ջա տա գով· Ռա փայ էլ· Սա մու էլ· Սե րո բէ· Սի մէ օն· Սո ղո մոն· Վար դա պետ· Տի րա մայր· Տի րա ցու· Րե նա տես· Ցա ւա կից· Ւիւ թա կան· Փա րա ւօն· Փի լիպ պոս· Քա հա նայ· Քե րո բէ· Օգ նա կան։

Ա. զա րի ա. Ա. նա նի ա. Բա րա քի աս. Գա մա ղի էլ. Դաղ մա տի ա. Ե րե մի ա. Զա քա րի ա. Էմ մա նու էլ. Ը ռ ըս տա կէս. Թէ ո թո րոս. Ժա մա տե ղի. Իգ նա տի ոս. Լու սա ւո րիչ. Խա ղա ղա կան. Ծի րա նա ւոր. Կա թո ղի կոս. Հեր մո գի նէս. Ձան ձա խա րիթ. Ղե կա վա րիչ. Ճա կա տա մարտ. Մա ղա քի ա. Յե րո բո վամ. Նա ւա կա տիս. Շա րա մա նել. Ու րա խա կան. Չա րա ժո ղով. Պա տա րա գօք. Ջա տա գո վել. Ռա կայ ա կան. Սա ղա թի էլ. Վե րա կա ցու. Տի մո թէ ոս. Րա բու նա բար. Ցօ ղա տա րափ. Փի լի սո փայ. Քա նա նա ցի. Օր հա սա կան։

Գո վա սա նա կան. Թա գա ւո րա կան. Նա խա պե տա կան։ Բա րե խօ սա կա նաց. Ժա մա նա կա ւո րաց. ող ջա խո հա կա նաց. օգ տե ցու ցա նո ղաց։

Քաղուածք 'ի սաղմոսաց։

Ե րան եալ է այր՝ որ ոչ գը նաց 'ի խոր հուր-դըս ամ բա րըշ տաց, 'ի ճա նա պար հի մե ղա ւո-րաց նա ոչ ե կաց, և յա թո ռըս ժան տից ոչ նըս տաւ։

Այլ յօ րէ նըս տեա ռըն են կամք նո րա, եւ յօ-րէ նըս նո րա խոր հես ցի նա 'ի տը ւէ եւ 'ի գի-շե րի. եւ ե ղի ցի նա որ պէս ծառ, որ տըն կեալ է 'ի գը նա ցըս ջուրց։

Որ ըզ պը տուղ իւր 'ի ժա մու տա ցէ, եւ տե-րև նո րա մի՛ թա փես ցի. և զա մե նայն՝ զոր ինչ ա րաս ցէ, յա ջո ղես ցի նմա։

Ո՛չ այս պէս են ամ բա րիշ տըք և ոչ այն պէս, այլ որ պէս ըզ փո շի, զոր հո սէ հողմ 'ի վե րայ ե-րե սաց եր կը րի։

Վասն այ սո րիկ ոչ յա րի ցեն ամ բա րիշտք ՚ի դա տաս տան և ոչ մե ղա ւորք ՚ի խոր հուր դըս ար դա րոց:

Քան զի ճա նա չէ Տէր ըզ ճա նա պար հըս ար-դա րոց, ճա նա պարհք ամ բա րըշ տաց կո րի ցեն:

Տէր ո՞վ կաց ցէ ՚ի խո րա նի քում, կամ ո՞վ բը-նա կես ցէ ՚ի լե րան սուրբ քո:

Որ գը նայ ան բիծ՝ գոր ծէ զար դա րու թիւն և խօ սի ըզ ճըշ մար տու թիւն ՚ի սըր տի իւ րում:

Որ ոչ նեն գա ւոր եաց լեզ ուաւ իւ րով և չար ըն կե րի իւ րում ոչ ա րար:

Նա խա տինս ՚ի մեր ձա ւո րաց նա ոչ առ նու, ար հա մար հեալ է ա ռա ջի նո րա չա րա գոր ծըն:

Զեր կիւ ղա ծըս Տե առն փա ռա ւոր առ նէ, որ երդ նու ընդ ըն կե րի իւ րում, և ոչ ըս տէ:

Զար ծաթ իւր ՚ի վար ձու ոչ տայ, և կա շա-ռըս ՚ի վե րայ ի րա ւանց ոչ առ նու. որ զայս ա-րաս ցէ՝ նա մի՛ սա սա նես ցի յա ւի տեան:

## Աղօթք Տէրունական:

Հայր մեր՝ որ յերկինս ես. ս͞բ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Եւ մի տանիր զմեզ ՚ի փորձութիւն. այլ փրկեա զմեզ ՚ի չարէ: Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս ամէն:

## Խոստովանութիւն հաւատոյ:

Հաւատամք ՚ի մի ա͞ծ՝ Հայրն ամենակալ՝ յարա-րիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից:

Եւ 'ի մի տ՟ր Յ՟ս Ք՟ս Որդին Ա՟յ՝ ծնեալ յԱ՟յ Հօրէ միածին, այ՟՝ յէութենէ Հօր: Ա՟ծ յԱ՟յ. լոյս 'ի լուսոյ. Ա՟ծ ճշմարիտ. յԱ՟յ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած: Նոյն ինքն 'ի բնութենէ Հօր. որով զա՟մ ինչ եղև յերկինս և 'ի վ՟ր երկրի՝ երևելիք և աներևոյթք: Որ յաղագս մեր մարդկան, և վ՟ս մերոյ փրկութե՟ն իջեալ 'ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով: Որով էառ զմարմին՝ զհոգի և զմիտ. և զա՟մ որ ինչ է 'ի մարդ՝ ճշմարտապ՟ս և ոչ կարծեօք: Չարչարեալ, խաչեալ թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ 'ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր 'ի դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թագաւորութեն ոչ գոյ վախճան: Հաւատամք և 'ի ս՟բ Հոգին՝ յանեղն և 'ի կատարեալն: Որ խօսեցաւ յօրէնս և 'ի մարգարէս և յաւետարանս: Որ էջն 'ի յորդանան՝ քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ 'ի ս՟բսն: Հաւատամք և 'ի մի միայն ընդհանրական և յառաքելական եկեղեցի: 'Ի մի մկրտութի՟. յապաշխարութի՟. 'ի քաւութի՟ և 'ի թողութի՟ մեղաց: 'Ի յարութի՟ մեռելոց, 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց: Յարքայութի՟ն երկնից և 'ի կեանսն յաւիտենականս:

### Մաղթանք առ սուրբ Կոյսն:

Անկանիմք առաջի քո ս՟բ Ածածին՝ և աղաչեմք զանարատ զԿոյսդ բարեխօսեա վ՟ս անձանց մերոց. և աղաչեա զմիածին Որդիդ. փրկել զմեզ 'ի փորձութենէ, և յա՟մ վտանգից մերոց:

# ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ.

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ:

### Նախերգանք.

Քերականութիւն՝ որ ըստ Ռուսաց կոչի Գրամմատիկա (Грамматика), է արուեստ ուղիղ խօսելոյ և անսխալ շարադրելոյ: Հարկաւոր գիտելիք ՚ի Քերականութեան են չորք. գիր, վանկ, բառ և բան:

Գիրն՝ որ ըստ Ռուսաց կոչի Բուկվա (буква), է ձևաւոր գիծ ինչ նշանակիչ տառի, որպիսի են նշանագիծքս՝ ա, բ, գ. ևն: Իսկ տառն է պարզ հնչումն նոյին. ապա ուրեմն գիրն է նշան այնպիսւոյ ձայնի, աչաց տեսանելի, և տառն՝ ձայն այնպիսւոյ նշանի, ականջաց լսելի, որոց ձևակերպութիւնք և որքանութիւն ցուցանին ՚ի սկզբան գրոցս:

Արդ՝ տառք կամ հնչմունք գրոց բաժանին ՚ի ձայնաւորս և ՚ի բաղաձայնս: Ձայնաւոր են. ա՛, ե՛, է՛, ը՛, ի՛, ո՛, ւ՛ և օ՛. զի միայնակ առանց ընկերելոյ այլոյ գրոյ ելուզանեն զձայն: Իսկ միացեալքն են բաղաձայն. զի ոչ միայնակ, այլ բաղադրելով ընդ ձայնաւորի տան զհնչումն: ՚Ի տառից կազմին վանկք:

Վանկն՝ որ ըստ Ռուսաց ասի սկլադ (складъ), է ձայն ինչ, որ միով հնչմամբ ելանէ ՚ի բերանոյ մարդոյ՝ բաղադրութեամբ ձայնաւոր և բաղաձայն տառից և լինի մասն բառից. զօ, Պա, տա, նի. ևն: ՚Ի վանկից կազմին բառք:



5089 38
А. Мясникяна

Բառն՝ որ ըստ Ռուսաց ասի սլօվօ (слово), է կերպացեալ ինչ ձայն՝ նշանակիչ ճանաչմանց և իրաց, կամ պարագայից նոցին։ Բոլոր բառք լեզուիս մերոյ՝ (որպէս և Ռուսաց)՝ բաժանին ըստ նշանակութեանցն յութն տեսակս, որք են. Անուն, Դերանուն, Բայ, Ընդունելութիւն, Նախադրութիւն, Մակբայ, Շաղկապ և Միջարկութիւն։ Ի բառից յօրինին բանք։

Բանն՝ որ ըստ Ռուսաց ասի րէչ (рѣчь), է կարգաւոր շարամանութիւն բառից՝ յայտնող տրամախոհութեան մտաց։

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## Յաղագս Անուան և պարագայից նոցին։

Անունն՝ որ ըստ Ռուսաց ասի իմեա (имя), հասարակաբար առեալ ցուցանէ զկինչութիւն և զորպիսութիւն իրին, (*) այսինքն է՝ այնպիսի նշանական բառ, որով իրն ճանաչի լինել այս ինչ կամ այսպիսի ինչ. սոյ և բաժանի ՚ի Գոյական և յԱծական։

Գոյական անունն՝ որ ըստ Ռուսաց ասի սուշչէստվիտէլնօէ իմեա (существительное имя), ցուցանէ զկինչութիւն իրին. (որ է և լինի պատասխանի հարցմանս զի՞նչ է). որպէս, Մարդ, հաց, սէր, օրհնութիւն. և այլն։ Իսկ ըստ նշանակութեան բաժանի ՚ի Յատուկ, ՚ի Հասարակական և ՚ի յԸնդհանուր։

---

(*) Բառիւս իր իմանալի է առ հասարակ զամ առարկայս, թէ կենդանիս, և թէ անկենդանս, ստեղծականս յԱստուծոյ, և յօրինեալս ՚ի մարդկանէ։

1. Յատուկ անունն՝ որ է Ռուսաց սօբստվէննօէ իմեա (собственное имя), է՝ որ կարգեալ է առ ՚ի նշանակել զանհատ իր մի եզական. զօ, Պօղոս, Եղիսաբէթ, Մարիա, Կեսարիա, Նեղոս, Յունվար. ևն։

2. Հաւաքականն, որ է Ռուսաց սօբիրատէլնօէ սլօվօ (собирательное слово), է՝ որ եզական ձայնիւ ժողովակի ցուցանէ զբազմութիւն նոյնատեսակ իրաց՝ հաւաքելոց ՚ի մի բոլոր, առանց պատշաճելոյ իւրաքանչիւրումն ազատաբար. զօ, Հօտ, գունդ, ժողով. ևն։

3. Ընդհանուրն՝ որ է Ռուսաց նարիցատէլնօէ (нарицательное), է՝ որ միանգամայն ընծայի, թէ հասարակաբար բազմաց, և թէ որոշակի միումն այնր տեսակի. զօ, Մարդ, ծաղիկ, գետ. ևն։

Ածական անունն, որ է Ռուսաց պրիլագատէլնօէ իմեա (прилагательное имя), ցուցանէ զորպիսութիւն բազմապատշաճ. (վասն և լինի պատասխանի հարցմանս որպիսի է). զօ, Բարի, չար, մեծ, փոքր. ևն։ Եւ է նշանակութեան իւրում բաժանի ՚ի Դրական, ՚ի Բաղդատական և ՚ի Գերադրական։

1. Դրականք՝ է Ռուսաց պօլօժիտէլնայա ստէպէն (положительная степень), են, որք ցուցանեն զորպիսութիւն իրին պարզապէս՝ առանց որքանութեան և ընդայլում բաղդատութեան. զօ, Մեծ, փոքր, բարի. ևն։

2. Բաղդատականք՝ է Ռուսաց սրավնիտէլնայա ստէպէն (сравнительная степень), են, որք ցուցանեն զորքանութիւն որպիսութեան առաւելեալ ՚ի մին, քան ՚ի միւսն, և ՚ի վերջոյ ունին զաննշան մասնիկս՝ գոյն. զօ, Բարեգոյն, մեծագոյն, փոքրագոյն. ևն։

3. Գերադրականք՝ է Ռուսաց պրէվօսխօդնայա ստէպէն (превосходная степень), են, որք ցուցանեն զորպիսութիւն իրին ՚ի վերջնում աստիճանի առա-

ւելութի՛, քան զոր չի՛ք աւելի, և ոչ կարգին մասն-կամբս՝ այն. զօ, Ամենամեծ, ամենաբարի, ամենա-գեղեցիկ:

Ընդ ածական անուանս դասին և սակաւ բառք՝ որք կոչին Միջականք կամ Քանակականք, ըստ Ռուսաց չիսլիտելնօէ իմեա (числительное имя). զի զքա-նակութիւս իրաց նշանակեն, և բաժանին ՚ի հինգ տեսակս, որք են. Մասնականք, Հանրականք, Հար-ցականք, Վերբերականք և Թուականք:

1. Մասնականք են բառքս. Ոմնիւր, երկոքան-չիւր, իւրաքանչիւր, իմն, ինչ, իք, միւս, ոմն, ոք:

2. Հանրականք են բառքս. Ամէն, ամենայն, ա-մենեքեան, ամենեքին, բնաւ, բոլոր, բոլորեքեան, բոլորեքին, ողջոյն, ոչինչ:

3. Հարցականք են սոքին. Զի՞նչպիսի, ի՞նչ, ո՞, ո՞վ, ո՞ր, ո՞րչափ, ո՞րպիսի, ո՞րքան, քանի՞, ո՞յք:

4. Վերբերականք են սոքին. Այսպիսի, այդպիսի, այնպիսի, սոյնպիսի, դոյնպիսի, նոյնպիսի, որպիսի, այսչափ, այդչափ, այնչափ, սոյնչափ, դոյնչափ, նոյն-չափ, որչափ, այսքան, այդքան, այնքան, սոյնքան, դոյնքան, նոյնքան, որքան, որ:

5. Թուականք են սոքին. Բացարձակք. Մի, երկու, տասն, հազար, բիւր. ևն:

Դասականք. Առաջներորդ, երկրորդ. ևն:

Զատականք. Միակ, երկեակ. ևն:

Անձներականք. Երկոքին, երեքին. ևն:

Կրկնականք. Նախկին, կրկին. ևն:

## Ցուցակ Պարագայից անուան:

Պարագայք անուանց են այլ և այլ որպիսութիւնք նոցին՝ որք յանուանս մտանին, իբր հետևմունք

լինչ, և են վեց. Սեռ, Ձև, Տեսակ, Թիւ, Հոլով և Հոլովադասութիւն:

1). Սեռք անուանց, ըստ Ռուսաց րօդը (роды), են որոշմունք գոյական անուանց, ըստ նշանակելոյ նոցա զսեռս իրաց, և են չորք. Արական, Իգական, Հասարակ և Չեզոքական:

1. Արականն, ըստ Ռուսաց մուժէսկիյ րօդ (мужескій родъ), է՝ որ նշանակէ զարու. օր. Գէորգ, Հայր, եղբայր, ցուլ, աքաղաղ. ևն:

2. Իգականն, ըստ Ռուսաց ժէնսկիյ րօդ (женскій родъ), է՝ որ նշանակէ զէգ. օր. Մարիամ, մայր, քոյր, հարսն, կով, հաւ. ևն:

3. Հասարակն, որ ըստ Ռուսաց ասի օբշչիյ րօդ (общій родъ), է՝ որ նշանակէ զարու և զէգ. օր. Մարդ, զաւակ, ոչխար, շուն. ևն:

4. Չեզոքականն, որ ըստ Ռուսաց հնար է կոչել սրէդնիյ րօդ (средній родъ), է՝ որ նշանակէ զանկենդան ինչ, կամ և չունի զարու և զէգ. օր. Հող, ջուր, ծառ, մեծութիւն. ևն:

Ձևք նկատելի յանուանս ըստ միայնակութեան և ըստ յարակցութեան նոյնի ընդ այլում բառի կամ մասն-կան, և են երեք. Պարզ, Բարդ և Բաղադրեալ:

1. Պարզ անունն, ըստ Ռուսաց պրօստօէ սլօվօ (простое слово), է այն՝ որ ոչ է զօդեալ ընդ այլում բառի, այլ կայ յինքեան միայնակ. օր. Հոգի, սով, բարի. ևն:

2. Բարդն, ըստ Ռուսաց ասի սլօժնօէ սլօվօ (сложное слово), է այն՝ որ զօդեալ է ընդ այլում բառի. օր. Հոգեսէր, սովամահ, բարեմիտ. ևն: Ընդ բարդս դասին և քանի մի անուանք՝ որք յերից բառից զօդին ՚ի մի անուն, և կոչին Յարաբարդք. օր. Երեքտասանամեայ, Ընդդիմամարտ. ևն:

3. Իսկ բաղադրեալն, ըստ Ռուսաց պրիստավոչնիէ (приставочные), է՝ որ յառաջոյ իւր ունի զանոնշան մասնիկ ինչ. զօ, Աշներկիւղ, ապերախտ, ակար. և՛ն։

Տեսակք անուանց նկատին 'ի նոսին ըստ բուն և փոփոխ կերպաւորութեան նոցին, և են կրկին. Նախագաղափար և Ածանցական։

Նախագաղափար կամ նախատիպ անունն, որ ըստ Ռուսաց պերվօօբրազնօէ կամ կօրեննօէ (первообразное или коренное), է՝ որ կայ յառաջին տեսութեան, և 'ի բուն նշանակութեան իւրում. զօ, Լոյս, երկիր, գործ. և՛ն։

2. Ածանցականն, ըստ Ռուսաց պրօիզվօդնօէ սլօվօ (производное слово), է՝ որ ածանցականօք մասնկանց կերպաւորեալ յայլ տեսութիւն՝ փոխէ զնշանակութիւն նախատիպին. որգոն, Լուսաւոր, երկրային, բարեգործութիւն. և՛ն։

Ածանցական մասնիկք բազում են յոյժ 'ի լեզուիս Հայոց։ Իսկ տեսակ ածանցականաց են երեսուն, որք են։

1. Հայրանունական. եան, եայ, եանց, անոյշ, ունի, պուխա. և՛ն. զօ, Աբրահամեան. և՛ն։

2. Ազգական. ացի, եցի, եայ, ունի, ու. և՛ն. զօ, Իսրայելացի. և՛ն։

3. Տեղական. ցի, են, կան, ւոր, ուկ. և՛ն. զօ, Հռովմայեցի. և՛ն։

4. Հետևական. եան, այն, կան, ցի. և՛ն. զօ, Լուսաւորչեան. և՛ն։

5. Ցարողական. ծան, ժէր, շար. և՛ն. զօ, Գինեծան. և՛ն։

6. Զեղծական. գար, ժէր. և՛ն. զօ, Ցաւագար. և՛ն։

7. Տնկականք. ենի, ի, իճ, ուտ. ևն. զօր, Նշենի. ևն։

8. Գոյացականք. եայ, ի, եղէն, ենի, եակ. ևն. զօր, Պղնձեայ. ևն։

9. Մածուցականք. ոտ, ուտ, եղի. ևն. զօր, Ձի-թոտ. ևն։

10. Ծածկողականք. անոց, ոց, ու, ան, իք, իչ. ևն. զօր, Գլխանոց. ևն։

11. Գործիքականք. ոց, որդ, ան, րան, նակ. ևն. զօր, Սղոց. ևն։

12. Պարունակականք. արան, նոց, ստան. ևն. զօր, Ժո-ղովարան. ևն։

13. Վարողականք. որդ, ւոր, կան. ևն. զօր, Այ-ծորդ. ևն։

14. Տուչականք. նակ, չեայ, էն. ևն. զօր, Յաղթա-նակ. ևն։

15. Մտացականք. կան, եայ, ունի. ևն. զօր, Մարմ-նական. ևն։

16. Ունակականք. ւոր, կան, եայ, ոյ. ևն. զօր, Թևա-ւոր. ևն։

17. Ընդունականք. իչ, իկ, ուկ. ևն. զօր, Հալա-ծիչ. ևն։

18. Արտադրականք. ած, ածոյ, ածու, ուած. ևն. զօր, Այրեցած. ևն։

19. Ընթակայականք. ցու, ուտ, ուկ. ևն. զօր, Քա-հանայացու. ևն։

20. Թուականք. որդ, երորդ, ակ, կին, պատիկ. ևն. զօր, Քառորդ. ևն։

21. Աստականք. գին, եղ, ւէտ. ևն. զօր, Զուար-թագին. ևն։

22. Նուաղականք. ակ, եակ, ուկ. ևն. զօր, Նաւակ. ևն։

23. Պակասականք. ատ. ևն. զօր, Ականջատ. ևն։

24. Ձևացականք. արդ, ձի, իք. ևն. զօր, Խորանարդ. ևն։

25. Հաղորդական. որդ. զօ, Զայնորդ. ևն։

26. Պաշտպանականք. պան, ակ. ևն. զօ, Դռնապան. ևն։

27. Վերացական. ութիւն. զօ, Մարդկութիւն. ևն։

28. Բայածականք. ումն, ուած, էած. ևն. զօ, Գոչումն. ևն։

29. Յարմարականք. օթ, ոյ, որդ. ևն. զօ, Ծանօթ. ևն։

30. Նմանականք. ան, ական, ալ, ոց. ևն. զօ, Պատուիրան. ևն։

Ծանօթութիւն. Գիտել արժան է ստանօր, զի 'ի վերոյիշեալ մասնկանց են բաղումք, որք վերաբերին առ մին միայն տեսակ յերեսնից անտի, բայց ո՛չ սակաւ են և ա՛յնպիսիք՝ որք առ բաղում տեսակս նոցին վերաբերին, ըստ այլևայլ կերպիւ յարելոյ 'ի նախադիպսն. ըստ որոյ և փոխին երբեմն ըղդյականն յածական, և երբեմն ածականն 'ի գոյական, որոց ընտրութիւն ո՛չ է ինչ դժուար։

Թիւք անուանց՝ ըստ Ռուսաց չիսլօ (число), ցուցանեն ձայնիւ զորքանութիւն իրին, և բաժանին յերկուս՝ յԵզական և 'ի Յոգնական։

1. Եզականն՝ ըստ Ռուսաց եդինստվեննօե չիսլօ (единственное число), ցուցանէ ըստ ձայնին զմի իր միայն. զօ, Մովսէս. ևն։

2. Յոգնականն՝ ըստ Ռուսաց մնօժեստվեննօե չիսլօ (множественное число), ցուցանէ զբազում իրս. զօ, Մարդիկ. ևն։

Ծանօթութիւն. Ըստ այլ բազում լեզուք, նմանապէս և Հայկականս՝ ունի զիւր յատկութիւն. իբր զի ոմանք 'ի գոյական անուանց միշտ, և ոմանք յաւէտ, վարին յեզակի թիւն միայն, և այսպիսիք կո-

չին՝ անյոգնական անուանք․ զ՞ո, սէր, եւն։ Այսպէս եւ՝ ոմանք միշտ, և ոմանք յաւէտ, վարին 'ի յոգնակին միայն, և այսպիսիք կոչին անեզական անուանք․ զ՞ո, բարք․ եւն։

Հոլովն՝ որ ըստ Ռուսաց պադէժ (падежъ) անուանի, է փոփոխումն կազմութեան և նշանակութեան մի և նոյն անուան․ ըստ որոյ և թուի տասն․ Ուղղական, Սեռական, Տրական, Հայցական, Բացառական, Պատմական, Գործիական, Պարառական, Ներգոյական և Կոչական։

1․ Ուղղականն՝ ըստ Ռուսաց իմէնիթէլնի (именительный), որ լինի պատասխանի հարցմանցս․ ո՞վ, ո՞, զի՞նչ։

2․ Սեռականն՝ ըստ Ռուսաց րօտիթէլնի (родительный), որ լինի պատասխանի հարցմանցս․ որո՞յ, ո՞յր։

3․ Տրականն՝ ըստ Ռուսաց տաթէլնի (дательный), որ լինի պատասխանի հարցմանցս․ ո՞ւմ, որո՞ւմ, յո՞, ցո՞, առ ո՞, յի՞նչ։

Ծանօթութիւն․ Գիտելի՛ է, զի յերկուց տրականացս՝ վերջահոլով և նախդրաւ կոչեցելոց, մին միայն գտանի առ Ռուսս, այն է վերջահոլովն․ իսկ նախդրաւն բացատրի առ նոսա во, въ կամ на նախադրութիւք հանդերձ հայցական խնդրովք նոցին։

4․ Հայցականն՝ ըստ Ռուսաց վինիթէլնի (винительный), որ լինի պատասխանի հարցմանցս․ զո՞վ, զո՞, զի՞նչ։

5․ Բացառականն՝ որ լինի պատասխանի հարցմանցս․ յորմէ՞, յումմէ՞, ուստի՞։

Ծանօթութիւն․ 'Ի տեղի այսր հոլովոյ 'ի լեզուի Ռուսաց վարին նախադրութիւքս отъ, изъ, съ կամ со հանդերձ սեռական խնդրովք իւրեանց։

6․ Պատմականն՝ որ լինի պատասխանի հարցմանցս․ զորմէ՞ կամ զորո՞յ, զումմէ՞։

Ծանօթութիւն. փոխանակ այսր հոլովոյ ՚ի լեզուի Ռուսաց վարին նախադրութիւքս о կամ объ հանդերձ ներգոյական խնդրով իւրեանց։

7. Գործիականն՝ ըստ Ռուսաց տվօրիտէլնիյ (творительный), որ լինի պատասխանի հարցմանցս. որո՞վ, ի՞ւ։

8. Պարառականն՝ որ լինի պատասխանի հարցմանցս. զորո՞վ կամ զի՞ւ, յո՞յր վերայ։

Ծանօթութիւն. ՚ի տեղի այսր հոլովոյ ՚ի լեզուի Ռուսաց վարին նախադրութիւքս окрестъ, около, вокругъ հանդերձ սեռական խնդրով իւրեանց։

9. Ներգոյականն՝ ըստ Ռուսաց պրէտլօժնիյ պատէժ (предложный), որ լինի պատասխանի հարցմանցս. յո՞րում, յի՞նչ, ո՞ւր։

10. Կոչականն՝ ըստ Ռուսաց զվատէլնիյ (звательный), որ լինի պատասխանի հարցմանցս. ո՛, ո՛վ։

Հոլովադասութիւն կամ հոլովումն անուանց, որ ըստ Ռուսաց կոչի սկլօնէնիէ (склоненіе), է պէսպիսութիւն վերջաւորութեանց նոյա ՚ի սեռական և ՚ի գործիական հոլովս միանգամայն, ըստ որոց հոլովելի անուանք տարբերեալ յիրերաց՝ բաժանին ՚ի քսան տեսակս, որոց չորեքտասանքն ասին հասարակք, և վեցքն՝ մասնաւորք։

## Օրինակ առաջին հոլովման։

| | Եզական. | Յոգնական. |
|---|---|---|
| Ուղ. | Վ՝կայ. | Վ՝կայք. |
| Սեռ. | Վ՝կայի. | Վ՝կայից. |
| Տրակ. | Վ՝կայի, ՚ի վկայ. | Վ՝կայից, ՚ի վկայս. |
| Հայց. | զՎ՝այ. | զՎ՝կայս. |

| | | |
|---|---|---|
| Բաց. | ՚ի Վկայէ. | ՚ի Վկայից. |
| Պատ. | զՎկայէ. | զՎկայից. |
| Գործ. | Վկայիւ. | Վկայիւք. |
| Պարառ. | զՎկայիւ. | զՎկայիւք. |
| Ներգ. | ՚ի Վկայի կամ ՚ի վկայ. | ՚ի Վկայս. |
| Կոչ. | ո՜վ Վկայ։ | ո՜վ Վկայք։ |

Ընդ այսու օրինակաւ հոլովին բազում անուանք՝ յորոց են, որ անփոփոխ և անկորուստ պահեն զյետին ձայնաւոր տառն, են, որք փոխեն զնոյն յայլ ձայնաւոր, և են, որ ՚ի բաց ձգեն զայն իսպառ. այսպէս իմանալի՛ է և վասն այլոց բառից՝ հոլովելոց ընդ ներքնաշար օրինակօք. որգոն, Արքայ, Արքայի, ևն։

## Օրինակ երկրորդ հոլովման։

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Ազգ. | Ազգք. |
| Ս. | Ազգի. | Ազգաց. |
| Տ. | Ազգի, յազգ. | Ազգաց, յազգս. |
| Հ. | զԱզգ. | զԱզգս. |
| Բ. | յԱզգէ. | յԱզգաց. |
| Պ. | զԱզգէ. | զԱզգաց. |
| Գ. | Ազգաւ. | Ազգօք. |
| Պ. | զԱզգաւ. | զԱզգօք. |
| Ն. | յԱզգի կամ յազգ. | յԱզգս. |
| Կ. | ո՜վ Ազգ։ | ո՜վ Ազգք։ |

Ըստ այսմ ևս հոլովին բազում անուանք. Աւազան, ևն։

## Օրինակ երրորդ հոլովման։

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Բերան. | Բերանք. |
| Ս. | Բերանոյ. | Բերանոց. |
| Տ. | Բերանոյ, ՚ի բերան. | Բերանոց, ՚ի բերանս. |
| Հ. | զԲերան. | զԲերանս. |

| | | |
|---|---|---|
| Բ. | 'ի Ներանոյ. | 'ի Ներանոց. |
| Պ. | զՆերանոյ. | զՆերանոց. |
| Գ. | Ներանով. | Ներանովք. |
| Պ. | զՆերանով. | զՆերանովք. |
| Ն. | 'ի Ներան. | 'ի Ներանս. |
| Կ. | ով Ներան։ | ով Ներանք։ |

Ըստ այսմ հոլովին բառքս. Աթոռ, Դժոխք, ևն։

Ծանօթութիւն. Ոմանց 'ի բառից այսր օրինակի վերջահոլով տրականն եզերի 'ի ում. իսկ ներգոյականն 'ի ում և 'ի ի. մանաւանդ՝ որոց ուղղականն իցէ ին կամ իր. զօ, ներքնում, 'ի ներքնում, 'ի գրի. ևն։

## Օրինակ չորրորդ հոլովման։

| | Եզական. | Յոգնական. |
|---|---|---|
| Ու. | Մատանի. | Մատանիք. |
| Ս. | Մատանւոյ. | Մատանեաց. |
| Տ. | Մատանւոյ, 'ի մատանի. | Մատանեաց, 'ի մատանիս. |
| Հ. | զՄատանի. | զՄատանիս. |
| Բ. | 'ի Մատանւոյ. | 'ի Մատանեաց. |
| Պ. | զՄատանւոյ. | զՄատանեաց. |
| Գ. | Մատանեաւ. | Մատանեօք. |
| Պ. | զՄատանեաւ. | զՄատանեօք. |
| Ն. | 'ի Մատանւոջ. | 'ի Մատանիս. |
| Կ. | ով Մատանի։ | ով Մատանիք։ |

Ըստ այսմ հոլովին բառքս. Եկեղեցի, Աւետիք, ևն։

Ծանօթութիւն. Ոմանց 'ի բառից՝ ըստ այսու օրինակաւ հոլովելոց, գործիականն յերկուսին թիւս ևս եզերի ամենևին նման երրորդ օրինակի գործիականաց՝ ւով, ւովք, և այս յայնպիսի անուանս յաւէտ, որ են երկավանկ. զօ, Հոգի, հոգւով, հոգւովք։ Որդի, որդւով, որդւովք, ևն. որպէս և եզերի ներգոյականն 'ի ւոջ. որ տեսանի յօրինակն իսկ։

## Օրինակ հինգերորդ հոլովման։

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Ատամն. | Ատամունք. |
| Ս. | Ատաման. | Ատամանց. |
| Տ. | Ատաման, յատամն. | Ատամանց, յատամունս. |
| Հ. | զԱտամն. | զԱտամունս. |
| Բ. | յԱտամանէ. | յԱտամանց. |
| Պ. | զԱտամանէ. | զԱտամանց. |
| Գ. | Ատամամբ. | Ատամամբք. |
| Պ. | զԱտամամբ. | զԱտամամբք. |
| Ն. | յԱտաման կամ յատամն. | յԱտամունս. |
| Կ. | ով Ատամն։ | ով Ատամունք։ |

Բառ այսմ հոլովին բառքս. Եկն, Հիմն, ևն։

## Օրինակ վեցերորդ հոլովման։

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Զօրութիւն. | Զօրութիւնք. |
| Ս. | Զօրութեան. | Զօրութեանց. |
| Տ. | Զօրութեան, 'ի զօրութիւն. | Զօրութեանց, 'ի զօրութիւնս. |
| Հ. | զԶօրութիւն. | զԶօրութիւնս. |
| Բ. | 'ի Զօրութենէ. | 'ի Զօրութեանց. |
| Պ. | զԶօրութենէ. | զԶօրութեանց. |
| Գ. | Զօրութեամբ. | Զօրութեամբք. |
| Պ. | զԶօրութեամբ. | զԶօրութեամբք. |
| Ն. | 'ի Զօրութեան կամ 'ի զօրութիւն. | 'ի Զօրութիւնս. |
| Կ. | ով Զօրութիւն։ | ով Զօրութիւնք։ |

Բառ այսմ հոլովին բառքս. Տղայութիւն, Ծնունդ, ևն։

## Օրինակ եօթներորդ հոլովման։

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Անձն. | Անձինք. |
| Ս. | Անձին. | Անձանց. |

| | | |
|---|---|---|
| Տ. | Անձին, յանձն. | Անձանց, յանձինս. |
| Հ. | զԱնձն. | զԱնձինս. |
| Բ. | յԱնձնէ. | յԱնձանց. |
| Պ. | զԱնձնէ. | զԱնձանց. |
| Գ. | Անձամբ. | Անձամբք. |
| Պ. | զԱնձամբ. | զԱնձամբք. |
| Ն. | յԱնձին կամ յանձն. | յԱնձինս. |
| Կ. | ովԱնձն: | ովԱնձինք: |

Ըստ այսմ հոլովին բառքս. Բեռն, կայծն, ևն:

Ծանօթութիւն. Ըմանց 'ի բառից այսր օրինակի յոգնակի ուղղականն ելերի 'ի ունք. զօ, Մասունք, Մասունք, ևն:

## Օրինակ ութերորդ հոլովման:

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Վարձ. | Վարձք. |
| Ս. | Վարձու. | Վարձուց. |
| Տ. | Վարձու, 'ի վարձ. | Վարձուց, 'ի վարձս. |
| Հ. | զՎարձ. | զՎարձս. |
| Բ. | 'ի Վարձէ. | 'ի Վարձուց. |
| Պ. | զՎարձէ. | զՎարձուց. |
| Գ. | Վարձու. | Վարձուք. |
| Պ. | զՎարձու. | զՎարձուք. |
| Ն. | 'ի Վարձ կամ 'ի վարձու. | 'ի Վարձս. |
| Կ. | ովՎարձ: | ովՎարձք: |

Ըստ այսմ հոլովին բառքս. Գանձ, Նկար, զէն, ինձ, բարք, ևն:

## Օրինակ իններորդ հոլովման:

| | Եզակի: | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Մանր. | Մանունք. |
| Ս. | Մանու. | Մանունց. |
| Տ. | Մանու, 'ի մանր. | Մանունց, 'ի մանունս. |
| Հ. | զՄանր. | զՄանունս. |
| Բ. | 'ի Մանրէ. | 'ի Մանունց. |

| | | |
|---|---|---|
| Պ. | զՄ՝անրէ· | զՄ՝անունց· |
| Գ. | Մ՝անու կամ մանումբ· | Մ՝անումբք· |
| Պ. | զՄ՝անու կամ զմանումբ· | զՄ՝անումբք· |
| Ն. | 'ի Մ՝անու կամ 'ի մանր· | 'ի Մ՝անունս· |
| Կ. | ով Մ՝անր: | ով Մ՝անունք: |

Այսպէս հոլովին և բառքս· Թ՝անձր, ծաղր, ևն:

## Օրինակ տասներորդ հոլովման:

| | Եզակի· | Յոգնակի· |
|---|---|---|
| Ո. | Եղջիւր· | Եղջիւրք կամ եղջերք· |
| Ս. | Եղջեր· | Եղջերաց կամ եղջերց· |
| Տ. | Եղջեր, յեղջիւր· | Եղջերաց կամ եղջերց, յեղջիւրս կամ յեղջերս· |
| Հ. | զԵղջիւր· | զԵղջիւրս կամ զեղջերս· |
| Բ. | յԵղջերէ· | յԵղջերաց կամ յեղջերց· |
| Պ. | զԵղջերէ· | զԵղջերաց կամ զեղջերց· |
| Գ. | Եղջերբ կամ եղջերաւ· | Եղջերօք կամ եղջերբք· |
| Պ. | զԵղջերբ կամ զեղջերաւ· | զԵղջերօք կամ զեղջերբք· |
| Ն. | յԵղջեր կամ յեղջիւր· | յԵղջիւրս կամ յեղջերս· |
| Կ. | ով Եղջիւր: | ով Եղջիւրք կամ եղջերք: |

Այսպէս հոլովին բառքս· Ա՛ղբիւր, կայսր, ևն:

## Օրինակ մետասաներորդ հոլովման:

| | Եզակի· | Յոգնակի· |
|---|---|---|
| Ո. | Ա՛րկղ· | Ա՛րկեղք· |
| Ս. | Ա՛րկեղ· | Ա՛րկեղաց· |
| Տ. | Ա՛րկեղ, յարկղ· | Ա՛րկեղաց, յարկեղս· |
| Հ. | զԱ՛րկղ· | զԱ՛րկեղս· |
| Բ. | յԱ՛րկեղէ· | յԱ՛րկեղաց· |
| Պ. | զԱ՛րկեղէ· | զԱ՛րկեղաց· |
| Գ. | Ա՛րկեղբ· | Ա՛րկեղբք կամ արկեղօք· |
| Պ. | զԱ՛րկեղբ· | զԱ՛րկեղբք կամ զարկեղօք· |
| Ն. | յԱ՛րկեղ կամ յարկղ· | յԱ՛րկեղս· |
| Կ. | ով Ա՛րկղ: | ով Ա՛րկեղք: |

Ըստ այսմ հոլովին բառքս· Ա՛ստղ, ոստղ, ևն:

### Օրինակ երկոտասաներորդ հոլովման։

Եզակի.

Ո. Հայկ.
Ս. Հայկայ.
Տ. Հայկայ, 'ի Հայկ.
Հ. զՀայկ.
Բ. 'ի Հայկայ.
Պ. զՀայկայ.
Գ. Հայկաւ.
Պ. զՀայկաւ.
Ն. 'ի Հայկ.
Կ. ով Հայկ։

Ըստ այսմ հոլովին յատուկ անուանքս. Անակ, Արամ, ևն։

### Օրինակ երեքտասաներորդ հոլովման։

Եզակի.

Ո. Աթանագինէ.
Ս. Աթանագինեայ.
Տ. Աթանագինեայ, յԱթանագինէ.
Հ. զԱթանագինէ.
Բ. յԱթանագինեայ.
Պ. զԱթանագինեայ.
Գ. Աթանագինեաւ.
Պ. զԱթանագինեաւ.
Ն. յԱթանագինէ.
Կ. ով Աթանագինէ։

Ըստ այսմ հոլովին յատուկ անուանքս. Արիստակէս, Դիոգինէս, ևն։

### Օրինակ չորեքտասաներորդ հոլովման։

Յոգնակի.

Ո. Այգեստանեայք.
Ս. Այգեստանեայց կամ այգեստանեաց.

Տ. Այգեստանեայց կամ այգեստանեաց, յայգեստանեաս.
Հ. զԱյգեստանեայս.
Բ. յԱյգեստանեայց.
Պ. զԱյգեստանեայց.
Գ. Այգեստանեօք.
Պ. զԱյգեստանեօք.
Ն. յԱյգեստանեայս.
Կ. ով Այգեստանեայք։

Ըստ այսմ հոլովին հետագայ անուանքդ. Աջեայք, Ահեկեայք, Հայկազնեայք, Զիթաստանեայք, ևն։

## Յատուկ հոլովմունք անուանց

### Օրինակ Առաջին։

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Տէր. | Տեարք. |
| Ս. | Տեառն. | Տեարց կամ տերանց. |
| Տ. | Տեառն, 'ի տէր. | Տեարց կմ՝ տերանց, 'ի տեարս. |
| Հ. | զՏէր. | զՏեարս. |
| Բ. | 'ի Տեառնէ. | 'ի Տեարց կամ 'ի տերանց. |
| Պ. | զՏեառնէ. | զՏեարց կամ զտերանց. |
| Գ. | Տերամբ. | Տերամբք. |
| Պ. | զՏերամբ. | զՏերամբք. |
| Ն. | 'ի Տեառն կամ 'ի տէր. | 'ի Տեարս. |
| Կ. | ով Տէր։ | ով Տեարք։ |

Ըստ այսմ հոլովին. Կոչնատէր, Տանուտէր, Այր, Քեռայր, Սկեսրայր, Երկայր, ևն։

### Օրինակ Երկրորդ։

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Հայր. | Հարք. |
| Ս. | Հօր. | Հարց կամ հարանց. |
| Տ. | Հօր, 'ի հայր. | Հարց կմ՝ հարանց, 'ի հարս. |

| | | |
|---|---|---|
| Հ. | զհայր. | զհարս. |
| Բ. | 'ի հօրէ. | 'ի հարց կամ 'ի հարանց. |
| Պ. | զհօրէ. | զհարց կամ զհարանց. |
| Գ. | հարբ. | հարբք. |
| Պ. | զհարբ. | զհարբք. |
| Ն. | 'ի հօր կամ 'ի հայր. | 'ի հարս. |
| Կ. | ով հայր։ | ով հարք։ |

Ըստ այսմ հոլովին. Աստուածահայր, Կնքամայր, Տիրամայր, Եղբայր, ևն։

## Օրինակ Երրորդ։

| | Եզական. | Յոգնական. |
|---|---|---|
| Ո. | քոյր. | քորք. |
| Ս. | քեռ. | քերց. |
| Տ. | քեռ, 'ի քոյր. | քերց, 'ի քորս. |
| Հ. | զքոյր. | զքորս. |
| Բ. | 'ի քեռէ. | 'ի քերց. |
| Պ. | զքեռէ. | զքերց. |
| Գ. | քերբ. | քերբք. |
| Պ. | զքերբ. | զքերբք. |
| Ն. | 'ի քեռ կամ 'ի քոյր. | 'ի քորս. |
| Կ. | ով քոյր։ | ով քորք։ |

Ըստ այսմ հոլովին և բաղադրեալք սորա. Հօրաքոյր, Մօրաքոյր, ևն։

## Օրինակ Չորրորդ։

| | Եզական. | Յոգնական. |
|---|---|---|
| Ո. | կին. | կանայք. |
| Ս. | կնոջ. | կանանց. |
| Տ. | կնոջ, 'ի կին. | կանանց, 'ի կանայս. |
| Հ. | զկին. | զկանայս. |
| Բ. | 'ի կնոջէ. | 'ի կանանց. |
| Պ. | զկնոջէ. | զկանանց. |
| Գ. | կանամբ կամ կնաւ. | կանամբք. |

| | | |
|---|---|---|
| Պ. | զկանամբ կամ զկնաւ. | զկանամբք. |
| Ն. | 'ի կնոջ կամ 'ի կին. | 'ի կանայս. |
| Կ. | ո՛վ կին: | ո՛վ կանայք: |

Ըստ այսմ հոլովին և բարդեալք սորա. Առնակին, Բազմակին, Միակին, Տիկին, ևն:

## Օրինակ Հինգերորդ:

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Գիւղ. | Գիւղք. |
| Ս. | Գեղջ. | Գիւղից. |
| Տ. | Գեղջ, 'ի գիւղ. | Գիւղից, 'ի գիւղս. |
| Հ. | զԳիւղ. | զԳիւղս. |
| Բ. | 'ի Գեղջէ. | 'ի Գիւղից. |
| Պ. | զԳեղջէ. | զԳիւղից. |
| Գ. | Գիւղիւ. | Գիւղիւք կամ գիւղօք. |
| Պ. | զԳիւղիւ. | զԳիւղիւք կամ զգիւղօք. |
| Ն. | 'ի Գեղջ կամ 'ի գիւղ. | 'ի Գիւղս. |
| Կ. | ո՛վԳիւղ: | ո՛վԳիւղք: |

Ըստ այսմ հոլովին. Գեօղ, Ձորագեօղ, Նորագիւղ, ևն:

## Օրինակ Վեցերորդ:

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Օր. | Աւուրք. |
| Ս. | Աւուր. | Աւուրց. |
| Տ. | Աւուր, յօր. | Աւուրց, յաւուրս. |
| Հ. | զՕր. | զԱւուրս. |
| Բ. | յՕրէ. | յԱւուրց. |
| Պ. | զՕրէ. | զԱւուրց. |
| Գ. | Աւուրբ. | Աւուրբք. |
| Պ. | զԱւուրբ. | զԱւուրբք. |
| Ն. | յԱւուր կամ յօր. | յԱւուրս. |
| Կ. | ո՛վՕր: | ո՛վԱւուրք: |

Ըստ այսմ հոլովին և բարդեալք սորա. Երկայնօր, Կէսօր, ևն:

# ԱՂԻՒՍԱԿ ՎԱՍՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՀՈԼՈՎՄԱՆՑ ԱՆՈՒԱՆՑ։

| Հոլովմունք։ | Եզ. ուղ. | Եզ. գոր. | Յոգ. ուղ. | Յոգ. գոր. |
|---|---|---|---|---|
| Վէպ, | ի. | իւ. | ից. | իւք. |
| Ազգ, | ի. | աւ. | աց. | օք. |
| Բերան, | ոյ. | ով. | ոց. | ովք. |
| Մատանի, | ւոյ. | եաւ. | եաց. | եօք. |
| Ատամն, | ան. | մամբ. | անց. | ամբք. |
| Զօրութիւն, | թեան. | թեամբ. | թեանց. | թեամբք. |
| Անձն, | ին. | ամբ. | անց. | ամբք. |
| Վարձ, | ու. | ու. | ուց. | ուք. |
| Մանր, | ու. | ումբ. | ունց. | ումբք. |
| Եղջիւր, | եր. | երբ. | աց. | երբք. |
| Արկղ, | եղ. | եղբ. | աց. | եղբք. |
| Հայկ, | կայ. | աւ. | | |
| Աթանագինէ, | եայ. | եաւ. | | |
| Այգեստանեայք, | | | եայց. | եօք. |
| Տէր, | տեառն. | ամբ. | անց. | ամբք. |
| Հայր, | հօր. | արբ. | արց. | արբք. |
| Քոյր, | քեռ. | երբ. | երց. | երբք. |
| Կին, | կնոջ. | ամբ. | անց. | ամբք. |
| Գիւղ, | գեղջ. | իւ. | ից. | օք. |
| Օր, | աւուր. | ուրբ. | ուրց. | ուրբք։ |

Յաղագս Միջական կոչեցեալ անուանց խօսե-ցեալ եմք ՚ի վերոյ համառօտիւք՝ Թէ զի՞նչ են նոքին, ո՞յք են, և ՚ի քանի՞ տեսակս բաժանին․ Այս աստանօր՝ յետ հոլովոյ անուանցն, ցուցանել կար-գաւ զնոցուն հոլովս, որքան ինչ են, և նախ՝ ըզ մասնականացն․ Ոմն, ոք, իմն և մի։

Յաղագս հոլովմանց Միջական անուանց։

## ՈՄՆ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Ոմն. | Ոմանք. |
| Ս. | Ուրումն. | Ոմանց. |
| Տ. | Ումեմն, յոմն. | Ոմանց, յոմանս. |
| Հ. | զՈմն. | զՈմանս. |
| Բ. | յՈւմեմնէ. | յՈմանց. |
| Պ. | զՈւմեմնէ. | զՈմանց. |
| Գ. | Ոմամբ. | Ոմամբք. |
| Պ. | զՈմամբ. | զՈմամբք. |
| Ն. | յՈւմեմն կամ յոմն։ | յՈմանս։ |

## ՈՔ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Ոք. | Ոմանք. |
| Ս. | Ուրուք. | Ոմանց. |
| Տ. | Ումեք, յոք. | Ոմանց, յոմանս. |
| Հ. | զՈք. | զՈմանս. |
| Բ. | յՈւմեքէ. | յՈմանց. |
| Պ. | զՈւմեքէ. | զՈմանց. |
| Գ. | Ոմամբ. | Ոմամբք. |
| Պ. | զՈմամբ. | զՈմամբք. |
| Ն. | յՈւմեք կամ յոք։ | յՈմանս։ |

## ԻՆ՞Չ

Եզակի.

Ո. Ինչ.
Ս. Իրիք.
Տ. Իմիք, յինչ.
Հ. զինչ.
Բ. յիմէքէ.
Պ. զիմէքէ.
Գ. Իւիք.
Պ. զիւիք.
Ն. յիմիք կամ յինչ։

## ՄԻՒՍ

Եզակի.

Ո. Միւս.
Ս. Միւսոյ.
Տ. Միւսոյ կամ միւսում, ՚ի միւս.
Հ. զՄիւս.
Բ. ՚ի Միւսմէ կամ ՚ի միւսոյ.
Պ. զՄիւսմէ կամ զմիւսոյ.
Գ. Միւսով.
Պ. զՄիւսով.
Ն. ՚ի Միւսում կամ ՚ի միւս։

Ըստ այսմ հոլովին. Իւրաքանչիւր, Երկաքանչիւր, ևն. որոց յոգնակին լինի ըստ երրորդ օրինակի անուանց, տե՛ս անդ։

Երկրորդ հարցականաց ո՞վ կամ ո՞, ո՞ր։

Եզակի.

| | | |
|---|---|---|
| Ո. | Ո՞վ կամ ո՞. | Ո՞յք. |
| Ս. | Ո՞յր. | Ո՞յց. |
| Տ. | Ում, առ ո՞վ կամ առ ո՞. | Ո՞յց կամ որոց. |
| Հ. | զՈ՞վ կամ զ՞. | զՈյս. |
| Բ. | յՈւմմէ՞. | |

Պ. զՈւմէ՛.
Գ. Իւ՛.
Պ. զԻւ՛.
Ն. յՈ՛ւմ կամ յո՛վ կամ յո՛։

## ՈՐ

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Ո՛ր. | Ո՛րք. |
| Ս. | Որո՞յ. | Որո՞ց. |
| Տ. | Որո՞ւմ կամ որո՞յ. | Որո՞ց, առ ո՞րս. |
| Հ. | զՈ՛ր. | զՈ՛րս. |
| Բ. | յՈրմէ՛. | յՈրո՞ց. |
| Պ. | զՈրմէ՛. | զՈրո՞ց. |
| Գ. | Որո՞վ. | Որո՞վք. |
| Պ. | զՈրո՞վ. | զՈրո՞վք. |
| Ն. | յՈրո՞ւմ կամ յո՞ր։ | յՈ՛րս։ |

## Երրորդ վերաբերականին Այսքան։

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Այսքան. | Այսքանիք. |
| Ս. | Այսքանոյ. | Այսքանեաց. |
| Տ. | Այսքանոյ, այսքան. | Այսքանեաց, այսքանս. |
| Հ. | զԱյսքան. | զԱյսքանս. |
| Բ. | յԱյսքանոյ. | յԱյսքանեաց. |
| Պ. | զԱյսքանոյ. | զԱյսքանեաց. |
| Գ. | Այսքանեաւ. | Այսքանեօք. |
| Պ. | զԱյսքանեաւ. | զԱյսքանեօք. |
| Ն. | յԱյսքան։ | յԱյսքանս։ |

Ըստ այսմ հոլովին և վերբերականքս. Այդքան, այնքան սոյնքան, դոյնքան, նոյնքան, որքան, ոյ կամ ւոյ, ւով կամ եաւ։ Իսկ Որպիսի, այսպիսի, այդպիսի, այնպիսի, սոյնպիսի, դոյնպիսի, նոյնպիսի հոլովին ըստ չորրորդ օրինակի անուանց, տե՛ս անդ։

## Չորրորդ հանրականին Ամենեքեան։

### Յոգնակի.

Ու. Ամենեքեան կամ ամենեքին.
Ս. Ամենեցունց կամ ամենեցուն.
Տ. Ամենեցունց, առ ամենեսեան կամ առ ամենեսին.
Հ. զԱմենեսեան կամ զամենեսին.
Բ. յԱմենեցունց կամ յամենեցուն.
Պ. զԱմենեցունց կամ զամենեցուն.
Գ. Ամենեքումբք.
Պ. վԱմենեքումբք.
Ն. յԱմենեսեան կամ յամենեսին.
Կ. ով Ամենեքեան կամ ով ամենեքին։

Այսպէս հոլովի և բառս Բոլորեքեան կամ բոլորեքին։

## Հինգերորդ բացարձակ թուականին Մի։

### Եզակի.

Ու. Մի
Ս. Միոյ կամ միոջ.
Տ. Միում կամ միոյ, 'ի մի.
Հ. զՄի.
Բ. 'ի Միոյ կամ 'ի միոջէ.
Պ. զՄիոյ կամ զմիոջէ.
Գ. Միով.
Պ. զՄիով.
Ն. 'ի Միում կամ 'ի մի կամ 'ի միոջ.
Կ. ով Մի։

Այսպէս հոլովին և բարդեալք սորին, Քսաննեմի, երեսուննեմի. ևն։

Երկու, երկուց, երկոքումբք։ Երեք, երից, երիւք։ Չորք, չորից, չորիւք։ Հինգ, հնգի, հնգիւ, հնգից, հնգօք կամ հնգիւք։ Վեց, վեցի, վեցիւ, վեցից, վեցիւք։ Եօթն, եօթան, եօթամբ, եօթանց, եօթանց, եօթամբք։ Ութ, ութի, ութիւ, ութից, ութիւք։

Ինն, ըննէ, ըննիւ, ինունք, ինունց կմ՝ ըննից, ըննիւք, կամ ինանց, ինամբք։ Տասն, տասին, տասամբ, տասունք, տասանց, տասամբք։ Մետասան, մետասանի, մետասանիւ, մետասանք, մետասանից, մետասանիւք։ Քսան, քսանի, քսանիւ, ից, իւք։ Երեսուն, նի, իւ, ից, իւք։ Հարիւր, ոյ, ով, ոց, ովք. կամ Հարիւր, ի, իւ, ից, օք։ Հազար, ի, աւ, րաց, օք. կամ Հազար, ի, իւ, ից, իւք։ Բիւր, ու, ու, ուց, ուք, կամ ոյ, ով, ոց, ովք. ևն։

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1. | Առաջներորդ, | ի, | աւ. | աց, | օք։ |
| | Երկրորդ, | ի, | աւ. | աց, | օք։ |
| 2. | Միակ, | ի, | աւ. | աց, | օք։ |
| | Հնգեակ, | ի, | աւ. | աց, | օք։ |
| 3. | Երկպատիկ, | ի, | աւ. | աց, | օք։ |
| | Քառապատիկ, | ի, | աւ. | աց, | օք։ |
| 4. | Նախկին, | ոյ, | ով. | ոց, | ովք։ |
| | Առաջին, | ոյ, | ով. | ոց, | ովք։ |
| 5. | Երկոքեան, | ցուն կամ ցունց, ումբ կամ ումբք։ | | | |
| | կամ Երկոքին | | | | |

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

### Յաղագս Դերանուանց։

Դերանունն, որ ըստ Ռուսաց կոչի մեստօիմէնիէ (мѣстоименіе), է մասն բանի՝ որ 'ի խօսակցութեան վարի 'ի տեղի անուան իրիք՝ առ որոշեալ դէմս վերաբերելով, և կամ ցուցանէ զստացուած ինչ նոյնին։ Դերանուանք ըստ նշանակութեան իւրեանց բաժանին 'ի հինգ տեսակս, որք են. Էական, Ցուցական, Ստացական, Յարաբերական և Դիմորոշական։

1. Անձական դերանունն, որ ըստ Ռուսաց լիչնօէ մէս-տօիմէնիէ (личное), է՝ որ դիմաւ իւրով ուղղակի նշանակէ զանձն կամ զիր, որպիսի են. Ես, դու, ինքն, իւր, միմեանց, իրերաց։

2. Ցուցական դերանունն՝ որ ըստ Ռուսաց ուկազա-տէլնօէ (указательное), է՝ որ ցուցանէ զանձն կմ՝ զիր յերրորդում դիմի կարգաւ իւր. զի զոր մօտ է երկու խօսողին, կոչէ՝ սա, այս, սոյն. զոր մերձ է լսողին՝ դա, այդ, դոյն. և զոր հեռի է յերկոցունցն՝ նա, այն, նոյն։

3. Ստացական դերանունն՝ որ ըստ Ռուսաց պրի-տեաժատէլնօէ (притяжательное), է՝ որ նշանակէ զստացուած. ր՝ զիւր իւրաքանչիւր դիմի. ո՛, իմ, մեր, իմային, իմոյին, մերային, մերոյին, քո, ձեր, քոյին, ձերային, ձերոյին, իւր, իւրային, իւրեանցային, իւրոյին. ևսև սորայ, դորայ, նորայ, սոցայ, դոցայ, նոցայ։

4. Յարաբերական դերանունն, որ ըստ Ռուսաց օտնօսիտէլնօէ (относительное), է՝ որ ՚ի կարգս բանի դնի ՚ի տեղի բառի՝ եղելոյ յայլում նախադասութեան. և են բառքս՝ որ և ո։

5. Դիմորոշականքն են երեքին տառքս ս. դ. ն. որք արմատ գոլով դիմաւոր դերանուանց՝ որոշեն զդէմս խօսողաց։

## Յաղագս Պարագայից դերանուանց։

Պարագայք դերանուանց են զանազան որպիսութիւնք նոցին՝ զորս մտածեմք ՚ի դերանուանս՝ քննելով զգործածութիւն և զկազմութիւն նոցին, և թուին հինգ. Տեսակ, Դէմք, Թիւ, Հոլով և Հոլովմունք։

1. Տեսակ դերանուանց են երկու. Նախատիպ և Ածանցական։ Նախատիպ են՝ որ չունին ՚ի վերջոյ զանազան մասնիկ ինչ. ո՛, իմ, քո, մեր, ձեր, սոյն,

իւր, ինքն, սորա, դորա, նորա. ևն: Իսկ Ածանցական են՝ որ 'ի վերջոյ ունին զաննշան մասնիկս ային կամ ոյին. զօ, Մերային, իմային, ձերոյին իւրոյին. ևն:

2. Դէմք դերանուանց՝ որք ըստ Ռուսաց ասին լիցէ (лицы), են յարաբերութիւնք որոշեալ անձանց, և են երեք. առաջին, երկրորդ և երրորդ:

Առաջին դէմքն՝ ը̄ Ռուսաց պէրվօէ լիցօ (первое лицо), է այն՝ յորմէ է բանն կամ որ խօսի. որգոն. Ես, մեք:

Երկրորդ դէմքն՝ ը̄ Ռուսաց վտօրօէ լիցօ (второе лицо), է այն՝ առ որ է բանն. որգոն. Դու, դուք:

Երրորդ դէմքն՝ ը̄ Ռուսաց տրէտիէ լիցօ (третіе лицо), է այն՝ զորմէ է բանն, զօ. Նա, ինքն, իւր:

3. Թիւք դերանուանց են երկու՝ Եզական և Յոգնական: Եզականն է, որ զմի իր դիմաւոր նշանակէ, զօ. Ես, իմ, մեր, ձեր. ևն: Յոգնականն է, որ բազում դիմաւոր իրս նշանակէ, զօ. Մեք, դուք. ևն:

4. Հոլով դերանուանց է պէսպէս փոփոխումն կազմութե̄ն և նշանակութե̄ն նոյին յերկոսին թիւս որպէս և անուանցն, և են տասն. Ուղ″ դու. Սեռ″ քո. Տրակ″ քեզ. ևն:

5. Հոլովմունք դերանուանց են պէսպիսութիւնք դասակարգութեանց նոցա 'ի պատճառս այլևայլ վերջաւորութե̄նց Սեռ″ և Գործ″ հոլովաց նոցին. որպէս տեսանի 'ի ստորև:

Հոլովմունք Դիմական դերանուանցս. Ես, Դու, Ինքն, Իւր, Միմեանց, Իրերաց։

## ԵՍ (Я).

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Ես. | Մեք. |
| Ս. | Իմ. | Մեր. |
| Տ. | Ինձ, յիս, ցիս. | Մեզ, 'ի մեզ. |
| Հ. | զիս. | զՄեզ. |
| Բ. | յինէն. | 'ի Մէնջ. |
| Պ. | զինէն. | զՄէնջ. |
| Գ. | Ինեւ. | Մեօք. |
| Պ. | զինեւ. | զՄեօք. |
| Ն. | յիս։ | 'ի Մեզ։ |

## ԴՈՒ (ТЫ).

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Դու. | Դուք. |
| Ս. | Քո. | Ձեր. |
| Տ. | Քեզ, 'ի Քեզ. | Ձեզ, 'ի ձեզ. |
| Հ. | զՔեզ. | զՁեզ. |
| Բ. | 'ի Քէն. | 'ի Ձէնջ. |
| Պ. | զՔէն. | զՁէնջ. |
| Գ. | Քեւ. | Ձեօք. |
| Պ. | զՔեւ. | զՁեօք. |
| Ն. | 'ի Քեզ. | 'ի Ձեզ. |
| Կ. | ով Դու։ | ով Դուք։ |

## ԻՆՔՆ (САМЪ).

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Ինքն. | Ինքեանք. |
| Ս. | Ինքեան. | Ինքեանց. |
| Տ. | Ինքեան, յինքն. | Ինքեանց, յինքեանս. |

| | | |
|---|---|---|
| Հ. | զինքն. | զինքեանս. |
| Բ. | յինքենէ. | յինքեանց. |
| Պ. | զինքենէ. | զինքեանց. |
| Գ. | ինքեամբ. | ինքեամբք. |
| Պ. | զինքեամբ. | զինքեամբք. |
| Ն. | յինքեան կամ յինքն։ | յինքեանս։ |

## ԻՒՐ (СЕБЯ).

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | (ոչ ունի). | իւրեանք. |
| Ս. | իւր կամ իւրեան. | իւրեանց. |
| Տ. | իւր կամ իւրեան, առ իւր. | իւրեանց, ընդ իւրեանս. |
| Հ. | (ոչ ունի) | (ոչ ունի) |
| Բ. | յիւրմէ. | յիւրեանց. |
| Պ. | զիւրմէ. | զիւրեանց. |
| Գ. | իւրեւ կամ իւրեամբ կամ իւրեաւ. | իւրեամբք. |
| Պ. | զիւրեւ կամ զիւրեամբ կամ զիւրեաւ. | զիւրեամբք. |
| Ն. | յիւր կամ յիւրեան։ | յիւրեանս։ |

## ՄԻՄԵԱՆՑ և ԻՐԵՐԱՑ.

| | Յոգնակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ս. | Մ՚իմեանց. | Իրերաց. |
| Տ. | Մ՚իմեանց, առ միմեանս. | Իրերաց, ցիրեարս. |
| Հ. | զՄ՚իմեանս. | զիրեարս. |
| Բ. | ՚ի Մ՚իմեանց. | յիրերաց. |
| Պ. | զՄ՚իմեանց. | զիրերաց. |
| Գ. | Մ՚իմեամբք. | Իրերօք. |
| Պ. | զՄ՚իմեամբք. | զիրերօք. |
| Ն. | ՚ի Մ՚իմեանս։ | յիրեարս։ |

Հոլովումն Ցուցական դերանուանցս Նա, Նոյն, Այն, ևն։

## ՆԱ (ОНЪ).

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | ʻՆա. | ʻՆոքա կամ նոքին. |
| Ս. | ʻՆորա. | ʻՆոցա կամ նոցուն կամ նոցունց. |
| Տ. | ʻՆմա, ’ի նա. | ʻՆոցա, ’ի նոսա, ցնոսա. |
| Հ. | զʻՆա. | զʻՆոսա կամ զնոսին. |
| Բ. | ’իʻՆմանէ. | ’ի ʻՆոցանէ կամ ’ի նոցունց. |
| Պ. | զʻՆմանէ. | զʻՆոցանէ կամ զնոցունց. |
| Գ. | ʻՆովաւ. | ʻՆոքօք կամ նոքիմբք. |
| Պ. | զʻՆովաւ. | զʻՆոքօք կամ զնոքիմբք. |
| Ն. | ’իʻՆմա կամ ’ի նմին կամ ’ի նա։ | ’իʻՆոսա կամ ’ի նոսին։ |

Այսպէս հոլովին և սոքին. Սա, Դա, ևն։

## ՆՈՅՆ (ОНЫЙ).

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | ʻՆոյն. | ʻՆոյնք. |
| Ս. | ʻՆորին. | ʻՆոցին. |
| Տ. | ʻՆմին, ’ի նոյն. | ʻՆոցին, ’ի նոյնս. |
| Հ. | զʻՆոյն. | զʻՆոյնս. |
| Բ. Պ. | (ոչ ունի) | (ոչ ունի) |
| Գ. | ʻՆովիմբ կամ նովին. | ʻՆովիմբք. |
| Պ. | զʻՆովիմբ կամ զնովին. | զʻՆովիմբք. |
| Ն. | ’ի ʻՆոյն։ | ’ի ʻՆոյնս։ |

Այսպէս հոլովին և սոքին. Սոյն, սորին, Դոյն, դորին, ևն։

## ԱՅՆ (ТОТЪ).

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Այն. | Այնոքիկ կամ այնք. |
| Ս. | Այնր կամ այնորիկ. | Այնոցիկ կամ այնց. |

| | | |
|---|---|---|
| Տ. | Այնմ կամ այնմիկ, առ այն. | Այնոցիկ կամ այնց, առ այնոսիկ. |
| Հ. | զԱյն. | զԱյնոսիկ կամ զայնս. |
| Բ. | յԱյնմանէ. | յԱյնցանէ կամ յայնց կամ յայնոսիկ. |
| Պ. | զԱյնմանէ. | զԱյնցանէ կամ զայնց կամ զայնոսիկ. |
| Գ. | Այնու կամ այնուիկ. | Այնոքիւք կամ այնոքիմբք. |
| Պ. | զԱյնու կամ զայնուիկ. | զԱյնոքիւք կամ զայնոքիմբք. |
| Ն. | յԱյնմ կամ յայնմիկ կամ յայն։ | յԱյնոսիկ կամ յայնս։ |

Այսպէս հոլովին. Այս, այսր. այդ, այդր. եւն։

Հոլովմունք Ստացական դերանուանց. Իմ, քոյ, նորա, նորայն։

## ԻՄ (МОЙ).

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Իմ. | Իմք. |
| Ս. | Իմոյ. | Իմոց. |
| Տ. | Իմոյ կամ իմում, առ իմ. | Իմոց, առ իմս. |
| Հ. | զԻմ. | զԻմս. |
| Բ. | յԻմմէ կամ յիմոյ. | յԻմոց. |
| Պ. | զԻմմէ կամ զիմոյ. | զԻմոց. |
| Գ. | Իմով. | Իմովք. |
| Պ. | զԻմով. | զԻմովք. |
| Ն. | յԻմում կամ յիմ. | յԻմս. |
| Կ. | ով Իմ։ | (ոչ է ՚ի կիր։) |

## ՔՈՅ (ТВОЙ).

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Քոյ. | Քոյք. |
| Ս. | Քոյոյ կամ քոյ. | Քոյոց կամ քոց. |

| | | |
|---|---|---|
| Տ. | Քում կամ քոյոյ, 'ի քոյ: | Քոյոց կամ քոց, 'ի քոյս. |
| Հ. | զՔոյ. | զՔոյս. |
| Բ. | 'ի Քումմէ կամ 'ի քոյոյ. | 'ի Քոյոց կամ 'ի քոց. |
| Պ. | զՔումմէ կամ զքոյոյ. | զՔոյոց կամ զքոց. |
| Գ. | Քոյով կամ քով. | Քոյովք կամ քովք. |
| Պ. | զՔոյով կամ զքով. | զՔոյովք կամ զքովք. |
| Ն. | 'ի Քում կամ 'ի քոյ: | 'ի Քոյս: |

Նմանապէս հոլովին. Մեր, ձեր, իւր. եւն:

## ՆՈՐԱ (СВОЙ).

| | Եզակ. | Յոգնակ. |
|---|---|---|
| Ո. | Նորա կամ Նորայն. | Նորայք. |
| Ս. | Նորայոյ. | Նորայոց կամ Նորայց. |
| Տ. | Նորայոյ կամ Նորայում, 'ի Նորայն. | Նորայոց, 'ի Նորայս. |
| Հ. | զՆորայն. | զՆորայս. |
| Բ. | 'ի Նորայոյ կամ 'ի Նորայնէ. | 'ի Նորայոց կամ 'ի Նորայից. |
| Պ. | զՆորայոյ կամ զՆորայնէ. | զՆորայոց կամ զՆորայից. |
| Գ. | Նորայով. | Նորայովք կամ Նորայօք. |
| Պ. | զՆորայով. | զՆորայովք կամ զՆորայօք. |
| Ն. | 'ի Նորայնում կամ 'ի Նորայն: | 'ի Նորայս: |

Նմանապէս հոլովին. Սորա, Դորա. եւն:

## ՆՈՐԱՅԻՆ:

| | Եզակ. | Յոգնակ. |
|---|---|---|
| Ո. | Նորային. | Նորայինք. |
| Ս. | Նորայնոյ. | Նորայնոց. |
| Տ. | Նորայնոյ կամ Նորայնում, 'ի Նորային. | Նորայնոց, 'ի Նորայինս. |
| Հ. | զՆորային. | զՆորայինս. |
| Բ. | 'ի Նորայնոյ. | 'ի Նորայնոց. |
| Պ. | զՆորայնոյ. | զՆորայնոց. |
| Գ. | Նորայնով. | Նորայնովք կամ Նորայնօք. |

Պ. զնորայնով. զնորայնովք կամ զնորայնօք.
Ն. ՚ի նորայն կամ ՚ի նո-րայնում։ ՚ի նորայնս։

Ըստ այսմ հոլովին և սոքին. Նոցային, սորային, սոցային, դորային, դոցային, իմային, քոյային, իւրային, մերային, ձերային։ Իսկ Մերոյին, ձերոյին, իւրոյին, քոյին, իմոյին, նախդրաւ միայն հոլովին։

Հոլովումն յարաբերական դերանուանն որ։

## ՈՐ (КОТОРЫЙ, ЧТО).

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Ո. | Որ կամ ո. | Որք. |
| Ս. | Որոյ կամ ոյր. | Որոց. |
| Տ. | Որում կամ ում, յոր. | Որոց, յորս. |
| Հ. | զՈր. | զՈրս. |
| Բ. | յՈրմէ. | յՈրոց. |
| Պ. | զՈրմէ. | զՈրոց. |
| Գ. | Որով. | Որովք. |
| Պ. | զՈրով. | զՈրովք. |
| Ն. | յՈրում կամ յոր կամ յում։ | յՈրս։ |

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ։

### Յաղագս Բայից։

Բայն՝ որ ըստ Ռուսաց (Глаголъ), է մասն բանի, որ ցուցանէ զառս կամ զլինելութիւնս իրաց հան-դերձ թուով, դիմաւ և ժամանակաւ. զօ, Հեղում, փոխիմ, գնամ, լինիմ. ևն։

Բայք ըստ նշանակութեանն բաժանին՝ յէական և յառքական։ Էականք (Вспомогательные) են՝ որք նշանակեն զլինել միայն իրին, և են չորեքին բայքս՝ Եղանիմ, Լինիմ, Եմ և Գոմ։ Իսկ առքականք են առ հասարակ միւս ամ բայք, որք նշանակեն զառնել ինչ կամ զկրել իրացն։ Իսկ ըստ խոնարհմանն առքականք բաժանին միայն 'ի կա-նոնաւորս և յանկանոնս։ Կանոնաւորք (Правильные) են, որ միակերպ և անպակաս ունին զխոնարհումն իւրաքանչիւր եղանակի, ժամանակի, թուոյ և դիմի։ Իսկ անկանոնք (Неправильные) են՝ որք 'ի խոնարհման ունին զայլևայլ տարբերութիւնս. զի ոմանք պա-կասեալ 'ի ժամանակս ինչ, յայլմէ բայէ լրանան, և կոչին պակասաւոր. ոպ են, Ուտեմ, ըմպեմ, Ճանաչեմ, ունիմ, երթամ, որոց կատարեալն լի-նի. կերայ, արբի, ծանեայ, կալայ, չոքայ. ոմանք խոտորեալ 'ի ժամանակս ինչ 'ի ձայնակցութէ սահմանականին՝ այլազգ ձևանան, և կոչին զարտու-ղիք. ոպ են, Առնեմ, դնեմ, լսեմ, տամ, մեղան-չեմ, յառնեմ, դամ, որոց կատարեալն լինի. արարի, եդի, լուայ, ետու, մեղայ, յարեայ, եկի. և ոմանք պակասին յա և յբ դէմսն և կոչին դիմա-զուրկք. ոպ են. Յաջողէ, լուսանայ, թուի, հարկէ. ևն։

## Յաղագս Պարագայից Բայից։

Պարագայք բայից են պէսպէս որպիսութիւնք մտածեալք 'ի նոսին ը̅ այլեւայլ կազմութեան նոցին. և են եւթն. Սեռ, Ձև, Տեսակ, Թիւ, Դէմք, Ժամանակ, Նշանակ, խոնարհմունք և Լծորդութիւնք։

1. Սեռք բայից, ը̅ Ռուսաց (Залоги), են որոշմունք նշ̃ ը̅ առից և ը̅ կրից. և են չորք. Ներգործական, Կրաւորական, Հասարակ և Չէզոքական։

Ներգործականք (Дѣйствительные) են՝ որք նշանակեն զգործողութիւն անցեալ 'ի ներգործողէ առ կրողն. զ̃օ, Այրեմ, վատնեմ. ևն։

Կրաւորականք (Страдательные) են, որք նշանակեն զկրելութիւն ինչ ընկալեալ յայլմէ ներգործողէ. զ̃օ, Այրիմ, վատնիմ. ևն։

Հասարակք են՝ որք անփոփոխ վերջաւորութբ̃ մե՛րթ նշանակեն զգործողութիւն առ կրող ինչ և մե՛րթ զկրելութիւն 'ի ներգործողէ. զ̃օ, Տանիմ, ծնանիմ. ևն։

Չեզոքականք, ը̅ Ռուսաց (Среднiе, взаимные и общiе глаголы) են՝ որք նշանակեն զգործողութի̃ միայն յինքեան 'ի գործողն, և ոչ իբր անցեալ 'ի ներգործողէն առ կրող ինչ. և են կրկին՝ ներգործակերպ և կրաւորակերպ կմ̃ ձայնակրական։

Ներգործակերպ չեզոքականք են՝ որք ը̅ ներգործական բայից խոնարհին. զ̃օ, Դիմեմ, գնամ, զբօսնում. ևն։

Ձայնակրականք են՝ որք ը̅ կրաւորական բայից խոնարհին. զ̃օ, Աշխատիմ, սնանիմ, փախչիմ. ևն։

2. Ձևք բայից են որոշմունք նշ̃ ը̅ պարզութե̃, ը̅ բարդութե̃ և ը̅ բաղադրութե̃. և են երեք. Պարզ. բարդ և բաղադրեալ։

Պարզն (Простые) է, որ կազմեալ գոլով 'ի պարզ անուանէ՝ զնշանակութիւն առից և կրից պարզապէս յայտ առնէ. զ°, Բերեմ, կիզեմ. ևն։

Բարդն (Сложные) է, որ կազմեալ գոլով 'ի բարդ անուանէ՝ զկրկին իմացուած առից կամ կրից 'ի մէջ բերէ. զ°, Ընծայաբերեմ, բոցակիզեմ. ևն։

Բաղադրեալն (Приставочные) է, որ կազմի 'ի բաղադրական անուանէ, կամ որ բաղկանայ բաղադրական մասնկամբք. զ°, Խորշոտեմ, անպատուեմ, տարամերժեմ, տգիտանամ. ևն։

3. Տեսակք բայից են որպիսութիւնք նց՝ նկատեալք ըստ նախնական և ըստ ածանցական նշանակութեան իւրեանց. և են երկու. Նախագաղափար և Անցողական։

Նախագաղափարք (Первообразные) են, որք չունելով զաննշան մասնիկ ինչ՝ նշանակեն միայն զառս գործողին. զ°, Ցանեմ, լամ. ևն։

Անցողականք (Производные) են՝ որք 'ի վերջոյ կցեալ ունելով զմի 'ի մասնկացս՝ ուցանեմ, ացուցանեմ, եցուցանեմ, նշանակեն ոչ միայն զներգործութիւն առնողին՝ այլև զգործել կրողին. զ°, Ցարուցանեմ, լացուցանեմ. ևն։

4. Թիւք բայից մտածին ըստ միութեան և ըստ բազմութեան գործողութեան նց. և են երկու. Եզական և Յոգնական։

Եզականն (Единственное) է, որ նշանակէ զգործողութիւն կամ զկրելութիւն միոյ անձին կամ իրի. զ°, Վառեմ, վառիմ. ևն։

Յոգնականն (Множественное) է, որ նշանակէ զգործողութիւնս կամ զկրելութիւնս բազում անձանց. զ°, Վառեմք, վառիմք. ևն։

5. Դէմք բայից (Лице) են, որք ցուցանեն զգոր-

ծողութիւնս լինել որոշեալ անձին. և են երեք. ո͞ր, խօսողն՝ լսողն և պատմեալն։

Առաջին դէմքն (Первое лице) ցուցանէ զգործողութի̅ այնր, յորմէ է բանն, ո͞ր խօսողին. զ͞օ, Տամ ետու. ե̃ւն։

Երկրորդ դէմքն (Второе лице) ցուցանէ զգործողութի̅ այնր, առ որ է բանն, ո͞ր լսողին. զ͞օ, Տաս, ետուր. ե̃ւն։

Երրորդ դէմքն (Третіе лице) ցուցանէ զգործողութի̅ այնր զորմէ է բանն, ո͞ր պատմելոյն. զ͞օ, Տայ, ետ. ե̃ւն։

6. Ժամանակք բայից (Времена глаголовъ) են երբն գործողութե̅ և կրելութե̅, զոր բայն փոփոխմամբ վերջաւորութե̅ իւրոյ ցուցանէ. և զի ա̅մ գործողութի̅ կա̂մ է, կմ̂ եղեալ է և կմ̂ լինելոց է. վ̅յ և ժամանակն ը̅հանրապս բաժանի յերիս, ՚ի ներկայ, յանցեալ և յապառնի. յորս անցեալն ունի զչորս աստիճանս, որք կոչին. անկատար, կատարեալ, յարակատար և գերակատար. և այնպս թիւ ժամանակաց դիմաւոր բայից լինի ը̅ ա̅մ վեց։ իսկ թէ զի՞նչ իցէ իւրաքանչիւրոյն նշանակութի̅, մեկնեսցուք համառօտիւք։

Ներկայն (Настоящее) է՝ յորում բայն նշանակէ զառս կմ̂ զկիրս յառաջիկայ կէտ ժամանակի, կմ̂ այժմ նորոգ սկսեալ. ո՛րգոն, Գրեմ, գրես, գրէ. ե̃ւն։

Անկատարն (Прошедшее неопредѣленное) է՝ յորում բայն նշանակէ զառս կմ̂ զկիրս արդէն սկսեալ. ո՛րգոն, Գրէի, գրէիր, գրէր. ե̃ւն։

Կատարեալն (Совершенное время) է՝ յորում բայն նշանակէ զառս կմ̂ զկիրս կատարեալ. ո՛րգոն, Գրեցի, գրեցեր, գրեաց. ե̃ւն։

Յարակատարն (Давнопрошедшее) է՝ յորում

բայն նշանակէ զգալս կամ զկիրս վճարեալ և ժամանակ ինչ ևս 'ի վերայ անցեալ. որգոն, Գրեալ եմ, ես, է. ևն։

Գերակատարն (Многократное) է՝ յորում բայն նշանակէ զգալս կամ զկիրս ոչ միայն վճարեալ, այլ և յետ վճարման բազում ժամանակ ևս 'ի վերայ անցեալ. որգոն, Գրեալ էի, էիր, էր. ևն։

Ապառնի ժամանակն (Будущее время) է, յորում բայն նշանակէ զգալս և զկիրս, իբր եղանելի, կամ իբր հանդերձեալ առ 'ի լինել. որգոն, Գրեցից, գրեսցես, գրեսցէ. ևն։

Դ. Եղանակք բայից (Наклоненія) են պէսպէս կերպք նշանակելոյ նոցա զգալս և զկիրս կամ զլինելութիւնս, և են չորս. Սահմանական, Հրամայական, Ստորադասական և Աներևոյթ։

Սահմանական եղանակն (Изъявительное наклоненіе) է, յորում բայքն արձակաբար և որոշակի նշանակեն զգալս կամ զկիրս՝ իբր հաստատելով. որգոն, Գրեմ, գնացի, տեսից. ևն. որով լինի պատմութիւն, խոստումն, ծանուցումն. ևն։

Հրամայական եղանակն (Повелительное наклоненіе) է, յորում բայքն ցուցանեն զգալս կամ զկիրս հրամայելով կամ արգելլով. որգոն, Արա, տուր, մի՛ առներ, մի՛ տար. ևն։

Ստորադասական եղանակն (Сослагательное или условное наклоненіе) է, յորում բայն նշանակէ զգալս կամ զկիրս ոչ արձակաբար, այլ իբր կախեալ 'ի ժամանակէ, կամ 'ի պատճառէ իմեքէ. զօ. իցէ թէ, եթէ լուիցես. ևն։

Աներևոյթ եղանակն (Неокончательное наклоненіе) է, յորում բայն նշանակէ միայն զգալս կամ

զկիրս՝ առանց որոշման ժամանակաց, դիմաց և թուոց. զօ, Փրկել, սիրել, լինել. ևն: Այս եղանակ բայի իբրև անուն հոլովի և հոլովեալքն կոչին դերբայք:

8. Խոնարհմունք բայից (Спряженія) են պէսպէս փոփոխութիւնք վերջաւորութեց մի և նոյն բայի, 'ի թիւս, 'ի դէմս և 'ի ժամանակս. որգոն, Գործեմ, գործես, գործէ, գործէիր, գործէին. ևն:

9. Լծորդութիւք բայից են որոշմունք նշ̃ ը̃ չորից յատուկ վերջաւորութեց սահմանական ներկայի նոցին. որք են՝ եմ, ամ, ում և իմ. զօ, Գործեմ, աղամ, թողում, հաշտիմ:

# ԽՈՆԱՐՀՄՈՒՆՔ ԷԱԿԱՆ ԲԱՅԻՑ։

Պակասաւոր էականս Եմ (Есть) խոնարհի այսպէս։

## Սահմանական եղանակի Ներկայ։

Եզակի։ Յոգնակի։

Եմ, ես, է. Եմք, էք, են։

Անկատար։

Էի, էիր, էր. Էաք, էիք, էին։

Կատարեալ։

Եղէ, եղեր, եղեւ. Եղաք, եղէք, եղեն։

Յարակատար։

Եղեալ եմ, ես, է. Եղեալ եմք, էք, են։

Գերակատար։

Եղեալ էի, էիր, էր. Եղեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Եղէց, եղիցիս, եղիցի. Եղիցուք, եղիջիք, եղիցին։

## Հրամայական եղանակի Ներկայ։

Լե՛ր, մի՛ լինիր. Եղերուք, մի՛ լինիք։

Ապառնի։

Եղիջիր, ցիս, ցի. Եղիցո՛ւք, ջիք, ցին։

## Ստորադասական եղանակի Ապառնի։

Իցեմ, իցես, իցէ. Իցեմք, իցէք, իցեն։

Անցեալ։

Եղեալ իցեմ, իցես, իցէ. Եղեալ իցեմք, իցէք, իցեն։

Աներեւոյթ եղանակ. Ել, ելոյ, ելով։

Եզակի. Յոգնակի.

Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Լեալ:
Ապառնի. Եղոց:

Իսկ հական բայս Գոլ խոնարհի յայսչափ ժամանակս միայն:

Գոմ, գոս, գոյ. Գոմք, գոյք, գոն: (Չիք. չէ՛ ոչ գոյ):
Գոյի, գոյիր, գոյր. Գոյաք, գոյիք, գոյին:
Գուցէ, գուցեն: Գոլ, գոլոյ, գոլով: Գոյօղ:

Լականս Եղանիմ խոնարհի այսչափ:

Սահմանական եղանակի Ներկայ:

Եղանիմ, նիս, նի. Եղանիմք, նիք, նին:

Անկատար:

Եղանէի, էիր, էր. Եղանէաք, էիք, էին:

Կատարեալ:

Եղէ, եղեր, եղև. Եղաք կամ եղեաք, եղէք, եղեն:

Յարակատար:

Եղեալ եմ, ես, է. Եղեալ եմք, էք, են:

Գերակատար:

Եղեալ էի, էիր, էր. Եղեալ էաք, էիք, էին:

Ապառնի:

Եղէց, ցիս, ցի. Եղիցուք, ջիք, ցին:

Հրամայական եղանակի Ներկայ:

Լե՛ր, մի՛ լինիր. Եղերո՛ւք, մի՛ լինիք:

Ապառնի:

Եղիջի՛ր, կամ ցի՛ս, ցի՛. Եղիցո՛ւք, ջի՛ք, ցի՛ն:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Եղիցիմ, ցիս, ցի. Եղիցիմք, ցիք, ցին:

Եզակի։ Յոգնակի։

Անցեալ։

Եղեալ իցեմ, իցես, իցէ. Եղեալ իցեմք, իցէք, իցեն։

Աներևոյթ եղանակ. Եղանիլ, եղանելոյ, եղանելով։

Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ, Եղեալ.

Ապառնի. Եղանելոց, եղանելի։

## ԼԻՆԻՄ (БЫВАЮ).

Սահմանական եղանակի Ներկայ։

Լինիմ, լինիս, լինի. Լինիմք, լինիք, լինին։

Անկատար։

Լինէի, էիր, նէր. Լինէաք, էիք, էին։

Կատարեալ։

Եղէ, եղեր, եղև. Եղաք, կամ եղեաք, եղէք, եղեն։

Յարակատար։

Եղեալ եմ, ես, է. Եղեալ եմք, էք, են։

Գերակատար.

Եղեալ էի, էիր, էր. Եղեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Լիցիմ, ցիս, ցի. Լիցուք, ջիք, կամ լինիջիք, ցին։

Հրամայական եղանակի Ներկայ։

Լե՛ր, մի՛ լինիր. Լերո՛ւք, մի՛ լինիք։

Ապառնի։

Լիջի՛ր կամ լինիջի՛ր և կամ լիցի՛ս, լիցի՛. Լիցո՛ւք, ջի՛ք, կամ լինիջի՛ք, լիցի՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Լինիցիմ, ցիս, ցի. Լինիցիմք, կամ լիցիմք, ցիք, ցին։

Եզակի։ Յոգնակի։

Ապառնի։

Լեալ լիցեմ, ցես, ցէ. Լեալ լիցեմք, ցէք, ցեն։
Աներեւոյթ եղանակ. Լինել, լինելոյ, լինելով. եւն։
Ընդունելութիւն. Ներկայ եւ Անցեալ, Լեալ։
Ապառնի. Լինելոց, լինելի։

Խոնարհմունք ներգործական բայից ըստ առաջին լծորդութեան։

## Օրինակ առաջին։

Ներգործական բայս ԳՈՐԾԵՄ (Дѣйствительный глаголъ ДѢЛАЮ).

Սահմանական եղանակի Ներկայ։

Գործեմ, ծես, է. Գործեմք, էք, են։

Անկատար։

Գործէի, էիր, էր. Գործէաք, էիք, էին։

Կատարեալ։

Գործեցի, ցեր, եաց. Գործեցաք, ցիք, ցին։

Յարակատար։

Գործեալ եմ, ես, է. Գործեալ եմք, էք, են։

Գերակատար։

Գործեալ էի, էիր, էր. Գործեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Գործեցից, ցես, ցէ. Գործեսցուք, ջիք, ցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Գործեա՛, մի՛ գործեր. Գործեցէ՛ք, մի՛ գործէք։

Ապառնի։

Գործեսջի՛ր, կամ ցե՛ս, ցէ. Գործեսցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն։

Եզակի. Յոգնակի.

Ստորադասական եղանակի Ապառնի։

Գործիցեմ, ցես, ցէ. Գործիցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Գործեալ իցեմ, իցես, իցէ. Գործեալ իցեմք, իցէք, իցեն։

Աներևոյթ եղանակ. Գործել, գործելոյ, գործելով։

Ընդունելութիւն. Ներկայ. Գործող։

Անցեալ. Գործեալ։ Ապառնի. Գործելի, գործելոց։

## Օրինակ կրաւորականին։

Սահմանական եղանակի Ներկայ։

Գործիմ, գործիս, գործի. Գործիմք, գործիք, գործին։

Անկատար։

Գործէի, էիր, էր. Գործէաք էիք, էին։

Կատարեալ։

Գործեցայ, ար, ցաւ. Գործեցաք, ցայք, ցան։

Յարակատար։

Գործեալ եմ, կամ գործեցեալ եմ, ես, է. Գործեալ եմք, կամ գործեցեալ եմք, էք, են։

Գերակատար։

Գործեալ էի, կամ գործեցեալ էի, էիր, էր. Գործեալ էաք, կամ գործեցեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Գործեցայց, ցիս, ցի. Գործեսցուք, ջիք կամ գործիջիք, գործեսցին։

Հրամայական եղանակի Ներկայ։

Գործեա՛ց, մի՛ գործիր. Գործեցարո՛ւք, մի՛ գործիք։

Ապառնի։

Գործեսջի՛ր, ցի՛ս, ցի՛. Գործեսցո՛ւք, ջի՛ք, կամ գործիջի՛ք, ցի՛ն։

Եզակի: Յոգնակի:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Գործիցիմ, ցիս, ցի. Գործիցիմք, ցիք. ցին:

Անցեալ:

Գործեալ կամ գործեցեալ իցեմ, իցես, իցէ. Գործեալ կամ գործեցեալ իցեմք, իցէք, իցեն:

Աներեւոյթ եղանակ. Գործել, գործելոյ, գործելով:

Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Գործեալ կամ գործեցեալ: Ապառնի. Գործելոց, գործելի:

Ըստ այսմ խոնարհին ներգործական բայքս. Ազատեմ, բժշկեմ, գանձեմ. ևն:

Այնպէս խոնարհին ներգործակերպ չէզոքական բայքս. Ամաչեմ, արշաւեմ, գոչեմ. ևն:

Ըստ կրաւորականի գործեմին խոնարհին և բազում ձայնակրական բայք. Զօ, Ապաւինիմ, սովորիմ, խաւարիմ. ևն:

Ըստ այսմ խոնարհին և քանի մի հասարակ բայք. Զօ, Դատիմ, խորհիմ. ևն:

## Օրինակ երկրորդ:

## ՀԱՏԱՆԵՄ (РѢЖУ).

Սահմանական եղանակի Ներկայ:

Հատանեմ, նես, նէ. Հատանեմք, նէք, նեն:

Անկատար:

Հատանէի, էիր, էր. Հատանէաք, նէիք, էին:

Կատարեալ:

Հատի, տեր, եհատ կամ հատ. Հատաք, տիք, տին:

Յարակատար:

Հատեալ եմ, ես, է. Հատեալ եմք, էք, են.

Գերակատար:

Հատեալ էի, էիր, էր. Հատեալ էաք, էիք, էին:

Ապառնի։

Հատից, ցես, ցէ. Հատցուք, ջիք, կամ հատանիջիք, ցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Հատ, մի՛ հատաներ. Հատէք, մի՛ հատանէք։

Ապառնի։

Հատջի՛ր, կամ հատանիջի՛ր, կամ ցե՛ս, ցէ. Հատցո՛ւք, ջի՛ք, կամ հատանիջի՛ք, ցե՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Հատանիցեմ, ցես, ցէ. Հատանիցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Հատեալ իցեմ, ցես, ցէ. Հատեալ իցեմք, ցէք, ցեն. Աներեւոյթ եղանակ. Հատանել, հատանելոյ. ևն։

Ընդունելութիւն. Ներկայ. Հատանող։ Անցեալ. Հատեալ։ Ապառնի. Հատանելոց։

## Օրինակ կրաւորականին։

Սահմանական եղանակի Ներկայ։

Հատանիմ, նիս, նի. Հատանիմք, նիք, նին։

Անկատար։

Հատանէի, էիր, էր. Հատանէաք, էիք, էին։

Կատարեալ։

Հատայ, տար, աւ. Հատաք, տայք, տան։

Յարակատար։

Հատեալ եմ, ես, է. Հատեալ եմք, էք, են։

Գերակատար։

Հատեալ էի, էիր, էր. Հատեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Հատայց, ցիս, ցի. Հատցուք, ջիք, կամ հատանիջիք, ցին։

Հրամայական եղանակի Ներկայ։

Հատի՛ր, մի՛ հատանիր. Հատարո՛ւք, մի՛ հատանի՛ք։

Ապառնի։

Հատջի՛ր կամ հատցի՛ս, ցի՛. Հատցո՛ւք, ջի՛ք, կամ հատանիջի՛ք, ցի՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Հատանիցիմ, ցիս, ցի. Հատանիցիմք, ցիք, ցին։

Անցեալ։

Հատեալ իցեմ, ցես, ցէ. Հատեալ իցեմք, իցէք, իցեն։

Աներևոյթ եղանակ. Հատանիլ, հատանելոյ. ևն։

Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Հատեալ կամ հատեցեալ։ Ապառնի. Հատանելի կամ հատանելոց։

Ըստ այսմ խոնարհին ներգործական բայք. Անիծանեմ, բեկանեմ, գտանեմ. ևն։

Ներգործակերպ չէզոքականք. Անցանեմ, ելանեմ, իջանեմ. ևն։

Ըստ կրաւորականին խոնարհին հասարակ բայք. Ծնանիմ, ուսանիմ, սկսանիմ. ևն։

## Օրինակ երրորդ։

### ԱՍԵՄ (ГОВОРЮ).

Սահմանական եղանակի Ներկայ։

Ասեմ, ասես, ասէ. Ասեմք, ասէք, ասեն։

Անկատար։

Ասէի, ասէիր, ասէր. Ասէաք, ասէիք, ասէին։

Կատարեալ։

Ասացի, ցեր, ասաց. Ասացաք, ցիք, ցին։

Յարակատար և Գերակատար։

Ասացեալ եմ, ես, է. Ասացեալ եմք, էք, են։ Ասացեալ էի, էիր, էր. Ասացեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Ուսուցից, ցես, ցէ· Ուսուսցուք, ջիք, ցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Ուսո՛, մի՛ ուսեր· Ուսուցէք, մի՛ ուսէք։

Ապառնի։

Ուսուսջի՛ր կամ ուսուսցե՛ս, ցէ· Ուսուսցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ուսիցեմ, ցես, ցէ· Ուսիցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Ուսուցեալ իցեմ, ցես, ցէ· Ուսուցեալ իցեմք, իցէք, իցեն։
Աներևոյթ եղանակ· Ուսել, ուսելոյ, ուսելով, յուսել։
Ընդունելութիւն· Ներկայ· Ուսող կամ ուսուցող։
Անցեալ· Ուսուցեալ։ Ապառնի· Ուսելոց։

## Օրինակ կրաւորականին։

Սահմանական եղանակի Ներկայ։

Ուսիմ, ուսիս, ուսի· Ուսիմք, ուսիք, ուսին։

Անկատար։

Ուսէի, էիր, էր· Ուսէաք, էիք, էին։

Կատարեալ։

Ուսուցայ, ցար, ցաւ· Ուսուցաք, ցայք, ցան։

Ապառնի։

Ուսուցայց, ցիս, ցի· Ուսուսցուք, ջիք, ցին։

Հրամայական եղանակի Ապառնի։

Ուսուսջի՛ր կամ ցի՛ս, ցի՛· Ուսուսցո՛ւք, ջի՛ք, ցի՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ուսիցիմ, ցիս, ցի· Ուսիցիմք, ցիք, ցին·
Աներևոյթ եղանակ· Ուսել, ուսելոյ, ուսելով։

Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Ասացեալ:
Ապառնի. Ասելի, կամ ասելոց:

Ընդ սովաւ լծորդին ներգործական բայքս. Գիտեմ, զանգիտեմ, մերկեմ, և չեզոքական բայս կարեմ:

## Օրինակ չորրորդ անցողական բայից

### Զօրացուցանեմ (Усиливаю).

Սահմանական եղանակի Ներկայ:

Զօրացուցանեմ, նես, նէ. Զօրացուցանեմք, նէք, նեն:

Անկատար:

Զօրացուցանէի, էիր, էր. Զօրացուցանէաք, էիք, էին:

Կատարեալ:

Զօրացուցի, ցեր, ցոյց. Զօրացուցաք, ցիք, ցին:

Յարակատար:

Զօրացուցեալ եմ, ես, է. Զօրացուցեալ եմք, էք, են:

Գերակատար:

Զօրացուցեալ էի, էիր, էր. Զօրացուցեալ էաք,էիք,էին:

Ապառնի:

Զօրացուցից, ցես, ցէ. Զօրացուսցուք, ջիք, կամ նիջիք, ցեն:

Հրամայական եղանակի Ներկայ:

Զօրացո՛, մի՛ ներ. Զօրացուցէ՛ք, մի՛ նէք.

Ապառնի:

Զօրացուսջի՛ր, կամ նիջի՛ր, ցե՛ս, ցէ՛. Զօրացուսցուք, ջի՛ք, կամ նիջի՛ք, ցե՛ն:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Զօրացուցանիցեմ, ցես, ցէ. Զօրացուցանիցեմք, ցէք, ցեն:

Անցեալ:

Զօրացուցեալ իցեմ, իցես, իցէ. Զօրացուցեալ իցեմք, իցէք, իցեն:

Աներևոյթ եղանակ. Զօրացուցանել, նելոյ, նելով։
Ընդունելութիւն. Ներկայ. Զօրացուցանող։ Անցեալ.
Զօրացուցեալ։ Ապառնի. Զօրացուցանելոց։

Սորա կրաւորականն ոչ 'ի գործածի, այլ փոխան նորա դնի ներգործակերպ չեզոքականն կամ ձայնակրականն, յորոց բղխին անցողականք. զօ, Զօրանամ, փոխանակ ասելոյ՝ զօրացուցանեմ։ Արդարանամ, արդարացուցանեմ. ևն։

Ընդ սմին լծորդին ամ Անցողական բայք՝ յանգեալք 'ի այուցանեմ և 'ի եցուցանեմ կամ յոկ 'ի ուցանեմ. որոց հրամայականն լինի՝ այո՛, եցո՛ և ո՛. զօ, Չևացուցանեմ, ապրեցուցանեմ, մատուցանեմ, ևն։ Ն.- ևս կորուսանեմ, ընկլուզանեմ, փլուզանեմ, ևն։

Խոնարհմունք Ներգործական բայից ըստ երկրորդ լծորդութե։

## Օրինակ առաջին։

### Ներգործական բայս Աղամ (Мѣлю).

Սահմանական եղանակի Ներկայ։

Աղամ, աղաս, աղայ. Աղամք, աղայք, աղան։

Անկատար։

Աղայի, աղայիր, աղայր. Աղայաք, աղայիք, աղային։

Կատարեալ։

Աղացի, ցեր, աց. Աղացաք, ցիք, ցին։

Յարակատար։

Աղացեալ եմ, ես, է. Աղացեալ եմք, էք, են։

Գերակատար։

Աղացեալ էի, էիր, էր. Աղացեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Աղացից, ցես, ցէ. Աղասցուք, ջիք, ցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Աղա՛. մի՛ աղար. Աղացէք, մի՛ աղայք։

Ապառնի։

Աղասջի՛ր, կամ ցե՛ս, ցէ. Աղասցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Աղայցեմ, ցես, ցէ. Աղայցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Աղացեալ իցեմ, իցես, իցէ. Աղացեալ իցեմք. իցէք. իցեն։
Աներեւոյթ եղանակ. Աղալ, աղալոյ, աղալով, յաղալ։
Ընդունելութիւն. Ներկայ. Աղացող։ Անցեալ. Աղացեալ։ Ապառնի. Աղալոց։

## Օրինակ կրաւորականին

Սահմանական եղանակի Ներկայ։

Աղացեալ լինիմ, նիս, նի. Աղացեալ լինիմք, նիք, նին։

Անկատար։

Աղացեալ լինէի, էիր, նէր. Աղացեալ լինէաք, էիք, էին։

Կատարեալ։

Աղացայ, ցար, ցաւ. Աղացաք, ցայք, ցան։

Յարակատար։

Աղացեալ եմ, ես, է. Աղացեալ եմք, էք, են։

Գերակատար։

Աղացեալ էի, էիր, էր. Աղացեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Աղացայց, ցիս, ցի. Աղասցուք, ջիք, ցին։

Հրամայական եղանակի Ներկայ։

Աղացիր. Աղացարուք։

Ապառնի։

Աղասջի՛ր, կամ ցի՛ս, ցի. Աղասցուք, ջի՛ք, ցի՛ն.

Ստորադասական եղանակի Ապառնի։

Աղացեալ լինիցիմ, ցիս, ցի. Աղացեալ լինիցիմք, ցիք, ցին։

Անցեալ։

Աղացեալ իցեմ, իցես, իցէ. Աղացեալ իցեմք, իցէք, իցեն։

Աներևոյթ եղանակ. Աղալ, աղալոյ, աղալով, յաղալ. կամ Աղացեալ լինել. ևն։

Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Աղացեալ։ Ապառնի. Աղալոց, կամ աղալի։

Այսպէս խոնարհին ներգործական բայքս։ Ամամ, զգամ, խոկամ. ևն։

Իբր Ներգործականք. Հաւատամ, Թանամ, բառնամ. ևն։

Չէզոքական բայքս. Դառնամ, դարձայ։ Անսամ, անսացի. կամ, կացի, կա՛ց, մի՛ կար։ Կեամ, կեաս, կեայ, կեցի, կեցից, կեա՛ց, մի՛ կեցցես, կեցցէք, մի՛ կեցջիք. ևն։

## Օրինակ երկրորդ։

### Ներգործական բայս Խոստանամ (Обѣщаю).

Սահմանական եղանակի Ներկայ։

Խոստանամ, նաս, նայ. Խոստանամք, նայք, նան։

Անկատար։

Խոստանայի, իր, նայր. Խոստանայաք, իք, ին։

Կատարեալ։

Խոստացայ, ցար, ցաւ. Խոստացաք, ցայք, ցան։

Յարակատար։

Խոստացեալ եմ, ես, է. Խոստացեալ եմք, էք, են։

Գերակատար։

Խոստացեալ էի, էիր, էր. Խոստացեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Խոստացայց, ցիս, ցի. Խոստասցուք, ջիք, ցին։

### Հրամայական եղանակի Ներկայ։

Խոստացի՛ր, մի՛ նար. Խոստացարո՛ւք, մի՛ նայք։

Ապառնի։

Խոստասջի՛ր, կամ ցի՛ս, ցի՛. Խոստասցո՛ւք, ջի՛ք, ցի՛ն։

### Ստորադասական եղանակի Ապառնի։

Խոստանայցեմ, ցես, ցէ. Խոստանայցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Խոստացեալ իցեմ, ցես, ցէ. Խոստացեալ իցեմք, ցէք, իցեն։

Աներևոյթ եղանակ. Խոստանալ, խոստանալոյ, ևն։

Ընդունելութիւն. Ներկայ. Խոստացող։ Անցեալ. Խոստացեալ։ Ապառնի. Խոստանալոց կամ խոստանալի։

Կրաւորական սորին բայ 'ի սահմանակի ներկայէն լինի ըստ ներգործականին։ Իսկ 'ի հարկաւոր տեղիս ձևանայ ևս էական բայիւ. Զօ, Խոստացեալ լինիմ, խոստացեալ լինէի, խոստացեալ եղէ. ևն։

Այնպէս խոնարհին ներգործական բայքս. Մուրանամ, յղանամ, իմանամ. ևն։ Չէզոքականք. Լ,աստանամ, բազմանամ, կարօտանամ. ևն։

Խոնարհմունք ներգործական բայից ըստ երրորդ լծորդութե՛ն։

## Օրինակ առաջին։

### Ներգործական բայս Թողում (Оставляю).

### Սահմանական եղանակի Ներկայ։

Թողում, ղուս, ղու. Թողումք, ղուք, ղուն։

Անկատար։

Թողուի, իր, ղոյր. Թողուաք, ղուիք, ղուին։

Կատարեալ։

Թողի, ղեր, եթող կամ թող. Թողաք, ղիք, ղին։

Յարակատար։

Թողեալ եմ, ես, է. Թողեալ եմք, էք, են։

Գերակատար։

Թողեալ էի, էիր, էր. Թողեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Թողից, ցես, ցէ. Թողցուք, ջիք, ցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Թո՛ղ, մի՛ թողուր. Թողէ՛ք, մի՛ թողուք։

Ապառնի։

Թողջի՛ր, կամ ցե՛ս, ցէ. Թողցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Թողուցում, ցուս, ցու. Թողուցումք, ցուք, ցուն։

Անցեալ։

Թողեալ իցեմ, իցես, իցէ. Թողեալ իցեմք, իցէք, իցեն։

Աներևոյթ եղանակ. Թողուլ, թողլոյ, թողլով։

Ընդունելութեան. Ներկայ. Թողող։ Անցեալ. Թողեալ։

Ապառնի. Թողլոց կամ թողլի։

## Օրինակ կրաւորականին։

Սահմանական եղանակի Ներկայ։

Թողանիմ, նիս, նի. Թողանիմք, նիք, նին. կամ ըստ ներգործականի։

Անկատար։

Թողուի, ուիր, ոյր. Թողուաք, ուիք, ուին։

Կատարեալ։

Թողայ, ղար, ղաւ. Թողաք, ղայք, ղան։

Յարակատար։

Թողեալ եմ, ես, է. Թողեալ եմք, էք, են։

Գերակատար։

Թողեալ էի, էիր, էր. Թողեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Թողայց, ցիս, ցի. Թողցուք, ջիք, ցին։

Հրամայական եղանակի Ներկայ։

Թողիր, մի Թողանիր. Թողարուք, մի Թողանիք։

Ապառնի։

Թողջիր, կամ Թողցիս, ցի. Թողցուք, ջի՛ք, ցին։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Թողուցում, ցուս, ցու. Թողուցումք, ցուք, ցուն. կամ էական բայիւ։

Անցեալ։

Թողեալ իցեմ, իցես, իցէ. Թողեալ իցեմք, իցէք, իցեն։
Աներևոյթ եղանակ. Թողանիլ, Թողանելոյ, Թողանելով, կամ Թողուլ. ևն։
Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Թողեալ։
Ապառնի. Թողլի կամ Թողլոց։
Ըստ այսմ խոնարհին ներգործական բայքս։ Առնում, առի, առ. արգելում, լի, արգե՛լ. զենում, նի, զեն. ևն։ Ըստ կրաւորականին խոնարհին չէզոքական բայքս. Զբօսնում, սայ, սիր. հեղձնում. յաւելում, լայ, լիր. ևն։

## Օրինակ երկրորդ։

### Ներգործական բայս Ընկենում (Бросаю).

Սահմանական եղանակի Ներկայ։

Ընկենում, նուս, նու. Ընկենումք, նուք, նուն։

Անցատար:

Ընկենուի, ուիր, ոյր. Ընկենուաք, ուիք, ուին:

Կատարեալ:

Ընկեցի, ցեր, կեց. Ընկեցաք, ցիք, ցին:

Յարակատար:

Ընկեցեալ եմ, ես, է. Ընկեցեալ եմք, էք, են:

Գերակատար:

Ընկեցեալ էի, էիր, էր. Ընկեցեալ էաք, էիք, էին:

Ապառնի:

Ընկեցից, ցես, ցէ. Ընկեսցուք, ջիք, ցեն:

Հրամայական եղանակի Ներկայ:

Ընկեա՛, մի՛ ընկենուր. Ընկեցէ՛ք, մի՛ ընկենուք:

Ապառնի:

Ընկեսջի՛ր, կամ ցե՛ս, ցէ. Ընկեսցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Ընկենուցում, ցուս, ցու. Ընկենուցումք, ցուք, ցուն:

Անցեալ:

Ընկեցեալ իցեմ, իցես, իցէ. Ընկեցեալ իցեմք, իցէք, իցեն:
Աներեւոյթ եղանակ. Ընկենուլ, ընկենլոյ, ընկենլով:
Ընդունելութիւն. Ներկայ. Ընկեցող: Անցեալ. Ընկեցեալ:
Ապառնի. Ընկենլոց:

## Օրինակ կրաւորականի:

Սահմանական եղանակի Ներկայ:

Ընկեցեալ լինիմ, նիս, նի. Ընկեցեալ լինիմք, նիք, նին:

Անցատար:

Ընկեցեալ լինէի, էիր, նէր. Ընկեցեալ լինէաք, էիք, էին:

Կատարեալ։

Ընկեցայ, ցար, ցաւ. Ընկեցաք, ցայք, ցան։

Յարակատար։

Ընկեցեալ եմ, ես, է. Ընկեցեալ եմք, էք, են։

Գերակատար։

Ընկեցեալ էի, էիր, էր. Ընկեցեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Ընկեցայց, ցիս, ցի. Ընկեսցուք, ջիք, ցին։

Հրամայական եղանակի Ներկայ։

Ընկեցեալ լե՛ր. Ընկեցարո՛ւք։

Ապառնի։

Ընկեսջի՛ր, կամ ցի՛ս, ցի. Ընկեսցո՛ւք, ջի՛ք, ցի՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ընկենուցում, ցուս, ցու. Ընկենուցումք, ցուք, ցուն. կամ Ընկեցեալ լինիմ, նիս, նի. Ընկեցեալ լինիմք, նիք, նին։

Անցեալ։

Ընկեցեալ իցեմ, իցես, իցէ. Ընկեցեալ իցեմք, իցէք, իցեն։

Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Ընկեցեալ։ Ապառնի. Ընկենլի կամ ընկենլոց։

Ընդ սոյին խոնարհին և ներգործական բայքս. Լնում, լցի, լի՛ց, մի՛ լնուր, լցէ՛ք, մի՛ լնուք։ Ընթեռնում, ընթերցայ, ցաւ, ընթերցեալ եմ, ընթերցի՛ր, մի՛ ընթեռնուր, րո՛ւք մի՛ նուք. Կրաւորականն. Ընթերցանիմ. ևն։

## ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆՔ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԻՑ։

Զարտուղի ներգործական բայս Առնեմ (Дѣлаю) խոնարհի այսպէս։

Սահմանական եղանակի Ներկայ։

Առնեմ, նես, նէ. Առնեմք, նէք, նեն։

Անկատար։

Առնէի, էիր, նէր. Առնէաք, էիք, էին։

Կատարեալ։

Արարի, րեր, րար. Արարաք, իք, ին։

Յարակատար։

Արարեալ եմ, ես, է. Արարեալ եմք, էք, են։

Գերակատար.

Արարեալ էի, էիր, էր. Արարեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Արարից, ցես, ցէ. Արասցուք, ջիք, կամ նիջիք, ցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Արա՛, մի՛ առներ. Արարէ՛ք, մի՛ առնէք։

Ապառնի։

Արասջի՛ր, կամ նիջի՛ր, կամ ցե՛ս, ցէ. Արասցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն։

Ստորադասական եղանակի Ներկայ։

Առնիցեմ, ցես, ցէ. Առնիցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Արարեալ իցեմ, ցես, ցէ. Արարեալ իցեմք, իցէք, իցեն։

Աներեւոյթ եղանակ. Առնել, առնելոյ, առնելով, յառնել։ Ընդունելութիւն. Ներկայ. Արարող կամ առնող։ Անցեալ. Արարեալ։ Ապառնի. Առնելոց։

### Օրինակ կրաւորականին։

Սահմանական եղանակի Ներկայ։

Առնիմ, նիս, նի. Առնիմք, նիք, նին։

Կատարեալ:

Արարայ, րար, րաւ. Արարաք, րայք, րան:

Ապառնի:

Արարայց, ցես, ցէ. Արասցուք, ջիք, ցեն:

Հրամայական եղանակի Ներկայ:

Մի առներ. Մի առնիք:

Ապառնի:

Արասջիր, կամ առնիջիր, կամ ցես, ցէ. Արասցուք, ջիք, ցեն:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Առնիցեմ, ցես, ցէ. Առնիցեմք. ցեք, ցեն:
Աներևոյթ եղանակ. Առնել, առնելոյ, յառնել:
Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Արարեալ կամ արարեցեալ: Ապառնի. Առնելի կամ առնելոց:
Իսկ Անցեալ ժամանակքն լինին ըստ ներգործականին:

Զարտուղի ներգործական բայս Գնեմ (Кладу) խոնարհի այսպէս:

Սահմանական եղանակի Ներկայ:

Գնեմ, գնես, գնէ. Գնեմք, գնէք, գնեն:

Անկատար:

Գնէի, էիր, էր. Գնէաք, էիք, էին:

Կատարեալ:

Եդի, եդեր, եդ. Եդաք, եդիք, եդին:

Յարակատար:

Եդեալ եմ, ես, է. Եդեալ եմք, էք, են:

Գերակատար:

Եդեալ էի, էիր, էր. Եդեալ էաք, էիք, էին:

Ապառնի։

Եդից, դիցես, ցէ· Դիցուք, ջիք, ցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Դի՛ր, մի՛ դներ· Դի՛ք, մի՛ դնէք։

Ապառնի։

Դիջի՛ր, կամ դիցե՛ս, ցէ· Դիցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Դնիցեմ, կամ դիցեմ, ցես, ցէ· Դիցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Եդեալ իցեմ, ցես, ցէ· Եդեալ իցեմք, ցէք, ցեն։
Աներեւոյթ եղանակ· Դնել, լոյ, լով, 'ի դնել։
Ընդունելութիւն· Ներկայ· Դնող։ Անցեալ· Եդեալ։
Ապառնի· Դնելոց, դնելի։

## Օրինակ կրաւորականին։

Սահմանական եղանակի Ներկայ։

Դնիմ, դնիս, դնի· Դնիմք, դնիք, դնին։

Անկատար։

Դնէի, էիր, էր· Դնէաք, էիք, էին։

Կատարեալ։

Եդայ, եդար, եդաւ· Եդաք, եդայք, եդան։

Ապառնի։

Եդայց, դիցիս, ցի· Դիցուք, ջիք, կամ դնիջիք, ցին։

Հրամայական եղանակի Ներկայ։

Եդեա՛լ լեր, մի՛ դնիր· Եդարուք, մի՛ դնիք։

Ապառնի։

Դիջի՛ր, կամ դիցի՛ս, դիցի· Դիցո՛ւք, դիջի՛ք, դիցի՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի:

Գնիցիմ, ցիս, ցի. Գնիցիմք, ցիք, ցին:
Աներևոյթ եղանակ. Գնել, գնելոյ, գնելով, 'ի գնել:
Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Գնեալ:
Ապառնի. Գնելի կամ գնելոց:
Իսկ մնացեալ ժամանակքն լինին ըստ ներգործականին:

Զարտուղի ներգործական բայս Լսեմ (Слышу).

Սահմանական եղանակի Ներկայ:

Լսեմ, լսես, լսէ. Լսեմք, լսէք, լսեն:
Անկատար:
Լսէի, էիր, էր. Լսէաք, էիք, էին:
Կատարեալ:
Լուայ, ար, աւ. Լուաք, այք, ան:
Յարակատար:
Լուեալ եմ, ես, է. Լուեալ եմք, էք, են:
Գերակատար:
Լուեալ էի, էիր, էր. Լուեալ էաք, էիք, էին:
Ապառնի:
Լուայց, լիցես, ցէ. Լուիցուք, ջիք, ցեն:

Հրամայական եղանակի Ներկայ:

Լո՛ւր, մի՛ լսեր. Լուարո՛ւք, մի՛ լսէք:
Ապառնի:
Լուիջի՛ր, կամ ցե՛ս, ցէ. Լուիցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն:

Ստորադասական եղանակի Ապառնի:

Լսիցեմ, կամ լուիցեմ, ես, ցէ. Լուիցեմք, ցէք, ցեն:

Անցեալ։

Լուեալ լիցեմ, լիցես, լիցէ. Լուեալ լիցեմք, ցէք, լիցեն։
Աներևոյթ եղանակ. Լսել, լսելոյ, լսելով, 'ի լսել։
Ընդունելութիւն. Ներկայ. Լսող։ Անցեալ. Լուեալ։
Ապառնի. Լսելոց, լսելի։

## Օրինակ կրաւորականի։

Սահմանական եղանակի Ներկայ։

Լսիմ, լսիս, լսի. Լսիմք, լսիք, լսին։

Անկատար։

Լսէի, էիր, էր, կամ լսիւր. Լսէաք, էիք, էին։

Ապառնի։

Լուիցիմ, ցիս, ցի. Լուիցիմք, ցիք, ցին։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Լսիցիմ, ցիս, ցի. Լսիցիմք, ցիք, ցին։
Աներևոյթ եղանակ. Լսիլ, լսելոյ, լսելով, 'ի լսիլ։
Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Լուեալ։
Ապառնի. Լսելի կամ լսելոց։ Իսկ մնացեալ ժամանակքն լինին ըստ ներգործականին, և էական բային։

## Զարտուղի ներգործական բայս Տամ (Даю).

Սահմանական եղանակի Ներկայ։

Տամ, տաս, տայ. Տամք, տայք, տան։

Անկատար։

Տայի, տայիր, տայր. Տայաք, տայիք, տային։

Կատարեալ։

Ետու, ետուր, ետ. Տուաք, ետուք, ետուն։

Յարակատար և Գերակատար։

Տուեալ եմ, ես, է. Տուեալ եմք, էք, են։
Տուեալ էի, էիր, էր. Տուեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Տաց, ցես, ցէ. Տացուք, ջիք, ցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Տո՛ւր, մի՛ տար. Տո՛ւք, մի՛ տայք.

Ապառնի։

Տաջի՛ր, կամ ցե՛ս, ցէ. Տացո՛ւք, ջի՛ք, ցե՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Տայցեմ, ցես, ցէ. Տայցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Տուեալ իցեմ, իցես, իցէ. Տուեալ իցեմք, իցէք, իցեն։
Աներևոյթ եղանակ. Տալ, տալոյ, 'ի տալ։
Ընդունելութիւն. Ներկայ. Տուող։ Անցեալ. Տուեալ։
Ապառնի. Տալոց։

## Օրինակ կրաւորականին։

Սահմանական եղանակի Կատարեալ։

Տուայ, ար, աւ. Տուաք, այք, ան։

Ապառնի։

Տուեալ եղէց, տացիս, տացի. Տուեալ եղիցուք, ջիք, ցին։

Հրամայական եղանակի Ներկայ. (ոչ ունի)։

Ապառնի։

Տաջի՛ր, կամ տացի՛ս, տացի՛. Տացո՛ւք, ջի՛ք, ցի՛ն։
Աներևոյթ եղանակ. Տուեալ լինիլ, տուեալ լինելոյ. ևն։
Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Տուեալ կամ տուեցեալ։ Ապառնի. Տալի կամ տալոց։

Իսկ այլ ժամանակք ձևանան էական բայիւ, բաց Յարակատար և Գերակատար և Անցեալ ժամանակի ստորադասականին՝ որք լինին ըստ ներգործականին։

Զարտուղի չէզոքական բայս Մեղանչեմ (Грѣшу) խոնարհի այսպէս։

Սահմանական եղանակի Ներկայ։

Մեղանչեմ, ես, է. Մեղանչեմք, էք, են։

Անկատար։

Մեղանչէի, էիր, էր. Մեղանչէաք, էիք, էին։

Կատարեալ։

Մեղայ, ղար, ղաւ. Մեղաք, ղայք, ղան։

Յարակատար։

Մեղուցեալ եմ, ես, է. Մեղուցեալ եմք, էք, են։

Գերակատար։

Մեղուցեալ էի, էիր, էր. Մեղուցեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Մեղայց, մեղիցես, ցէ. Մեղիցուք, ջիք, ցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Մեղի՛ր, մի՛ մեղանչեր. Մեղարո՛ւք, մի՛ մեղանչէք։

Ապառնի։

Մեղիջի՛ր, կամ ցե՛ս, ցէ. Մեղիցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Մեղանչիցեմ, ցես, ցէ. Մեղանչիցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Մեղուցեալ իցեմ, ցես, ցէ. Մեղուցեալ իցեմք, իցէք, իցեն։

Աներևոյթ եղանակ. Մեղանչել, լոյ, լով։
Ընդունելութիւն. Ներկայ. Մեղանչող։ Անցեալ. Մեղուցեալ։ Ապառնի. Մեղանչելոց, մեղանչելի։

Զարտուղի չէզոքական բայս Յառնեմ (Встаю).

Սահմանական եղանակի Ներկայ։

Յառնեմ, ես, է. Յառնեմք, էք, են։

Անկատար։

Յառնէի, էիր, էր. Յառնէաք, էիք, էին։

Կատարեալ։

Յարեայ, եար, եաւ. Յարեաք, եայք, եան։

Յարակատար։

Յարուցեալ եմ, ես, է. Յարուցեալ եմք, էք, են։

Գերակատար։

Յարուցեալ էի, էիր, էր. Յարուցեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Յարեայց, իցես, իցէ. Յարիցուք, ջիք, ցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Արի՛, մի՛ յառներ. Արի՛ք, մի՛ յառնէք։

Ապառնի։

Յարիջի՛ր, կամ ցե՛ս, ցէ. Յարիցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Յառնիցեմ, կամ յարիցեմ, ցես, ցէ. Յարիցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Յարուցեալ իցեմ, իցես, ցէ. Յարուցեալ իցեմք, իցէք, իցեն։

Աներևոյթ եղանակ. Յառնել, յառնելոյ, յառնելով։

Ընդունելութիւն. Ներկայ. Յառնող: Անցեալ. Յարուցեալ: Ապառնի. Յառնելոց, կամ յառնելի:

## Զարտուղի չէզոքական բայս Գամ (Иду).

### Սահմանական եղանակի Ներկայ:

Գամ, գաս, գայ. Գամք, գայք, գան:

Անկատար:

Գայի, իր, գայր. Գայաք, իք, ին:

Կատարեալ:

Եկի, եկիր, եկն. Եկաք, եկիք, եկին:

Յարակատար:

Եկեալ եմ, ես, է. Եկեալ եմք, էք, են:

Գերակատար:

Եկեալ էի, էիր, էր. Եկեալ էաք, էիք. էին:

Ապառնի:

Եկից, եկեսցես, ցէ. Եկեսցուք, ջիք, ցեն:

### Հրամայական եղանակի Ներկայ:

Եկ, մի՛ գար. Եկա՛յք, մի՛ գայք:

Ապառնի:

Եկեսջի՛ր, կամ եկեսցե՛ս, ցէ. Եկեսցո՛ւք. ջի՛ք, ցե՛ն:

### Ստորադասական եղանակի Ապառնի:

Գայցեմ, ցես, ցէ. Գայցեմք, ցէք, ցեն:

Անցեալ:

Եկեալ իցեմ, իցես, իցէ. Եկեալ իցեմք, իցէք, իցեն:

Աներևոյթ եղանակ. Գալ, գալոյ, գալով, 'ի գալ:

Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Եկեալ:

Ապառնի. Գալոց, կամ գալի:

# ԽՈՆԱՐՀՄՈՒՆՔ ՊԱԿԱՍԱՒՈՐ ԲԱՅԻՑ։

Պակասաւոր ներգործական բայս Ուտեմ (Ѣмъ) խոնարհի այսպէս։

Սահմանական եղանակի Ներկայ։

Ուտեմ, ես, է. Ուտեմք, էք, են։

Անկատար։

Ուտէի, էիր, էր. Ուտէաք, էիք, էին։

Կատարեալ։

Կերայ, րար, րաւ. Կերաք, այք, րան։

Կամ այսպէս։

Կերի. րեր, եկեր, կամ կեր. Կերաք, րիք, րին։

Յարակատար։

Կերեալ եմ, ես, է. Կերեալ եմք, էք, են։

Գերակատար։

Կերեալ էի, էիր, էր. Կերեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Կերայց. կամ րից, իցես, իցէ. Կերիցուք, ջիք, կամ ուտի-ջիք, ցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Կեր, մի՛ ուտեր. Կերէ՛ք, կամ րա՛յք, մի՛ ուտէք։

Ապառնի։

Կերիջի՛ր, կամ ուտիջի՛ր, կամ կերիցե՛ս, ցէ. Կերիցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ուտիցեմ, ցես, ցէ. Ուտիցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Կերեալ իցեմ, իցես, իցէ. Կերեալ իցեմք, իցէք, իցեն։

Աներևոյթ եղանակ. Ուտել, ուտելոյ, ուտելով, յուտել։
Ընդունելութիւն. Ներկայ. Ուտող, կամ ուտօղ։ Անցեալ. Կերեալ։ Ապառնի. Ուտելոց։

## *Օրինակ կրաւորականին։*

Սահմանական եղանակի Ներկայ։

Ուտիմ, տիս, տի. Ուտիմք, տիք, տին։

Ապառնի։

Կերայց, իցիս, իցի. Կերիցուք, ջիք, կամ ուտիջիք, կերիցին։

Հրամայական եղանակի Ներկայ. (ո՛չ ունի)։

Ապառնի։

Կերիջիր, կամ ուտիջիր, կամ կերիցիս, ցի. Կերիցուք, ջիք, ցին։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ուտիցիմ, ցիս, ցի. Ուտիցիմք, ցիք, ցին։
Աներևոյթ եղանակ. Ուտիլ, ուտելոյ, ուտելով, յուտիլ։
Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Կերեալ։
Ապառնի. Ուտելի, կամ ուտելոց, կամ կերելի։ Իսկ այլ ժամանակքն լինին ըստ ներգործականին։

Պակասաւոր ներգործական բայս Ըմպեմ (Пью).

Սահմանական եղանակի Ներկայ։

Ըմպեմ, ես, է. Ըմպեմք, էք, են։

Անկատար։

Ըմպէի, էիր, էր. Ըմպէաք, էիք, էին։

Կատարեալ։

Արբի, եր, էարբ, կամ արբ. Արբաք, իք, ին։

Յարակատար։

Արբեալ եմ, ես, է. Արբեալ եմք, էք, են։

Գերակատար։

Արբեալ էի, էիր, էր. Արբեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Արբից, ցես, ցէ. Արբցուք, ջիք, կամ ըմպիջիք, արբցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Արբ, մի՛ ըմպեր. Արբէք, մի՛ ըմպէք։

Ապառնի։

Արբջի՛ր, կամ ցե՛ս, ցէ. Արբցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ըմպիցիմ, ցիս, ցի. Ըմպիցիմք, ցիք, ցին։

Անցեալ։

Արբեալ իցեմ, իցես, իցէ. Արբեալ իցեմք, ցէք, իցեն։
Աներեւոյթ եղանակ. Ըմպել, լոյ, լով։
Ընդունելութիւն. Ներկայ. Ըմպող։ Անցեալ. Արբեալ։
Ապառնի. Ըմպելոց, կամ ըմպելի։

## Օրինակ կրաւորականին։

Սահմանական եղանակի Կատարեալ։

Արբայ, արբար, արբաւ. Արբաք, արբայք, արբան։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ըմպիցիմ, ցիս, ցի. Ըմպիցիմք, ցիք, ցին։
Աներեւոյթ եղանակ. Ըմպիլ, լոյ, լով, յըմպիլ։
Ընդունելութիւն. Ներկայ և Անցեալ. Արբեալ։ Ապառնի. Ըմպելի, ըմպելոց։ Իսկ մնացեալ ժամանակքն բաց 'ի սահմանականի ներկայէն և յապառնւոյն և 'ի հրամայականէն լինին ըստ ներգործականին։ Իսկ ներկայն և ապառնին և հրամայականն ձևանան էական բայիւ, և երբեմն լծանան 'ի չէզոքական բայս՝ Արբենամ։

## Պակասաւոր հասարակ բայս Ճանաչեմ (Познаю).

### Սահմանական եղանակի Ներկայ:

Ճանաչեմ, չես, չէ. Ճանաչեմք, չէք, չեն:

### Անցաւոր:

Ճանաչէի, էիր, էր. Ճանաչէաք, էիք, էին:

### Կատարեալ ներգործական:

Ծանեայ, եար, եաւ. Ծանեաք, եայք, եան:

### Կատարեալ կրաւորական:

Ծանուցայ, ցար, ցաւ. Ծանուցաք, ցայք, ցան:

### Յարակատար:

Ծանուցեալ եմ, ես, է. Ծանուցեալ եմք, էք, են:

### Գերակատար:

Ծանուցեալ էի, էիր, էր. Ծանուցեալ էաք, էիք, էին:

### Ապառնի ներգործական:

Ծանեայց, իցես, իցէ. Ծանիցուք, ջիք, ցեն:

### Ապառնի կրաւորական:

Ծանուցայց, նիցիս, ցի. Ծանիցուք, ջիք, ցին:

### Հրամայական եղանակի Ներկայ:

Ծանի՛ր, մի՛ ճանաչեր. Ծաներուք, կամ ծանի՛ք, մի՛ ճանաչէք:

### Ապառնի:

Ծանիջի՛ր, կամ ցե՛ս, ցէ. Ծանիցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն:

### Ստորադասական եղանակի Ապառնի ներգործական:

Ծանիցեմ, կամ ճանաչիցեմ, ցես, ցէ. Ծանիցեմք, կամ ճանաչիցեմք, ցէք, ցեն:

Կրաւորական։

Ծանիցիմ, կամ ճանաչիցիմ, ցիս, ցի. Ծանիցիմք, կամ ճանաչիցիմք, ցիք, ցին։

Անցեալ։

Ծանուցեալ իցեմ, իցես, իցէ. Ծանուցեալ իցեմք, իցէք, իցեն։

Աներեւոյթ եղանակ. Ճանաչել, լոյ, լով։

Ընդունելութիւն. Ներկայ. Ճանաչող։ Անցեալ. Ծանուցեալ։ Ապառնի. Ճանաչելոց, կամ ճանաչելի։

Պակասաւոր հասարակ բայս Ունիմ (Имѣю).

Սահմանական եղանակի Ներկայ։

Ունիմ, ունիս, ունի. Ունիմք, ունիք, ունին։

Անկատար։

Ունէի, էիր, էր. Ունէաք, էիք, էին։

Կատարեալ։

Կալայ, լար, լաւ. Կալաք, լայք, լան։

Յարակատար։

Կալեալ եմ, ես, է. Կալեալ եմք, էք, են։

Գերակատար։

Կալեալ էի, էիր, էր. Կալեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Կալայց, ցիս, կամ ցես, ցի, կամ ցէ. Կալցուք, ջիք, կամ ունիջիք, կալցեն, կամ ցին։

Հրամայական եղանակի Ներկայ։

Կա՛լ, կամ կա՛, մի՛ ունիր. Կալարո՛ւք, կամ կալէ՛ք, մի՛ ունիք։

Ապառնի։

Կալջի՛ր, կամ ունիջի՛ր, կամ կալցի՛ս, ցի՛. Կալցո՛ւք, ջի՛ք, ցի՛ն։

Ստորադասական եղանակի Ապառնի։

Ունիցիմ, ցիս, ցի. Ունիցիմք, ցիք, ցին։

Անցեալ։

Կալեալ իցեմ, իցես, ցէ. Կալեալ իցեմք, իցէք, իցեն։

Աներևոյթ եղանակ. Ունիլ, լոյ, ևն։

Ընդունելութիւն. Ներկայ. Ունող։ Անցեալ. Կալեալ։

Ապառնի. Ունելոց, կամ ունելի։

Նոյնպէս խոնարհին և բաղադրեալք սորա. Ընդունիմ, վերընդունիմ, առընդունիմ, ակնունիմ։

Պակասաւոր չէզոքական բայս Երթամ (Хожу).

Սահմանական եղանակի Ներկայ։

Երթամ, թաս, թայ. Երթամք, թայք, թան։

Անկատար։

Երթայի, թայիր, թայր. Երթայաք, թայիք, թային։

Կատարեալ։

Չոքայ, ար, աւ. Չոքաք, այք, քան։

Յարակատար։

Երթեալ եմ, ես, է. Երթեալ եմք, էք, են։

Գերակատար։

Երթեալ էի, էիր, էր. Երթեալ էաք, էիք, էին։

Ապառնի։

Երթայց, իցես, իցէ. Երթիցուք, ջիք, ցեն։

Հրամայական եղանակի Ներկայ։

Ե՛րթ, մի՛ երթար. Երթա՛յք, մի՛ երթայք։

Ապառնի։

Երթիջիր, կամ ցե՛ս, ցէ. Երթիցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն։

### Ստորադասական եղանակի Ապառնի։

Երթայցեմ, կամ երթիցեմ, ցես, ցէ. Երթիցեմք, ցէք, ցեն։

Անցեալ։

Երթեալ իցեմ, ցես, ցէ. Երթեալ իցեմք, ցէք, ցեն։
Աներևոյթ եղանակ. Երթալ, լոյ, լով. ևն։
Ընդունելութիւն. Ներկայ. Երթող։ Անցեալ. Երթեալ։
Ապառնի. Երթալոց, կամ երթալի։

### Պակասաւոր բայս Պարտիմ (Быть должну).

Սահմ″. Ներկ″. Պարտիմ, տիս, տի. Պարտիմք, իք, ին։
Անկատար։ Պարտէի, էիր, էր, կամ տիւր. Պարտէաք, էիք, էին։
Ստորադասական։ Պարտիցիմ, ցիս, ցի. Պարտիցիմք, ցիք, ցին։
Աներևոյթ։ Պարտիլ։

### Պակասաւոր բայս Մարթիմ (Могу).

Սահմ″. Ներկ″. Մարթիմ, իս, ի. Մարթիմք, իք, ին։
Ապառնի յոգ″. Մարթասցուք, ջիք, ցին։
Ստոր″. Մարթիցիմ, ցիս, ցի. Մարթիցիմք, ցիք, ցին։
Իսկ յայլ ժամանակս լրանայ 'ի բայիցս. Մարթեմ և Մարթանամ։

### Պակասաւոր բայս Գո՛գ (Скажи) խոնարհի 'ի հրամայական եղանակն միայն այսպէս։

Հրամ″. Ներկ″. Գո՛գ, (պր ասա՛). Գոգէ՛ք, (պր ասացէ՛ք)։
Ապառնի։ Գոգջի՛ր, կամ ցե՛ս, ցէ՛. Գոգցո՛ւք, ջի՛ք, ցե՛ն։

# Խոնարհմունք Դիմազուրկ բայից։

Դիմազուրկ բայք (Безличные глаголы) սակաւ են. և այն ևս պատահականք. և են դիմազուրկ ըստ պատահման, ըստ պատշաճի, ը̅ ինքեան, կամ բայարձակ։

Դիմազուրկ ը̅ պատահման՝ է̅ կրկին օրինակաւ լծորդին։

## Օրինակ առաջին։

Սահման″. էզան″. Ներկ″. Յաջողէ։ Անցաւոր. Յաջողէր։ Կատարեալ. Յաջողեաց։ Յարակատար. Յաջողեալ է։ Գերակ″. Յաջողեալ էր։ Ապառնի. Յաջողեսցէ։ Հրամայակ″. Ապառնի. Յաջողեսցէ կամ յաջողեսցի։ Սորդ″. Ապառ″. Յաջողիցէ, կամ յաջողիցի։ Անցեալ. Յաջողեալ իցէ։ Ըստ այսմ են և սոքին. Ամպէ, անձրևէ, արժէ, ծագէ, հասանէ, ձիւնէ, մրրկէ, յաճախէ, սխալէ, վայելէ, ցաւէ, ցրտէ, ցօղէ, փայլատակէ. ևն։

## Օրինակ երկրորդ։

Սահման″. Ներկայ. Լուսանայ։ Անցաւոր. Լուսանայր։ Կատար″. Լուսացաւ։ Յարակ″. Լուսացեալ է։ Գերակատ″. Լուսացեալ էր։ Ապառնի. Լուսացի։ Ստորադաս″. Ապառնի. Լուսանայցէ։ Անցեալ. Լուսացեալ իցէ։ Ըստ այսմ և սոքին. Առաւօտանայ, գիշերանայ, երեկոյանայ, խաւարանայ, մթանայ, շատանայ. ևն։

Դիմազուրկ ը̅ պատշաճի են սոքին. Թուի, երևի,

կարծի, լի, տալ, պատահի, հանդիպի, համարի, պի-տի, ցաւի. ևն։

Սահմանական. Ներկայ. Թուի։ Անկատար. Թուէր։ Կատարեալ. Թուեցաւ։ Յարակատար. Թուեալ է։ Գեր՛. Թուեալ էր։ Ապառնի. Թուեսցի։ Հրամ՛. Ապառնի. Թուեսցի։ Ստորադ՛. Ապառնի. Թուիցի։ Անցեալ. Թուեալ իցէ։

Դիմաւորականք ը͞ ինքեան, կամ բայարձակ են սո-քին. Անկ է, արժան է, բարի է, բարւոք է, բաւ է, խնամ է, հարկ է, մարթ է, յայտ է, պատկան է, պատշաճ է, պարտ է, պիտոյ է, սովոր է, վայել է, վայե-լուչ է, փոյթ է, օգուտ է, օրէն է. ևն։

Սահման՛. Ներկ՛. Հարկ է։ Անկատար. Հարկ էր, Կատար՛. Հարկ եղև։ Ապառնի. Հարկ լիցի, կամ ե-ղիցի։ Ստորադ՛. Ապառնի. Հարկ իցէ, կամ լինիցի։ Ընդ սոսա դասին և յոգնական դիմաւորական բայքս. Պէտք են, կամք են, օրէնք են, ևն. և սոքա խո-նարհին այսպէս։ Սահմ՛. Ներկ՛. Պէտք են։ Անկատար. Պէտք էին։ Ապառնի. Պէտք եղիցին։ Ստոր՛. Ապառ-նի. Պէտք լիցին։

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ։

## Յաղագս Ընդունելութեան։

Ընդունելութիւն՝ ը͞ Ռուսաց (Причастіе), է մասն բանի, որ նշանակէ զիրս յառնելութե կամ ՚ի կրե-լութե, և մերթ զգաս կամ զկիրս ը͞ ժամանակաւ. որպէս, Այրօղ, այրեալ, այրելոց, այրելի։ Ընդու-նելութիւնք՝ ունելով զօրութիւն անուան, ունին միան-գամայն և զօրութիւն բայի. զի են իբր անուն ՚ի բայից բղխեալ ՚ի ձևուն հոլովից վերջաւորութեամբ՝

օղ, եալ, ի, լոյ. և միանգամայն ցուցանեն զայնպիսի առս և զկիրս, զորպիսի նշանակեն բայքն, յորոց բղխեն։

Պարագայք ընդունելութեանց են վեց. Սեռ, Ձև, Տեսակ, Ժամանակ, Թիւ և Հոլով։ Սեռն, Ձևն, Տեսակն և Ժամանակն ը̄ բայից, իսկ Թիւն և Հոլովն ըստ անուանց։

1. Սեռք ընդունելութեանց են չորք. ներգործական. փրկող. կրաւորական. գրեալ. չեզոքական. ընթացող. հասարակ. խօսող։

2. Ձևք ընդունելութեանց են երեք. պարզ. գործող. բարդ. հեռագործող. բաղադրեալ. ներգործող։

3. Տեսակ ընդունելութեանց են երկու. նախական. հնչող. և անցողական. հնչեցուցանող։

4. Ժամանակ ընդունելութեանց են երեք. Ներկայ՝ գրօղ. Անցեալ. գրեալ. Ապառնի՝ գրելի գրելոց։

5. Թիւք ընդունելութեանց են երկու. Եզական. ծագող, և Յոգնական. ծագողք։

6. Հոլովք են տասն ով և անուանց, Ուղ՛. Սեռ՛. ևն. որոց գիտելի է, զի որք ՚ի օղ յանգեն, հոլովին յեզականն ըստ ա̄ պատկերի, և ՚ի յոգնականն՝ ը̄ երկրորդի. զ, Ա. վատող, տողի, տողիւ, տողք, տողաց, ղօք. որք ՚ի եալ յանգին, հոլովին ըստ երրորդ պատկերի. զօրացեալ, լոյ, լով. և որք ՚ի լի յանգին, հոլովին ըստ չորրորդի. դ՛, գովելի, գովելւոյ, լեաւ. ևն։ Իսկ որք ՚ի լոց յանգին, ոչ հոլովին։

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ։

### Յաղագս Նախադրութեան։

Նախադրութիւն (Предлогъ) է մասն բանի, որ ՚ի յառաջ յանուանս, ևս և յայլ մասունս բանի,

ցուցանէ զպարագայս ինչ իրին. զոր անունն նշանակէ։

Նախադրութիւնք կրկին են. Հոլովակերտք և Հոլովառուք։

Հոլովակերտք են, որք յարեալ յանուանս, և յայլ հոլովական բառս՝ կազմեն պէսպէս հոլովս, և սոքա կոչին նախդիրք. և են 'ի, յ, 'ից, առ, առ'ի, ց, ընդ, զ. զօ, 'ի տան, յերկրէ, 'ի յերկնից, առ քեզ առ 'ի գնալ, ցնա, զնա։

Իսկ հոլովառուք են՝ որք առնուն զխնդիր 'ի պէսպէս հոլովս. ընդ որս են և նախդիրքս. առ, առ'ի, և ընդ. որք բազում անգամ խնդիր առեալ՝ վարին իբր հոլովառուք։

Արդ՝ 'ի հոլովառու նախադրութեանց ոմանք առնուն զսեռական. և են. Վասն, սակս, յաղագս, առ, փոխանակ, զօրէն, առանց, զկնի, զհետ, յետ, առաջի, ընդառաջ, յանդիման, հանդէպ, 'ի ներքոյ, արտաքոյ 'ի վերայ, 'ի մէջ, ընդդէմ, 'ի ձեռն, յայնկոյս, ընդ. և՛ն. զօ, Վասն անձին. առաջի Թագաւորին. արտաքոյ եկեղեցւոյ. և՛ն։

Ոմանք առնուն զերկրորդ հոլով տրական. և են. Ըստ, ընդ, մերձ, մօտ, առնթեր, կամ առ. զօ, Ըստ օրինին, առընթեր լերին. և՛ն։

Ոմանք զնախդրիւ տրական. Մերձ, մօտ, հուպ, մինչև. զօ, Մերձ յաղբիւրին. հուպ 'ի ճանապարհն, մինչև ցվախճան. և՛ն։

Ոմանք զհայցական. Իբրև, որպէս, 'ի վեր քան, առաւել քան. զօ, Իբրև զծառայ. ոպ զհայր. առաւել քան զարարածսն. և՛ն։

Ոմանք զբացառական. Մեկուսի, հեռի, դուրս, բայց. զօ, Մեկուսի յամբոխէն, հեռի 'ի չարաչէն. և՛ն։

Ոմանք զգործիական. Հանդերձ, ընդ, առ, յառաջ. զօ, Հանդերձ Մարեմաւ, ընդ հարճեօք. եւն։

Ոմանք զպատճառական. Շուրջ, շուրջանակի. զօ, Շուրջ զքաղաքաւն, շուրջանակի զնոքօք. եւն։

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ։

### Յաղագս Մակբայի։

Մակբայն՝ ըստ Ռուսաց (Нарѣчіе), է մասն բանի, որ զպարագայս կամ զեղանակս գործողութեան նշանակէ։

Մակբայք բազում են յոյժ ընդ 33 տեսակօք, զորս վասն համառօտութեան մարթ է վերածել ՚ի տասն և եթ։

1. Որականք (означающія качество, состояніе и положеніе), ընդ որովք կարեն պարունակիլ և սաստկականք, յայտնականք և ծածկականք, յօժարականք և բանադատականք, անպարտականք և ներհականք, ազդականք և անձնականք։ Վայելչապէս, խորհրդաբար, մարդկօրէն, ջրի, բարւոք, յոյժ, սաստիկ, երագ, յանկարծակի, հաղիւ, գաղտ, կամաւ, ակամայ, զուր, այլազգ, յունարէն, ինքնին. զօ, Վայելչապէս զարդարէ. գաղտ փախչի. ակամայ համաձայնի։

2. Քանականք (означающія количество), ընդ որով կարեն դասաւորիլ նուազականք և յաճախականք, զատականք և կրկնականք, ժողովականք և համայնականք, եւս և փոխարինականք. Այսչափ, այնչափ, սակաւ, ստէպ, միայն, ՚ի միասին, միաբերան. եւն. զօ, Այսչափ բարձրացաւ. ստէպ աղօթէր. միաբերան խօսէ։

3. Ժամանակական (означающія время). Այժմ, այսօր, հանապազ, երբեմն, առաւօտն. Եւն. զօ, Այժմ սկսանի. հանապազ չարչարի. առաւօտն տարակուսի։

4. Տեղական (означающія мѣсто). Աստ, անդ, ամենուր, այսր, այլուր. Եւն. զօ, Աստ դադարի. անդ պսակէ. այլուր դիմէ։

5. Դասական (означающія порядокъ или постепенность). Նախ, երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ. Եւն. զօ, Նախ պատրաստէ. երկրորդ եփէ. երրորդ ուտէ։

6. Հարցական (вопросительныя). Ընդէ՞ր, զիա՞րդ, ո՞ւր, ո՞րչափ, մինչև. Եւն. զօ, Ընդէ՞ր հպարտանաս. ո՞ւր հոլովես, մինչև մոռասցիր։

7. Ստորադասական (означающія утвержденіе). Այո՛, յիրաւի, արդարև, այսպէս, որպէս. ընդ որս դասին և նմանականք. զօ, Այո՛ խոստացաւ. արդարև յարեաւ. այսպէս վկայէր։

8. Բացասական (означающія отрицаніе), ընդ որում կարեն դասիլ և արգելականք, ես և դերբերդ-մականք. Ո՛չ, չ՚և, մինչչև, մի՛, մի՛ երբեք. զօ, Ո՛չ յօժարի. մինչչև խօսեցեալ էր. մի՛ երբեք կայցես։

9. Ցուցական (указательныя). Ահա՛, ահաւասիկ, աւանիկ. Եւն. զօ, Ահա՛ մերձենայ. ահաւասիկ կոչէ. աւանիկ եկն։

10. Նախընտրական (означающія напряженіе, усугубленіе). Մանաւանդ, առաւել. Եւն. զօ, Մանաւանդ խրատէ, քան թէ պատժէ. առաւել տրտմի, քան թէ ուրախանայ։

---

# ԳԼՈՒԽ ԽՕԹՆԵՐՈՐԴ

## Յաղագս Շաղկապի։

Շաղկապն՝ ըստ Ռուսաց (союзъ), է մասն բանի, որ կապէ և միաւորէ ընդ միմեանս զայլ մասունս բանի, նա և զնոյն իսկ զբանս։ Շաղկապք բազմատեսակք են։

1. Բաղհիւսական (соединительныя)․ Եւ, այլ և, նա և, պարզէալ, և՛, և այն․ ևն․ զօ, Եւ եղբարք որ Յակոբոս և Յովսէփ և Սիմոն, ևն։

2. Տրոհական (раздѣлительныя)․ Կամ, և կամ, եթէ․ ևն․ զօ, Ամենայն որ ոք ելթող տուն, կամ զեղբարս, կամ զքորս, կամ զհայր․ ևն։

3. Բացառողական (противословныя)․ Բայց, սակայն, այլ, բայց եթէ, միայն թէ, ջանի թէ․ ևն, Հոգիս յօժարէ, բայց մարմինս տկար․ ևն։

4. Անկատարական (уступительныя)․ Թէպէտ և, թէ և, թէ և թէ, ոչ եթէ, ոչ միայն․ ևն․ զօ, Ոսկի թէպէտ և անբուն է ձայնիւ․ ևն։

5. Նախընտրական (сравнительныя)․ Քան, քան թէ, քան եթէ․ ևն․ զօ, Կամիմ․․․ մեռանիլ, քան անկանիլ ՚ի ձեռս անօրինաց։

6. Առաւելական (увеличительныя)․ Առաւել ևս, ևս առաւել, մանաւանդ․ ևն․ զօ, Գործեսցուք զբարիս առ ամենեսեան, մանաւանդ առ ընտանիսն հաւատոյ։

7. Համեմատական (уподобительныя)․ Մինչ զի, մինչ, մինչև անգամ․ ևն․ զօ, Մինչև բառնաբաս անգամ խոնարհեցաւ ՚ի նոյն կեղծաւորութիւն։

8. Հարցական․ Գոնէ, գոնեա՛ գէթ․ ևն․ զօ, Գոնեա՛ արդ մերժեսցեն զպոռնկութիւն իւրեանց։

9․ Թէական (условные)․ Եթէ, թէ, ապա եթէ․ ևն․ զօ, Եթէ ամբարշտեցայց, վայ է ինձ․ ևն։

10․ Մեկնական (изъяснительные)․ Այսինքն, այսինքն է, այս է․ ևն․ զօ, Մերձ է բանն ՚ի բերան քո, այսինքն՝ բանն հաւատոյ զոր քարոզեմք։

11․ Յարացուցական (заключительные)․ Ըստ այսմ, ըստ որում, որպէս․ ևն․ զօ, Եւ ՚ի մեռեալս գտանին սիրելիք նորա․ որպէս Աբրահամ, Իսահակ և Յակովբ։

12․ Պատճառական (винословные)․ Զի, ջանզի, վասն զի, փոխանակ զի․ ևն․ զօ, Երանի է աչացդ, զի տեսանեն։

13․ Հետևողական (заключительные)․ Վասն այսորիկ, վասն որոյ, սակս որոյ, ուստի և, յաղագս այսորիկ․ ևն․ զօ, Վասն այսորիկ թողցէ այր զհայր իւր և զմայր։

14․ Մակաբերական․ Ապա, ապա ուրեմն․ զօ, Եթէ հուր առանց նիւթոյ շիջանի, ապա և ցանկութիւն ՚ի պահոց։

15․ Սկզբնաւորական՝ (начинательныя)․ Արդ, այլ արդ, իսկ․ զօ, Արդ յարեայց առ Տէր․ ևն։

16․ Թարմատար․ Թէ, եթէ, զի, բա, որ․ ևն․ զօ, Գրեալ է, թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ։

## ԳԼՈՒԽ ՈՒԹՆԵՐՈՐԴ։

### Յաղագս Միջարկութեան։

Միջարկութիւնք՝ ըստ Ռուսաց (Междометіе), յայտ առնեն զկիրս հոգւոյն, և են․

1․ Երանական (Ублажительныя)․ Երանի, երանի թէ, ևն․ զօ, Երանի՛ աղքատաց հոգւով։

2. Ըղձական, կմ՝ յօժարական (желательныя). Իցէ թէ, ո՜ւ. զօ, Իցէ՛ թէ յաւելից հայել. եւն։

3. Զարմացական (удивительныя). Ո՛վ, ո՜վ թէ, էաէէ. զօ, Ո՛ւ թէ՝ քանի՜ անչափ են խնամքն Քո՛ի։

4. Զարհուրական (означающія испугъ). Ո՜ւ, ո, ոհ ոհ. զօ, Ո՜ւ ողի ահ և դողումն եկեսցէ 'ի վերայ մեր. եւն։

5. Հառաչական (восклицательныя). Ո՜հ, ոհթէ, ո՜ւ. զօ, Ո՛հ մայր իմ՝ ընէ՞ր ծնար զիս. եւն։

6. Եղկական, կմ՝ ողբական (означающія печаль). Եղո՜ւկ, վա՜յ, վայ վայ, ոհ, ո՜ւ, էաէէ. զօ, Վա՜յ քեզ քորազին։

7. Աւաղական. Աւա՜ղ, վա՜յ, ոհ, ո՜ւ. զօ, Աւա՜ղ իւր այրորատեան գունդն. եւն։

8. Ցաւակցական. Ո, ոհ, վա՜յ եւն. զօ, Վա՜յ վա՜յ քաղաք մեծ, որում ամենեքին մեծացայք։

9. Կոչական (означающія зовъ). Ո՜ւ, ո. զօ, Ո՞վ որք զգեցեալ էք զգէնն Քրիստոսի եւն։

10. Բացականչական, կամ խրախտական. Ա՜յ, ո՜ւ. զօ, Ա՜յ դառնացեալ ծեր. եւն։

11. Ցորդորական. Ա՜զէ, հապա. զօ, Ա՛զէ՝ ածէք զմտաւ. եւն։

12. Խնդական (означающія радость). Վա՜շ, վաշ վաշ. զօ, Վա՜շ վա՜շ անձանց մերոց, զի. եւն։

13. Գովողական. Ո՜ւ, ո. զօ, Ո՛ մեծի շնորհացս. եւ այլն։

14. Հեգնական. Վա՜հ. զօ, Վա՜հ՝ որ քակէիր զտաճարն. եւն։

15. Երգիծական. Վա՜շ, վաշ վաշ. զօ, Վա՜շ նոցա անմտութեան։

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.

---

### Յաղագս համաձայնութեան մասանց բանի։

Համաձայնութիւք (Словосочиненіе) մասանց բանի են կապակցութիւք նոցա ընդ միմեանս առ 'ի կազմել զբան։

Այս կապակցութիւնք լինին ութն եղանակաւ՝ ըստ ութից մասանց բանի. որպէս է տեսանել 'ի ստորեւ։

### Յաղագս համաձայնութեան անուան ընդ անուան։

Գոյական անուանք երրակի համաձայնին ընդ գոյականաց։ Նախ՝ իբր բացայայտիչ, երկրորդ՝ իբր յատկացուցիչ, և երրորդ՝ իբր խնդիր։

1. Նախ՝ յորժամ հարկ լինի 'ի բանս գոյական անուն ինչ բացայայտել՝ թէ յի՞նչ միտս դնի, և կամ փոխանակ որոյ նշանակէ, յարեմք 'ի նոյն զայլ միւս եւս անուն գոյական՝ թուով և հոլովիւ համաձայն նմին առանց շաղկապի, և զայն կոչեմք բացայայտիչ. զօ, Որ շինեցեր զտուն քո զեկեղեցի իմաստութեան հօր Յս։ Ուր անունս զեկեղեցի՝ է բացայայտիչ անուանս զտուն քո։

Որդիք սրբոյ Յուսկանն Պապ և Աթանագինէս... մահ անձանց նիւթենից։ Յոհ արքայ մաքրեալ լիցի հոգի մեր, յատելութենէ, ՚ի Տախանաց, յագահութենէ. Եւն։ Ընթացուք այսուհետև ՚ի սբ շէրին, ՚ի Տար-գաւէտն առէՏ և յառաջ էալ։ Ամենայն օրէնք ՚ի մի բան կատարին, ՚ի սիրեսցեսն զընկեր քո իբրև զանձն քո։

2. Երկրորդ՝ յորժամ հարկ լինի ՚ի բանս յայտ առնել, թէ որդեօք նշանակեալն իրիք դոյական անուան՝ որո՞ւմ յատկանայ, կամ որո՞յ է, յարեմք ՚ի նոյն պայր անուն, և մերթ ՚ի տեղի անուան զդերանուն, կամ նաև զընդունելութի և զդերբայ, ՚ի սեռական հոլովն. և այն լինի նմա յատկացուցիչ. զ՛, Որ զբեռն ընկերին բառնայ, կատարէ զօրէնսն Քի։ Ուր դոյական անունդ ընկերին՝ լեալէ յատկացուցիչ բեռին, այսինքն ցուցանէ՝ թէ բեռն այն ընկերին է, և ոչ նաւուն կամ այլոց իրիք. նոյնպէս և բառս Քսի՝ է յատկացուցիչ բառիս զօրէնսն։ Որում շատ տուաւ Գիտութեան, շատ խնդրեսցի ՚ի նմանէ առաքինութի տեսակ։ Յարա թաւալի ծխոյ։ Զինչ էր բանին, զոր լուայ զօրութեանն։ Մնէր՝ ոսկւոյ և արծաթոյ և ջորանց պատուականաց և զգեստուց և այսպէս գոհոց և անհունածոյ... բազմացոյց։ Տիպք կերպարանաց Ճշմարիտ բանին զգեցեալ ունին զհոգւոյն իմաստ։ Զլուսոյն ճառագայթս տպաւորէր ՚ի յինքեան։ Ծառայի առեր զկերպարան։ Զգինւոյ ետուր ըմպայ։ Պաւղոս հոգւոյն զմիրս ասէ առաքեալն (այսինքն զգործ մեր), որ է սէր, խաղաղութի, և ոչ թէ զմարմնոյն (այսինքն զգործ նց), որ է հեռ, նախանձ. եւն։

3. Երրորդ՝ յորժամ հարկ լինի դոյական անուանց առնուլ զխնդիր՝ յարեմք ՚ի նց պայր անուն (կամ ՚ի տեղի անուան զդերանուն, կամ զընդու-

նելութի), երբ խնդիր նոյա ըստ պահանջելոյ նշանակութեն նոյն։ Որպէս է տեսանել ՚ի ստորև։

Անուանք ներգործականահաղորդք, այսինքն՝ որք ունին զհաղորդութի ընդ ներգործական բայից, կարեն առնուլ զխնդիր սեռի յերկուս ևս հոլովս՝ ՚ի սեռականն և ՚ի հայցականն. զօ, Զգմամբ ջրոյն. փչմամբ զհոգին։ Իսկ երբեմն ևս հանդերձ խնդրով սեռի առնուն նաև զխնդիր բնութե յայնպիսի հոլովս՝ զորպիսի պահանջեն բայքն, ընդ որոց ունին զհաղորդութի. զօ, Զգման ջրոյն ՚ի ծառն. փչման ՚ի նոսա զհոգին։

Անուանք կրաւորականահաղորդք, այսինքն՝ որք ունին զհաղորդութի ընդ կրաւորական բայից, առնուն զխնդիր սեռի միայն ՚ի բացառական հոլովի. զօ, Առաքմամբ ՚ի հօրէ։ Իսկ երբեմն նաև զխնդիր բնութե. զօ, Առաքմամբ ՚ի հօրէ յաշխարհ։

Անուանք չէզոքականահորդք, այսինքն՝ որք ունին զհաղորդութիւն ընդ չէզոքական բայից, զայնպիսի խնդիր առնուն, զորպիսի պահանջեն բայքն, որոց հաղորդ են. զօ, Գալստեամբ ՚ի աշխարհ. հրաժարումն յաշխարհէ. Յասացելոյս իմանի՝ թէ ներգործականահաղորդ և կրաւորականահաղորդ անուանք առնուն զկրկնատեսակ խնդիրս, մի սեռի, և միւս ևս բնութե. իսկ չէզոքականահաղորդքն՝ միայն զխնդիր բնութե։

Համաձայնութի գոյական անուանց ընդ ածականաց՝ է լինելն նոցա խնդիր ածականաց՝ համաձայն նշանակութե նոցին. վս զի բազումք յածականաց՝ ըստ օրինակի գոյականաց՝ ունելով զհաղորդութի ընդ բայից առնուն զխնդիր ըստ այսոցիկ երից կանոնացս։

ա. Ածականք ներգործականահաղորդք՝ առնուն

զխնդիր սեռի 'ի սեռական հոլովս. զօ, Ժառանգորդ արքայութեան: Իսկ որք 'ի իչ յանգին առնուն կամ զսեռական, և կամ զհայցական. զօ, Կործանիչ մեհենայ. փարատիչ զխաւար տգիտութեն. լցուցիչ աշխարհ ամենայն. ևն:

Այսպիսի ածականք երբեմն բաց 'ի սեռական, կամ 'ի հայցական խնդրոյ՝ առնուն նաև զայլ խընդիր՝ ըստ պահանջելոյ բային՝ ընդ որոց ունին զհաղորդութիւն. զօ, Փարատիչ 'ի հայոց զխաւար տգիտութե̄:

բ. Ածականք կրաւորականահաղորդք՝ առնուն զխնդիր սեռի 'ի հոլովս բացառական. զօ, Անքննին 'ի հարցմանէ:

գ. Ածականք չէզոքականահաղորդք հասարակօրէն զայնպիսի խնդիր առնուն, զորպիսի պահանջեն բայքն, որոց հաղորդքն. զօ, Զուարթ հրեշտակաց. գորովագութ առ որդիս. մաքուր 'ի մեղաց. զօրաւոր բանիւ. մշտատև յաղօթս. ևն: Իսկ անուանք բաղդատականք առնուն զխնդիր կամ 'ի սեռական, կամ 'ի բացառական, և կամ 'ի ներգործական հոլովս. զօ, Գերագոյն քերովբէից. վսեմագոյնն յիշխանաց. տկարագոյն յանասնոցն. և կամ նախադրութեամբքս քան և 'ի մէջ. զօ, Բարձրագոյն քան զերկինս. 'ի մէջ իմաստնոց իմաստնագունն. ևն: Սոյնպէս և անուանք թուականք և մասնականք և հարցականք, հասարակօրէն առնուն զխնդիր 'ի բացառական հոլովս. զօ, Երկու 'ի նոցանէ. ումն 'ի հարց. ով 'ի հարցմանէ:

Համաձայնութիւնք ածական անուանց ընդ գոյականաց լինին այսպէս:

ա. Ածական անուանք յորժամ յետադասին գոյականաց, համաձայնին ընդ նոսա թուով և հոլովիւ. զօ, Ծառայք հնազանդք իւրեանց տերանց. ևն:

իսկ յորժամ նախադասին՝ ոչ համաձայնին ընդ նմա ոչ թուով և ոչ հոլովիւ՝ թէ մի իցեն և թէ բազում. զօ, Ունայն բանիւք ընդդէմ զինին ճշմարիտ և ուղղամիտ վարդապետութեան։ Բայց միայն միավանկ և երկավանկ ածականք երբեմն համաձայն դնին. զօ, Սրբոյ պատարագին, Նորոյ կտակարանոյ, Բոլորով սրտիւ, յոգունց բանից. ևն։

բ. Յորժամ ՚ի մէջ նախադաս ածականի և յետադաս գոյականի անկանի բայ, կամ ընդունելութիւն, ածականն լինի ՚ի բազումս համաձայնի ընդ գոյականին թուով և հոլովիւ. զօ, Երկայնագունից կարօտիմք բանից։ Այլ երբեմն անհամաձայն ևս դնի. զօ, Գերակայ եհաս իշխանութեան։

գ. Եթէ նախադաս ածականն ունիցի զդիմորոշական տառ, երբեմն թուով և հոլովիւ համաձայնի ընդ յետադաս գոյականին. զօ, Գոհացարուք զհարկաւորէն Աստուծոյ։ Իսկ երբեմն առանց համաձայնութեան դնի. զօ, Որ ամենակալ իշխանութեամբ հաղորդս արարեր զսուրբ պատուականսն։

դ. Եթէ նախադաս գոյականք իցեն բազում, յետադաս ածականն դնի ըստ թուոյն յոգնական և ըստ հոլովին համաձայն. զօ, Ողջոյն տաջիք անպարտելեաց և յաղթելեաց զօրականաց իմոց։

ե. Եթէ ածականն իցէ նախադասեալ գոյականին, կամ գոյականն ածականին, նախդիրն դնի ՚ի վերայ նախադասին. զօ, Դարձո զիս ՚ի չար սովորութեաց իմոց ՚ի բարի առաքինութիւն։ Եւ ևս եթէ նախադաս ածականքն կամ գոյականքն իցեն բազում և ունիցին զշաղկապդ և՝ նախդիրն դնի ՚ի վերայ ամենայնի. զօ, Զանօգուտ և զվնասակար բանս ոչ տալ խօսել լեզուին, այլ լռել։

Եւ եթէ նախադաս ածականն կամ գոյականն իցէ

մէ, իսկ յետադասքն իցեն բազում, նախդիրն ոչ միայն դնի 'ի վերայ նախընթացին, այլ և 'ի վերայ երկրորդ՝ և երրորդ՝ յետադասին. զօ, 'Ի չար խորհրդոց, 'ի բանից և 'ի գործոյ փրկեա զիս։ Ուրեք ուրեք և ոչ դնի։

Ածական անուանք չորեքին համաձայնին ընդ միմեանս։ Նախ՝ իբր ածական. զօ, Անհանճար խորհրդատու։ Երկրորդ՝ իբր խնդիր. զօ, Հրաւիրատուք ապաշխարողաց. Երրորդ՝ իբր բացայայտիչ. զօ, Ուսուցանէ զմեզ այնպիսի լինել (այսինքն) հեզ և խոնարհ։ Չորրորդ՝ իբր յատկացուցիչ. զօ, Դժուարինք հեշ-ցաղականաց՝ դիւրինք նմա երևին։

## ԳԼՈՒԽ ԵՐԿՈՐԴ։

### Յաղագս համաձայնութեան դերանուանց ընդ անուանց։

Ածական դերանունս ինքն՝ բազում անգամ յարի յայլ ամենայն դերանունս՝ բաց 'ի ստացականաց, համաձայն թուով և հոլովիւ. և իբր մի վարի ընդ նոսա. զօ, Ես ինքն, դու ինքն, նա ինքն, սոյն ինքն, որ և ինքն. ևն։ Այնպէս յարին ընդ միմեանս և ցուցական դերանունք. զօ, Սոյն սա, դոյն այդ, նոյն այս. ևն։

Անձնական դերանունքս՝ իմ, քո, ինքն, իւր, (ևս և ցուցական դերանունքս՝ սա, դա, նա, ըստականապէս վարեալք), 'ի գործածելն իբր ստացական, 'ի յարելն յանուանս լինին, նախ՝ խնդիր անուանց ստացականաց և ածականաց. զօ, Վասն երշնամեայն քո գիր. ևն։ Զփառաւորիչս իւր փառաւորէ. ևն։ Եւս և ընդունելութեանց և նախադրութեանց. զօ, Խնամօղ ինչեան. վասն նորա։ Երկրորդ՝ լինին յատկացուցիչ. զօ, Սիրտ իմ, տուն քո։ Երրորդ՝ լինին բացայայտեալ 'ի ձեռն անուանց՝ համաձայն թուով և հոլովիւ. զօ,

՚ի մէնջ՝ յաշակերտաց Քսի փառաւորի պաշտօնն Այ։ Չորրորդ՝ յարին յածականս և յընդունելութիս՝ համաձայն թուով և հոլովիւ. զօ, Ա՛ծ՝ քաւեա՛ զիս զմեղաւորս։

Ցուցական դերանունքս՝ սա, դա, նա, յորժամ հոլովին սա, սորին. դա, դորին. ևն. հասարակօրէն իբր ածական վարին՝ համաձայն ը դիպականաց ՚ի հինգ հոլովս միայն, ՚ի սեռականն. որգոն, սորին խորհրդոյ. ՚ի վերջահոլով տրականն. որգոն, դմին կանոնի. ՚ի գործիականն. որգոն. նովին բանիւ. ՚ի պարառականն. որգոն. դովին տեղեաւ. ՚ի ներգոյականն. որգոն, ՚ի դմին տան։

Ցուցական դերանունքս՝ այս, այդ, այն, իբր ածական վարին. և ՚ի նախադասիլն յանուանս բազում ուրեք համաձայնին ընդ նոսա թուով և հոլովիւ. զօ, Յայնմ աշխարհին. ևն։ Եւ սակաւ ուրեք անհամաձայն ևս դնին. զօ, Այս պատկերաւս, այն խորհրդոյն. ևն։ Իսկ ՚ի յետադասիլն՝ հասարակօրէն համաձայնին ՚ի թիւ և ՚ի հոլով. զօ, Իմաստութեամբ այնորիկ. ևն։ Եւ եթէ նախադաս անուանն նախդիր ունիցի, նախդիրն միշտ և յամի կրկնի նաև ՚ի վերայ այսոցիկ դերանուանց. զօ, Դու ես ապաւէն իմ ՚ի նեղութենէ յայսմանէ։ Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ։

Ցուցական դերանունքս՝ սոյն, դոյն, նոյն, հասարակօրէն նախադաս լինելով անուանց վարին. և զի ուքա միայն նախդրիւ հոլովին, առանց համաձայնութեան յարին ՚ի նոսա. զօ, Զնոյն չարչարանաց։

Ստացական դերանունքս՝ իմ, քոյ, մեր, ձեր, իւր, իւրոյ, միշտ իբր ածական վարին. և ՚ի յարիլն յանուանս՝ միշտ համաձայնին ընդ նոսա ՚ի վերջահոլովսն, թէ ՚ի նախադասիլն և թէ ՚ի յետադասիլն. զօ, ՚ի տան հօր իմոյ օթևանք բազում են. սան

ջոկ. վայելէ սրբութիւ: իսկ 'ի նախդրաւ հոլովսն և յուղղականս 'ի յոգնակին միշտ դնին անհամաձայն. զօ, Զհանս չէր. խորհուրդ էն. ևն: Այլ բազում ուրեք փոխանակ ստացական դերանուանցս դնին սեռական հոլովք էական դերանուանց՝ իբր յատկացուցիչ. զօ, Իշխանութիւն ջո զօրացն:

Յարաբերական դերանունս որ՝ 'ի յարաբերելն զանուն, զդերանուն կամ զընդունելութիւն. ևն, համաձայնի ընդ նոսա ըստ թուոյն. զօ, Լուր որդեակ հօր ջո, որ ծնաւ զքեզ: Իսկ ըստ հոլովին դնի յայն հոլով՝ յոր դնելի էր յարաբերելին, և այս՝ կամ իբր անուն բայի, կամ իբր խնդիր, կամ իբր յատկացուցիչ .ևն. զօ, Սակաւ ողորմութեամբն, զոր արարեր, զբազմապատիկ պարտսն, զոր պարտէիր, թողցէ քեզ Տր̃: Այլ գիտելի է, զի սա երբեմն յարաբերէ զնախընթացն. զօ, Երանեալ է այր՝ որ համբերիցէ փորձանաց: Եւ երբեմն զհետևեալն. զօ, Որ ստեղծ զշունչս ամենեցուն, նա գիտէ զամ̃:

Դիմորոշական յօդքս, ս, դ, ն, յարին յանուանըս, 'ի դերանունս, 'ի բայս և յընդունելութիւնս, և երբեմն նաև 'ի մակբայս. զօ, Տանս, քոյդ, ասէն, 'ի տառապելոյս, իրաւապէսն. ևն: Այլ երբեմն դնին փոխանակ միմեանց. զօ, Զոր ասէս՝ այս է. ո՞չ յիշես՝ զոր ասացի քեզ. զոր առնեմն և արարից. 'ի մտի առ զոր խօսիմս. ևն:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ:

### Յաղագս համաձայնութեան բայից:

Բայք կրկնակի համաձայնին ընդ անուանս՝ ընդ դերանունս և ընդունելութիւնս. նախ՝ իբր ընդ

այնս, որք ասին անուն բայի. երկրորդ՝ իբր ընդ այնս, որք ասին խնդիր բայի. որպէս յայս բան. Կայէն սպան զՀաբէլ. ուր բայս սպան համաձայնի ընդ երկուց անուանցս՝ Կայէն և Հաբէլ. որոց առաջինն կոչի անուն բայի (Подлежащее), և ցուցանէ զտէր գործողութեան սպանանելոյն. այսինքն զսպանողն, և այն է անունս Կայէն:

Իսկ երկրորդն կոչի խնդիր բայի (Сказуемое), և ցուցանէ զենթակայն՝ առ որ լինի գործողութիւն, այսինքն՝ զսպանեալն, և այն է՝ հայցական հոլովս՝ զՀաբէլ:

Այնպէս և յայս բան. Տրտնջողն թերահաւատ է. բառս տրտնջողն՝ է անուն բայի, էն է բայ, թերահաւատն՝ է խնդիր: Այլ թէ որքա զխնդիր պարտին համաձայնել, դիցուք զայսպէս կանոնս:

Կանոն. ա. Եթէ բայն իցէ դիմաւոր, անուն բայի դնի յուղղական հոլովի. զո, Դաստիարակեցին Նեղութիւնքն, և էհաս հանգիստն. լուծան պարտականքն, և ժամանեաց տիեզերութիւնն: Ուր անուանքս Նեղութիւնքն, հանգիստն, պարտականքն և տիեզերութիւնն են անուն բայիցս՝ դաստիարակեցին, էհաս, լուծան, և ժամանեաց. և եդեալ են յուղղական հոլովի վասն դիմաւոր լինելոյ բայիցն: Իսկ եթէ բայն իցէ անդէմ, որպիսի են աներևոյթք՝ դերբայք և դրադէմք, անուն բային հասարակօրէն դնի 'ի սեռականն. զո, Այն է ժամանակ, յորում երանութիւք լինել, ազխարհաց մեծանալ, և ազգաւորաց տիեզերականել, և հեղոց զվերին երկիրն ժառանգել: 'ի ճարտասանութեան անդրէն վերաւորիմ: Ուր ուրեք ևս դնի յուղղական հոլովի. զո, Մեծ Նախագահ զՃշմարիտ շաւիղս, և զուսումն սորին՝ ընդ այլ մոլար Ճանապարհ գնամք: Իսկ դերանունք դնին երբեմն նաև 'ի տրական հոլովի, և այն՝

յաւէտ 'ի դերբայս և յանորոշն եղանակս. օր., Փափաքեաց անձն իմ 'ի ցանկալ ինչ յիրաւունս քո: Գիտելի՛ է ևս՝ զի անուն բայի յարակատար և դերակատար ժամանակաց և անցելոյ ստորադասականին 'ի յերրորդ դէմս եզականին իբր 'ի բազումս դնի 'ի սեռական հոլովն. օր., Ես էր ելեալ է 'ի մտի իմում բազում չարչարանօք կարծել զձեզ 'ի կենաց ձերոց: Գրեալ էր ձեր յԱստուածեղէն տառիս, զի մի՛ մոռացայց զձեզ. Թէ համարեալ իցէ մեր զանուն Աստուծոյ մերոյ. և ն: Իսկ երբեմն դնի յուղղական հոլովն ըստ երից դիմաց. օր., Հանգուցեալ է հոգի Աստուծոյ 'ի քեզ, ով եղբայր: Իսկ յայլ դէմս՝ և 'ի յոգնականս՝ անուն բայն ոչ երբէք դնի 'ի սեռականն, այլ միշտ յուղղականն. օր., Բայց ես և ընդ այս պարտեցեալ եմ. հաւատք առանց գործոց մեռեալ են. և ն:

**Կանոն. Ը.** Եթէ բայն իցէ դիմաւոր, անուն բային համաձայնի ընդ նմա թուով և դիմաւ. օր., Ճոխեալ աշխատեցայ: Ուր որպէս դիմաւոր բայս աշխատեցայ՝ ըստ թուոյն է եզական և ըստ դիմին առաջին. նոյնպէս և անուն բային՝ որ է ճոխեալ, ըստ թուոյն է եզական և ըստ դիմին առաջին 'ի ձեռն յօդին՝ ս. որպէս թէ ասէր. ես ճոխեալ աշխատեցայ:

**Կանոն. Թ.** Եթէ անուն բային իցէ բազում եզական ըստ նոյն դիմաց, բայն հասարակօրէն դնի յոգնակի. օր., Անդրէաս և Փիլիպպոս ասեն ցՅիսուս. Գնին և արբեցուցեալ ապականեն զայս իմաստունս: Բայց երբեմն դնի և ս եզակի, մանաւանդ 'ի նախադասին. օր., Քաջութեան և իմաստութեան լուսոյն և մեծին: Նախանձ և հակառակութիւն խռովեցոյց զթագաւորութիւն:

**Կանոն. Դ.** Եթէ անուն բային իցէ բազում 'ի զանազան դէմս, բայն դնի 'ի պատուականագոյն դէմն. և քանզի առաջին դէմքն է պատուականագոյն քան զերկրորդն, և երկրորդն՝ քան զերրորդն, յայսպիսիս բայն դնի յայն դէմս, որ պատուականագոյն է, այսինքն յառաջինն. որ., Ես և դու գնայաք 'ի միասին: Յորժամ դու և նա միայն էիք:

**Կանոն. Ե.** Եթէ անուն բային ըստ ձայնին իցէ եզական, իսկ ըստ նշանակութեան բազմաւորական, (որպիսի են անուանք թուականք), բայն դնի յոգնակի. որ., Լաւ են երկու քան զմի: Անկան 'ի նոցանէ [illegible] հազար: Իսկ եթէ անուն բային իցէ հաւաքական, կամ հանրական և կամ կրկնական, բայն երբեմն դնի յոգնակի. որ., Գունդք զօրացն տարջան. Լի են փառօք նորա ամենայն երկիր. մի մի 'ի հարց... խոնարհեք էին: Եւ երբեմն եզակի. որ., Ցրուեցան գունդն, ծառաեայ ժողովուրդն. ամենայն մարդ զլուսն ցանկայ. մի մի բաւական էր. և ն.: Այլ աստ պարտ է գիտել, զի երբեմն անուն բային և երբեմն բայն զօրութբ դնին. որ., Մերժեցին զկարիս մարմնական կենցաղոյս (այսինքն նոցա). դէպ ժամանակ՝ այժմու հեանց (այսինքն է). և ն.:

Յաղագս խնդրոյ սեռի ներգործականին և հասարակ բայից:

**Կանոն. Զ.** Ներգործական բայք առ հասարակ առնուն զխնդիր սեռի 'ի հայցական հոլովի. որ., Մէգ ծածկէ զճառագայթս արեգական, և զմիտս խաւարէ յոլով կերակուր:

Սոյնպէս և հասարակ բայք՝ յորժամ վարին իբրև զներգործական՝ առնուն զխնդիր սեռի 'ի հայցական

հոլովն. զօ, Քանզի յիմարն յիմարութիւն խօսեսցի, և սիրտ նորա զնանրութիւն խորհեսցի։

Գիտելի՛ է և, զի ներգործական բայք լինին երբեմն զերկուս հայցական խնդիրս առնուլ, զմին՝ իբր խնդիր սեռի, և զմիւսն՝ իբր խնդիր բնութեան, և զայն պէսպէս օրինակաւ. երբեմն փոխանակ ուղղականի, երբեմն փոխանակ տրականի. ևն. զօ, Արդ դու զո՞ առնես զքեզ. Յհ. Ը. հարցից և ես զձեզ բան մի. Յհ. ձեզ. ևն։

Դարձեալ ոմանք ՚ի ներգործական և ՚ի հասարակ բայից երբեմն փոխանակ հայցականի առնուն զխնդիր սեռի յայլ հոլովս, որպիսի են բայքս՝ լսեմ, հարցանեմ, վկայեմ, ասեմ, երանեմ, մեղադրեմ. ևն. զօ, Լո՛ւր տէր աղօթից իմոց։ Հարցէ՛ք զողջունէ Երուսաղէմի։ Ա. հայէր ծնողէանն. ևն։

Դարձեալ կան ևս բազում բայք չէզոքականք, ևս և կրաւորականք, որք ուրեք ուրեք իբր ներգործականապէս վարելով՝ խնդիր սեռի առնուն ՚ի հայցական հոլովն. որպիսի են բայքս՝ լռեմ, անցանեմ, առաջնորդեմ, սպասաւորեմ, խնայեմ, աղաղակեմ, աղօթեմ, մաղթեմ, գամ. ևն. զօ, Տղայք դղէն զօրհնաբանութիւն։ Անձնայն լինի, որ անցանէ զչափն՝ շուայտութեան է։ ՚Ի բամբասանաց խնայեցէ՛ք զլեզուի. ևն։

## Յաղագս խնդրոյ բնութեան ներգործական բայից։

Բայք ներգործականք բաց ՚ի սեռի խնդրոյ առնուն նաև զխնդիր բնութեան ՚ի զանազան հոլովս. ոմանք յուղղականն, ոմանք ՚ի տրականն, ոմանք ՚ի բացառականն. ևն. զօ, Բանք կենանս աշխարհիս

առնուանէ։ Տո՛ւր երամայնոյն պատճառս. եւն։ Կարէ-ցէ՛ս դու ես զաջը. եւն։ Հայցէր 'ի հէնայք զմահ. եւն։

Կանոն. Ը. Կրաւորական բայք առնուն զխնդիր սեռի 'ի բացառական հոլովի. զօ, 'Ի փեսայէ ուղղին գնայք առն։ Ըստ այսմ և հասարակ բայք՝ յոր-ժամ կրաւորականաբար վարին, առնուն զխնդիր սեռի 'ի բացառական հոլովն։

Կանոն. Թ. Չէզոքական բայք առնուն զխնդիր բնութեան ըստ պահանջելոյ նշանակութեան իւրեանց 'ի պէսպէս հոլովս. յուղղական, 'ի տրական, 'ի բա-ցառական, 'ի պատմական, 'ի գործիական, 'ի պարա-ռական և 'ի ներգոյական. զօ, Վասակ՝ որ օտարացեալն էր 'ի սիրոյն Քրիստոսի, հնազանդեցաւ ուղղափառաց անօրէն իշ-խանին, և համբերեաց հնարիւք ընդ բարուցս, և որք հաւանեցան նմա՝ իջին ընդ նմա 'ի դժոխս։

Կանոն. Ժ. Դիմաւորական բայք առնուն զխնդիր 'ի վերջահոլով տրականն. զօ, Վայ է՛ւ է ծառայիցն Աստուծոյ միշտ օրհնել զնա. լուացաւ նոյա 'ի քեր-րոն. եւն։

Կանոն. ԺԱ. Լծական բայք հասարակօրէն առ-նուն զխնդիր յուղղական հոլովի. զօ, Պատարագն հաշտութեան նուէր է։ Այլ գիտելի է՝ զի այսպիսի ուղղական խնդիրք էականացդ դնին ուրեք ուրեք եւ և 'ի նախդրաւ տրականն. զօ, Եղև տանն իս-րայելի այն 'ի յանձանս անխրատութեան։ Եւ եղև նոյա 'ի կերակուր. այսինքն, տանջանք, կերակուր. եւն։

Կանոն. ԺԲ. Աներևոյթ բայք որովհետև իբր անուն հոլովին, 'ի գործածին երբեմն իբրև անուն գոյական. և լինին անուն բայի, խնդիր բայի, խնդիր

անուան, խնդիր ընդունելութեան. ևն: Իսկ յորժամ իբր բայ վարին, լինին բազում անգամ արգելիչ խնդրոյ բայից. զօ, Որ կամիցի զանձն իւր կեցուցանել, կորուսցէ զնա: Երբեմն ևս լինին սոքա որական խնդիր բայի՝ իբր դերբայ, զօրութիւն ունելով զնախդիրս 'ի կամ առ'ի. զօ, Ժողովէին ժողովուրդք բազումք՝ լսել և բժշկել 'ի հիւանդութեանց իւրեանց, այ՝ առ 'ի լսել և 'ի բժշկել:

# ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ:

## Յաղագս համաձայնութեան ընդունելութեանց 'ի հատուածի:

Ընդունելութիւնք յանգեալք 'ի օղ՝ միշտ իբր ածական անուն վարին, և ըստ կանոնի համաձայնութե ածականաց յարին 'ի գոյականս. զօ, Սակաւ օգտեն խրատք առն ճարհացողի: Սոքա 'ի վարելն ներգործականապէս առնուն զխնդիր սեռի 'ի հոլովն սեռական, կամ հայցական. զօ, Փախող արքայութեան. ընդունօղք զճառն կենաց. իսկ զխնդիրն բնութե ըստ պահանջելոյ բայիցն, յորոց բղխեն. զօ, 'Ի ճաշակողէն հաճոյից զիմաստութի: Յանվախճան փառացն հաղորդութեան զմեզ հրաւիրող: Նորոգող տիեզերաց 'ի նախահօրն յանցանաց. ևն:

Նոյնպէս և 'ի վարելն չէզոքականապէս. զօ, Համբերօղ վշտաց: Հայեցօղ յօյժ պղնձի: 'Ի մեղաց զգուշացօղ. ևն:

Ընդունելութիւնք յանգեալք 'ի եալ եթէ ներգործականապէս առցեն, իբր դերբայ վարին. զօ, Վանեալ զթշնամին խորտակեցիք: Իսկ եթէ կրաւորաբար կամ չէզոքականապէս առցեն, անխտիր վարին երբեմն իբր դերբայ. զօ, Քաջալե-

փեալ ՚ի բանից նորա յաղթեցին Թշնամեաց։ Իջեալ մարմնով ՚ի գերեզման՝ զկապեալ հոգիսն վերածեաց. ևն։ Եւ երբեմն իբր ածական անուն ըստ կանոնի համաձայնութն ածականաց. օր, Որ փախէալ պրամէք երեկոյին՝ երևեցար մետասանին։ Մի բարկանար էջմօք մեղուցելոյ։

Արդ՝ ընդունելութիւնքս այսոքիկ առ հասարակ զայնպիսի խնդիրս առնուն, զորպիսի պահանջեն բայք իւրեանց. օր, Դաւիթ զյուսացեալն ՚ի Տէր լերին նմանեցուցանէ։ Օգնական է պարչելոյ առ նա դիմօք ժպտեալ. ևն։

Ընդունելութիւնք յանգեալք ՚ի ել՝ վարին իբր ածական, և ըստ համաձայնութն ածականաց յարին ՚ի գոյականս. օր, Խոնարհեցար ՚ի չարչարանս չարչարելի բնութն մարդկան։ Եւ սոքա հասարակօրէն առնուն զխնդիր ՚ի տրական հոլովի. օր, Գովելիք աշխարհի, և ճաշակելիք վերնոց պետութենց։ Եւ ուրեք ուրեք ըստ պահանջելոյ բային, և կամ ըստ դիպելոյ առնուն զխնդիր ՚ի հոլովս բացառական, մանաւանդ յորժամ բաղադրեալ իցեն մասնկամբս ան. օր, Անհասանելին ՚ի համայնից։ Յամենեցուն ընդունելի. ևն։

Իսկ ընդունելութիւնք՝ յանգեալք ՚ի ող, միշտ իբր բայ վարին, թէ ՚ի ներգործականս, թէ ՚ի կրաւորականս և թէ ՚ի չէզոքս, և ըստ բնութեան իւրեանց առնուն զխնդիր ՚ի պէսպէս հոլովս. օր, Տալոց է ամենեցուն։ Գնալոց եմք ՚ի դատաստան. ևն։

# ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ։

## Յաղագս համաձայնութեան բանի և պէսպիսութեան շարադրութեանց։

՚Ի համաձայնութենէ մասանց բանի կազմի բան. երբեմն ՚ի բազում բառից, և երբեմն ՚ի սակաւուց, ըստ որում՝ քանիութիւն բառից կախի կէս մի՝ ընդպատակէ խօսից, և կէս մի՝ զկամաց խօսողին. բայց ՚ի միում նախադասութեան պարտի լինել մի միայն դիմաւոր բայ, նոյնպէս և մի տէր բայի. և զայսպիսի նախադասութիւն կազմէ չէզոքական բայն ընդ գործողի իւրում. Որ, Աստուած մեծ է, օրն տարաժամ. ևն։ Բայց կատարեալ բանն պարտի կազմիլ գոնէ յերից բառից, այսինքն՝ ՚ի բայէ, յանուանէ բային և ՚ի խնդրոյ նորին. Որ, Հայր ծնանի զարմանակ։ Ուր Հայրն է անուն բայի, ծնանին՝ բայ, զարմանակն՝ խնդիր. յորս այլ մասունք բանի են շատ կամ սակաւ յարին ըստ զանազան պաշտօնի իբր յատկացուցիչ, իբր բացայայտիչ; իբր ածական. ևն։ Որոց երեք համառօտ օրինակք՝ հանդերձ լուծմամբք նոցին կարգին առ ՚ի մեզ ՚ի շնորհս և ՚ի ՚ի դիւրութիւն դեռավարժից։

1. Օրինակ. ա. Գանձ ցանկալի հանգիցէ ՚ի բերան իմաստնոյ, արք տգէտք կլցեն զնա։ Լուծումն. Գանձ՝ է անուն բայի, ցանկալի՝ է ածական նր, հանգիցէ՝ է բայ, ՚ի բերան՝ է ներգոյական խնդիր բային, իմաստնոյ՝ է յատկացուցիչ բերանոյն. Արք՝ է անուն բայի, տգէտք՝ է ածական նորա, կլցեն, է բայ, զնա՝ է խնդիր սեռի բային. ևն։

2. Օրինակ. բ. Որդեակ իմ՝ մի նախանձիր ընդ չարս, և մի ցանկանայցես գալ ընդ նոսա։ ՚Ի սմա՝

024



որդեակն է կոչական անուն, իմ է դերանուն, որ թէ առցի իբրև ստացական՝ լինի ածական որդեկին. ապա թէ առցի իբր էական՝ յայնժամ լինի յատկացուցիչ նորա։ Մի՛ նախանձիր է բայ չէզոքական, որոյ տէրն զօրութեամբ դնի դու, ընդ չարս՝ է խնդիր նորա, և է շաղկապ բաղհիւսական, մի՛ է մակբայ բացասական, ցանկանայցես է բայ չէզոք, որոյ տէրն է նոյն դերանունն, գալ է արգելիչ խնդրոյ նորա, ցանկանալոյն, ընդ նոսա է խնդիր գալոյն։

3. Օրինակ. Գ. Հրեշտակք երկնից փափաքէին հանդիսի կատարման սոցա, որք ՚ի մահուն իւրեանց կենդանացան, ելին ՚ի կամարն երկնից, խառնեցան ՚ի գունդ զուարթնոցն։ ՚Ի սմա՝ Հրեշտակք է անուն բայի, երկնից՝ է յատկացուցիչ հրեշտակաց, փափաքէին է բայ չէզոքական, հանդիսի է բնութեան խնդիր նորա ՚ի տրական հոլովի, կատարման՝ է յատկացուցիչ հանդիսի, սոցա է յատկացուցիչ կատարման, որք յարաբերական դերանուանս սոցա, և տէր բայիցս կենդանացան, ելին և խառնեցան, ՚ի մահուն է խնդիր բայիս կենդանացան, իւրեանց է յատկացուցիչ մահուն, ելին է չէզոքական բայ, ՚ի կամարն է խնդիր նորա, երկնից է յատկացուցիչ կամարին. խառնեցան՝ է իբր չէզոքական բայ, ՚ի գունդ՝ է խնդիր նորա, զուարթնոցն է յատկացուցիչ գնդին։

ՎԵՐՋ։

им. А. Мясникяна

1) [illegible]
2) পৃঃ 9
3) " 10 – 11 ✓
4) " 12 - 13 ✓
5 " 14 – 15 —